




Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ • ՄԱՅԻՍ • ՀՈՒՆԻՍ 2018



Հավիրենական Ասրվածը, երկրի սահմանները
հասարակորդ Ասրվածը ո՛չ քաղց է զգում, ո՛չ էլ հոգ-
նում, նրա իմաստությունն անքննելի է:

ԵՍԱՅԻ 40. 28

Հարգելի՛ բարեկամ

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Շապիկի առաջին էջին՝ Նոր Վարագավանք

Նոր Վարագավանք վանական համալիրը գտնվում է Տավուշի մարզի Վարագավան գյուղից 2 կմ հարավ-արևմուտք:

Վանքը հիմնել է Նոր Բերդի Դավիթ Կյուրիկայն իշխանը՝ 1193-1198 թվականներին: Դավիթ իշխանը սկզբում կառուցել է՝ զույգ անհավասար խորաններով միայնակ եկեղեցին: Հետագայում եկեղեցուն հյուսիսից համանման միանավ թաղածածկ մատուռ են կցել: Վանքի հյուսիսային մասում Դավիթ իշխանի որդի Վասակ Բ-ն 1224-1237 թթ. կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցին: ճարտարապետն է Անեցի վարպետ Գագանը: Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Հարավային մուտքի զարդարանքը ինքնատիպ է ու եզակի հայկական միջնադարյան արվեստում: Նոր Վարագավանքի երկու գավիթներից մեզ է հասել միայն մեկը: Մյուսը վերածվել է փլատակների: Վանքը ունեցել է ջրամատակարարում: Վանքի տարածքում կան խաչքարեր: Սկզբում վանքը կոչվել է Անապատ: 1237-ին վերանվանվել է Նոր Վարագավանք: Վասպուրականի Վարագավանքի վանահայր Ղուկասը, Ջալալ էդ Դինի 1231-ի ասպատակությունից հալածված, վերցրել է վանքի հռչակավոր Վարագա ս. խաչը և վեց տարի դեգերելուց հետո, 1237-ին, հաստատվել Կյուրիկյանների այս հոգևոր կենտրոնում: (Վիքիպեդիա)

Լուսանկարիչ՝ Լուիզա ճանպագեան, (ԱՄՆ)



Ձիաց մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ 2017

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուլթյուններ

Ի՛նչ ՏԱՐԻ

Բ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի
խորհրդածուլթյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլվոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արհամարհված այս բոլոր բաների համար

Մուսաննա Սիբերը համբավի հասավ որպես տաղանդավոր երգչուհի: Սակայն նա նաև հավասարապես ծանոթ էր շատերին իր ամուսնական խնդիրներով: Այդ պատճառով, երբ 1742-ի ապրիլին առաջին անգամ Հենդելի «Մեսիա»-ն ներկայացվեց Դուբլինում, հանդիսատեսներից շատերը չընդունեցին նրան որպես մենակատար:

Այդ անդրանիկ ներկայացմանը Սիբերը երգեց գլուխգործոց «Մեսիա»-ն. «Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ, որ ցավերին համբերել գիտե. իր երեսը դարձնելով՝ արհամարհվեց ու բանի տեղ չգրվեց» (Ես. 53.3): Այդ սքանչելի երգի բառերը այնքան ազդեցին վերապատվելի Պատրիկ Դելանիի վրա, որ նա ոտքի կանգնելով ասաց. «Ո՛վ կին, դրա համար թող քո բոլոր մեղքերը ներվեն»: Սուսաննայի ու Հենդելի «Մեսիա»-ի նյութի կապը բացահայտ է: «Ցավերի մարդը» - Հիսուսը՝ Մեսիան - մեր մեղքերի համար «նախատվեց ու ծեծվեց»: Եսայի մարգարեն ասաց. «Նա շատերի մեղքերը կրեց և նրանց անօրենսությունների համար դատապարտվեց» (Հմ. 12):

Մեսիայի ու մեր կապը նույնպես պակաս ակներև չէ: Անկախ այն բանից, թե մենք դատապարտող հանդիսատեսի նման ենք մտածում թե ոչ, մենք բոլորս էլ կարիք ունենք զղջումի ու Աստծո ներումի: Տեր Հիսուսը Հայր Աստծո հետ մեր խզված կապը վերահաստատեց՝ Իր կյանքով, մահով ու հարությունով:

Սրա համար ու Տեր Հիսուսի բոլոր արածների համար թող մեր մեղքերը ներվեն:

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, բոլորս Քո ներման կարիքն ունենք: Շնորհակալ եմք Որդուդ համար, որ մեր մեղքերի համար անարգվեց ու մեզ մոտ եկավ 2000 տարի առաջ, որպեսզի մենք Քեզ լավ ճանաչենք: Ամեն:

Ալեյուիա, որովհետև Ամենակալ Տեր Աստվածը
թագավորեց: Հայտ. 19.6

Կարդա՛
Եսայի 53. 3-12

Նա շատերի մեղքերը կրեց և նրանց անօրենսությունների համար դատապարտվեց: Ես. 53.12

ԱՆԱՆՈՒՆ ազնվություն

Երբ քոլեջն ավարտեցի, քսանհինգ դուրս էր հարկավոր շաբաթական ծախսերի համար: Մի օր, երբ անհրաժեշտ իրերս առնելով մոտեցա վճարելու, կասկածեցի, թե կողովի մեջ դրածոներին արժեքը մի քիչ ավելի պիտի լիներ: Հետևաբար գանձապահին ասացի. «Խնդրում եմ կանգ առ, երբ հասնես քսանհինգ դուրս գումարին»: Ու ես կարողացա գնել ամեն ինչ, որ դրել էի՝ բացի պղպեղի մի տոպրակից:

Մինչ պատրաստվում էի ճանապարհ դուրս գալ, մի մարդ մեքենաս կանգնեցրեց ու ասաց. «Տիկի՛ն, ահա քո առած պղպեղը», ու մի տոպրակ տվեց ինձ: Դեռ շնորհակալություն չհայտնած՝ անհետացավ:

Ամեն անգամ, երբ հիշում եմ այս ազնիվ արարքը, սիրտս ջերմանում է, ու հիշում եմ Տեր Հիսուսի խոսքը՝ արձանագրված Մատթեոսի Ավետարանի վեցերորդ գլխում: Քննադատելով կարոտյալներին ցուցամոլությունը սովորներին (Հմ. 2)՝ Տեր Հիսուսը իր աշակերտներին այլ միջոց սովորեցրեց: Փոխանակ տալու իրենց անձի ու առատաձեռնություն մասին բարձրաձայնելու համար՝ Նա թախանձում է նրանց, որ տալու այդ արարքը լինի գաղտնաբար, այնպես, կարծես ձախ ձեռքը տեղյակ չլինի աջ ձեռքի արածից (Հմ. 3):

Ինչպես որ անանուն անձի արածն ինձ հիշեցրեց, մեկին բան տալը բնավ մենք չպիտի հիշենք: Մենք տալիս ենք, որովհետև մեր բարի Աստվածը առատություն է մեզ տվել (Բ Կորնթ. 9.6-11): Մինչ մենք լռությունում ու առատաձեռնությունում տալիս ենք, ցուլացնում ենք Նրան, որ մեր շնորհակալությունն է ընդունում, որովհետև արժանի է (Հմ. 11):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո առատաձեռնության ու սիրո համար: Օգնիր մեզ, որ ազատորեն ու լռությամբ Քո պարգևները բաժանենք մեր շուրջ եղողների հետ: Ամեն:

Լռությամբ ու առատաձեռնությամբ տալը Աստծո առատաձեռնությունն է ցուլացնում:

Կարդա՛ր Մատթեոս 6. 1-14

Բայց դու երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե քո աջն ինչ է անում: Մատթ. 6.3

Քաղցր ու դառը

Ոմանք դառը թուրմ են սիրում, մյուսները՝ քաղցր: Կենտրոնական Ամերիկայում ապրող հին մայա ժողովուրդը կծու պղպեղով համեմված թուրմով պատրաստված ըմպելիքը մեծ հաճույքով էր խմում: Նրանք սիրում էին «այս դառը ջուրը», ինչպես իրենք էին կոչում այն: Տարիներ անց Իսպանիայում էլ տարածվեց այս ըմպելիքը, սակայն իսպանացիները նախընտրեցին քաղցր շոկոլադով պատրաստված ըմպելիքը, ուստի շաքար ու մեղր ավելացրին՝ դառնությունը մեղմելու համար:

Շոկոլադեի նման մեր օրերն էլ կարող ենք դառն ու քաղցր լինել: 17-րդ դարի Ֆրանսացի մի վանական՝ Նյեպյուր Լորենսը, գրում է. «Եթե գիտենայինք, թե Աստված մեզ որքա՛ն սիրեց, միշտ պատրաստ պիտի լինեինք հավասարապես Նրա ձեռքերից ընդունելու քաղցրն ու դառը»: Ինչպե՞ս կարելի է քաղցրն ու դառը հավասարապես ընդունել: Սա դժվար բան է: Ինչի մասին է խոսում Նյեպյուր Լորենսը: Սա հասկանալու և ընդունելու գաղափարը Աստծո նկարագրի մեջ է: Սաղմոսերգուն ասաց Աստծուն. «Քաղցր ես Դու, Տե՛ր, և Քո քաղցրությամբ Քո արդարությունը սովորեցրո՛ւ ինձ» (Սաղմ. 118.68):

Մայաներն էլ արժեւորեցին դառը թուրմը նրա բուժիչ հատկությունների համար: Դառը օրերը նույնպես իրենց արժեքը ունեն: Նրանք օգնում են մեր ունեցած տկարությունները ճանաչելու ու ավելի Աստծուն վստահելու: Սաղմոսերգուն գրում է. «Ես գոհուցեցի Աստծուցեմ՝ քեզ, Տե՛ր, ուղիղ սրտով, սովորելով Քո արդար դատաստանները» (Հմ. 7): Եկեք այսօր ողջագուրենք մեր կյանքը՝ իր տարբեր համերով, սակայն երաշխավորված Աստծո բարությամբ: Ասե՛նք. «Քաղցրությամբ վարվեցիր ծառայիդ հետ, Տե՛ր, Քո խոսքի համաձայն» (Հմ. 65):

Աղոթք - Հայր, օգնիր ինձ՝ տեսնելու Քո բարությունը՝ նույնիսկ նեղության ժամերին: Ամեն:

Աստված բարի է:

Կարդա՛
Սաղմոս 118. 65-72

Քաղցր ես դու, Տե՛ր, և Քո քաղցրությամբ Քո արդարությունը սովորեցրո՛ւ ինձ:
Սաղմ. 118.68

Տան մուտքի օգնություն

Մի տաք օր ութ տարեկան Քարմին Մըք Դանիելը ցանկացավ, որ իրենց նամակաբերը զովանա ու իր համար անհրաժեշտ հեղուկը ունենա: Ուստի իրենց տան դռան մոտ ջրի ու զովացուցիչի շէնքով լեցուն սառնարան դրեց: Ապահովության համար տեղադրված նկարահանող սարքը արձանագրեց փոստատարի արտահայտությունը, երբ տեսավ այնտեղ դրված ջուրն ու զովացուցիչը. «Օհ, ջուր և զովացուցիչ: Շնորհակալ եմ, Աստված: Շնորհակալ եմ»: Քարմինի մայրն ասում է. «Նա մտածում է, թե իր պարտականությունն է փոստատարի համար ջուր և զովացուցիչ դնել այնտեղ, նույնիսկ երբ տանը ոչ ոք չկա»:

Կարդա՛
Փիլիպ. 4.10-20

Գիտեմ պակասություն քաշելը և առատության մեջ լինելն էլ: Փիլիպ. 4.12

Այս պատմությունը մեր սրտերը ջերմացնում է, սակայն միաժամանակ հիշեցնում է մեզ, թե կա Մեկը, որ «մեր կարիքները հոգում է», ինչպես Պողոս առաքյալն է ասում: Թեև Պողոսը բանտի մեջ հյուսվում էր ու վստահ չէր իր ապագայի վրա, իր ուրախությունը հայտնեց Փիլիպպեի մեջ եղող հավատացյալների համար, որովհետև Աստված իր կարիքները հոգացել էր նրանց արած նյութական օժանդակություններով: Փիլիպպեի եկեղեցու անդամները հարուստ չէին, սակայն իրենց աղքատության մեջ իսկ առատաձեռն եղան Պողոսին և ուրիշներին տալով, որպեսզի Աստված էլ իրենց կարիքները հոգա «իր հարստության չափով՝ փառքով՝ Քրիստոս Հիսուսի մեջ» (Փիլ. 4. 19):

Շատ հաճախ Աստված ուղղահայաց օգնություն է հասցնում հորիզոնական միջոցներով: Այլ խոսքով՝ Նա մեզ ուրիշների օգնությամբ ուղարկում է այն, ինչի կարիքն ունենք: Երբ մենք իրեն վստահենք մեր կարիքների համար, պիտի սովորենք, ինչպես Պողոսն ասաց, ճշմարիտ գոհունակության գաղտնիքը (Հմ. 12-13):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր մեզ, որ կարողանանք տեսնել մեր շուրջիցների կարիքները ու մեր լավագույնը անենք նրանց համար՝ Քո շնորհով: Ամեն:

Աստծո նախատեսությունները մեր ունեցած բոլոր կարիքներից շատ ավելի մեծ են:

Ի՞նչ ենք ուզում լսել

Որպես մարդ արարածներ՝ միշտ տրամադրված ենք մեր կարծիքները հաստատող տեղեկություններ ունենալ: Պրպտումները ցույց են տալիս, թե մենք իրականում ավելի ենք փորձում մեր դիրքերը հավաստող տեղեկություն հավաքել: Երբ մենք մեր մտածումների մեջ խորապես համոզված ենք, փորձում ենք զգուշանալ նրանց դեմ եղած մարտահրավերներից:

Այդպես էր պարագան Իսրայելի Թագավոր Աքաաբի համար: Երբ նա ու Հուդայի թագավոր Հովսափատը խորհրդակցեցին Ռամոթ-աղաազի դեմ պատերազմ մղելու, Աքաաբը չորս հարյուր մարգարե հավաքեց, որ օգնեն իրենց որոշման մեջ: Այդ մարգարեներին հրամայեց, որպեսզի ասեն այն, ինչ ինքն էր ուզում լսել: Նրանք բոլորն էլ ասացին. «Նա՛, և Աստված քեզ՝ արքայիդ հաջողություն կպարգևի» (Բ Մնաց. 18.5):

Կարդա՛ր Բ Մնաց. 18. 5-27
 ...ես ատում եմ նրան, որովհետև նա ինձ համար լավ բան չի մարգարեանում, և նրա բոլոր օրերը չարությամբ են լցված: Բ Մնաց. 18.7

Հովսափատը հարցրեց, թե ուրիշ մարգարե կա՞, որ Աստծո կողմից է ընտրված, որի միջոցով կարելի լինի Տիրոջ խորհուրդը հարցնել: Աքաաբը դժկամելով պատասխանեց ու ասաց. «Դա Հեմլայի որդի Միքիասն է... Նա ինձ համար լավ բան չի մարգարեանում, և նրա բոլոր օրերը չարություններ են լցված» (Հմ. 7): Միքիասն հայտնել էր, թե նրանք չպիտի կարողանային հաղթել ու «լեռների վրա պիտի ցրվեին» (Հմ. 16): Նրանց պատմությունը կարգալով տեսնում եմ, թե ինչպես եմ ես էլ անտեսում իմաստուն խորհուրդները, երբ նրանք իմ ցանկացածները չեն: Աքաաբի պարագայում իր չորս հարյուր «այո ասող» մարգարեներին լսելը աղետալի եղավ (Հմ. 34): Թող մենք էլ ցանկություն ունենանք լսելու ճշմարտության ձայները Աստծո խոսքի՝ Աստվածաշնչի մեջ, նույնիսկ երբ նրանք համապատասխան չեն մեր կարծիքներին:

Աղոթք - Տեր, օգնիր, որ ուշադիր լինեմ ու Քո խորհուրդը փնտրեմ, նույնիսկ եթե իմ փափագներից կամ ժողովրդի խորհուրդներից հակառակ է: Ամեն:

Աստծո խորհուրդը վստահելի ու իմաստուն է:

Բաժանված հանգստություն

«Աստված քեզ ինձ ուղարկեց այս երեկո»։ Մրանք այն բառերն էին, որ մի կին ասաց ինձ, երբ Ջիկազոյի օդակայանում իջնում էինք ինքնաթիռից։ Մեր ճանապարհորդության ընթացքում նա նստած էր միջանցքի մյուս կողմում, ու մեր ունեցած խոսակցությունից հասկացա, որ մի քանի թռիչք փոխելով՝ տուն էր վերադառնում նույն օրը։ Երբ հարցրի, թե ինչու էր այդ օրը մեկնել ու վերադառնում, նա տխուր ասաց.

«Աղջկաս տեղավորեցի թմրամոլների հիվանդանոցում այսօր»։ Մեր այդ կարճ ճանապարհորդության ընթացքում ես էլ պատմեցի իրեն նախկինում որդուս ունեցած նման խնդրի մասին, և թե ինչպես Տեր Հիսուսը նրան ազատեց այդ մոլուցքից։ Մինչ լսում էր, մի ժպիտ խաղաց նրա արցունքոտ դեմքի վրա։ Ինքնաթիռի վայրէջք կատարելուց հետո ու իրարից բաժանվելուց առաջ միասին աղոթեցինք՝ խնդրելով, որ Աստված իր աղջկա շղթաները փշրի։ Հետո երեկոյան մտածեցի Պողոսի խոսքերի մասին՝ արձանագրված Բ Կորնթ. 1.3-4 համարներում. «Օրհնյա՛լ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը՝ գթությունների Հայրը և ամեն մխիթարության Աստված, որ մեր բոլոր նեղությունների ժամանակ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությունը, որով մենք մխիթարվում ենք Աստծուց»։

Մեր շուրջ կան մարդիկ, որոնք քաջալերվելու կարիք ունեն՝ այն մխիթարությունով, որ միայն Աստված կարող է տալ։ Նա ուզում է, որ մենք մոտենանք նրանց փափկասիրտ ու կարեկից հոգով՝ բաժանելու այն սերը, որ Նա է մեզ տվել։ Թող Աստված այսօր մեզ առաջնորդի նրանց մոտ, ովքեր կարիք ունեն մխիթարության։

Աղոթք - Տե՛ր, խաչի վրա Քո ցույց տված սիրո համար Քեզ պաշտում եմ։ Օգնիր, որ Քո սիրով ու ազնվությունով կարողանամ ուրիշներին մխիթարել այսօր։ Ամեն։

Աստծո կարեկցությունը մեր խորագույն կարիքներին է հասնում։

Կարդա՛ր Բ Կորնթ. 1. 1-10

Խաղաղությունը ձեզ ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում։
Յովհ. 20.12

Արդար արարք

Երբ սինգապուրցի վագորդ Էշլի Լիուն Ասիայի Հարավարեւելյան մարզական խաղերի երկար վազքի մրցման ընթացքում իրեն գտավ վագորդների մեծ խմբի առջև, հասկացավ, որ սխալ բան էր պատահել: Նա շուտով անդրադարձավ, որ առջևում վագորդները, սխալ շրջադարձ կատարելուց հետո վերադառնալով, խմբի ետևում էին մնացել: Էշլին կարող էր նրանց արած սխալից օգտվել, սակայն ուժեղ մի մարզական հոգի նրան հիշեցրեց, թե դա իրական հաղթանակ չպիտի լիներ: Նա ցանկանում էր մրցումը հաղթել մյուսներից ավելի արագ վագորդ լինելու համար ու ոչ թե այն բանի, որ նրանք սխալ էին արել: Իր ունեցած այս համոզումով նա որոշեց դանդաղել ու առիթ տվեց, որ նրանք առաջ անցնեն:

Կարդա՛ր
Տիտուս 2. 7-8, 11 -14

Քո անձն ամեն կողմից բարի գործերի օրինակ դարձնելով... Տիտ. 2.7

Վերջում Էշլին կորցրեց հաղթանակը, սակայն շահեց իր քաղաքացիների սիրտը, ինչպես նաև միջազգային մրցանակ՝ իր արդար վարմունքի համար: Իր այս արարքը լավ վկայություն եղավ իր Քրիստոնեական հավատքի համար ու վստահաբար մղեց շատերին հարց տալու. «Ի՞նչը մղեց նրան այս բանն անել»:

Էշլիի արարքը մարտահրավեր ու խթան է ինձ համար՝ իմ հավատքը ցույց տալու գործնականորեն: Խոհականության, ազնվության կամ ներումի նման փոքր արարքները կարող են Աստծուն փառավորել: Ինչպես Պողոսն ասաց, պետք է ցույց տալ «անկեղծություն, պարկեշտություն, ողջամիտ, անմեղադրելի խոսք» (Տիտ. 2.7-8): Մեր զրական արարքները ուրիշների հանդեպ կարող են ցույց տալ, թե կարող ենք տարբեր կերպով ապրել Սուրբ Հոգու՝ մեր մեջ արած գործի պատճառով: Նա մեզ պիտի տա չնորհը՝ մերժելու ամեն ինչ, որ աստվածահաճո չէ ու սխալ դրդապատճառով է, ու ապրելու այնպիսի կյանքով, որ կարողանանք ցույց տալ մեր բարի ու հավատարիմ Աստծուն:

Աղոթք - Երկնավոր Հայր, թող որ մեր վարվելակերպը վկայություն լինի մեր մասին: Խնդրում ենք Հոգուդ առաջնորդությունը, երբ խոսում ենք մեր ունեցած ներքին հույսի մասին: Ամեն:

Ապրիլ այնպես, որ ուրիշներն ուզեն Հիսուսին ճանաչել:

Տառապանքի մեջ գորություն

Երբ տասնութ տարեկան Սեմմին ընդունեց Հիսուսին որպես իր Փրկչի, նրա ընտանիքը մերժեց ընդունել այս քայլը, որովհետև նրանք տարբեր կրոնի էին հետևում: Սակայն Քրիստոնեական հավաքականությունը սիրով ընդունեց նրան՝ քաջալերելով ու տրամադրելով իր ուսման համար հարկ եղած նյութական օժանդակությունը: Հետո, երբ իր հավատքի մասին հողված գրվեց թերթի մեջ, նրա դեմ եղած հալածանքը սաստկացավ:

Սակայն Սեմմին շարունակեց հանդիպել իր ընտանիքի անդամներին ու այցելեց հարմար պահերին: Նա խոսեց իր հոր հետ, հակառակ նրան, որ իր քույրերն ու եղբայրները խիստ արգելեցին նրան ընտանեկան հավաքություններին մասնակից լինել: Երբ հայրը անհանգստացավ, Սեմմին, անտեսելով իր ընտանիքի հակադրությունը, այցելեց իր հորը ու աղոթեց նրա համար, որ բժշկվի: Երբ Աստված բուժեց հորը, ընտանիքի անդամները սկսեցին ջերմազին սեր ցույց տալ նրան: Ժամանակի ընթացքում իր սիրո վկայությունը փափկեցրեց նրանց դիրքը իր հանդեպ, և ընտանիքի անդամներից ոմանք տրամադրվեցին լսելու Հիսուսի մասին:

Հիսուսին հետևելու մեր որոշումը կարող է մեզ համար դժվարություններ հարուցել: Պետրոսը գրեց. «Սա շնորհ է, եթե մեկն Աստծո հանդեպ ունեցած խղճմտանքով համբերի անիրավ տեղը հասած նեղություններին» (Ա Պետ. 2.19): Երբ մենք ցավ ու տառապանք ունենանք մեր հավատքի համար, դա կլինի, «քանի որ Քրիստոսն էլ մեզ համար չարչարվեց և մեզ օրինակ թողեց, որ իր հեռքերով ընթանանք» (Հմ. 21):

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնիր, որ կարողանամ Քո օրինակին հետևել՝ իմ վարվելակերպով ու Քեզ համարիմ կրած տառապանքներով: Ամեն:

Երբ Հիսուսի համար տառապում ենք, Նա մեզ հետ է ընթանում:

Կարդա՛

Բ Պետրոս 2. 11-23

...քանի որ Քրիստոսն էլ մեզ համար չարչարվեց և մեզ օրինակ թողեց, որ իր հետքերով ընթանանք:
Ա Պետ. 2.21

Հիշատակով ապրել

Մի քանի տարի առաջ երեխաներիս հետ մի շաբաթ անցկացրինք Այդահոյի Սալմոնում՝ հայտնի «Վերադարձ չունեցող» գետի եզրին գտնվող լքված ագարակում: Մի օր ագարակում տեսա մի հին գերեզման՝ փայտից շինված ցուցատախտակով: Նրա վրա եղած արձանագրությունը տարիների ընթացքում անհետացել էր: Ժամանակին ինչ-որ մեկը ապրել էր ու մեռել ու հիմա մոռացվել: Այդ պատկերը ինձ համար ողբերգական էր: Երբ տուն վերադարձանք, երկար ժամանակ տրամադրեցի՝ կարդալով այդ հին ագարակի ու այդ շրջանի պատմության մասին, սակայն չգտա որևէ տեղեկություն այդ տեղ թաղված անձի մասին: Այս իրողությունը ցույց է տալիս, թե լավագույն անձն իսկ կարող է հիշվել հարյուր կամ

Կարդա՛
եսայի 49.14-16

...հիշատակի գիրք գրեց Տիրոջից երկյուղ կրողների առաջ և նրանց առաջ, որոնք սարսուլմ են նրա անունից: Մաղ. 3.16

մի քիչ ավելի տարիներ ու շուտով մոռացվել: Անցյալ սերնդի հիշատակը, գերեզմանների վրայի ցուցատախտակների նման, շուտով անհետանում է: Սակայն մեր ավանդը անցնում է Աստծո ընտանիքի մեջ, և ինչպես մեր Աստծուն և ուրիշներին սիրեցինք մեր կյանքի մեջ, մնում է: Մաղաքիա մարգարեն ասում է. «Հիշատակի գիրք գրեց Տիրոջից երկյուղ կրողների առաջ և նրանց առաջ, որոնք սարսուլմ են նրա անունից: Եվ Ամենակալ Տերն ասում է. «Նրանք իմը կլինեն այն օրը, երբ ես փրկություն կանեմ, կփայփայեմ նրանց...» (3.16-17): Պողոսն ասաց Դավթի մասին, թե նա «Աստծու կամքին ծառայելուց հետո ննջեց, իր հայրերի կողքին դրվեց և ապականություն տեսավ» (Գործք Առ. 13.36): Նրա նման թող որ մենք էլ սիրենք Աստծուն ու ծառայենք ու թողնենք հիշվելը Նրան: «Նրանք իմը կլինեն», - ասում է Տերը:

Աղոթք - Տե՛ր, թող որ հավատարիմ լինեմ Քեզ այսօր, մինչ ժամանակ եմ տրամադրում ուրիշներին սիրելու: Օգնիր, որ կարողանամ Քեզ վստահել իմ թողած հիշատակի համար: Ամեն:

Տիրոջ համար ապրելը մնայուն հիշատակ է թողնում:

Միայն աղոթքով

Բարեկամուհիս զանգեց ինձ իր քաղցկեղի բուժման ժամանակ մի ուշ երեկոյան: Իր անտանելի տառապանքի համար արցունքներս հոսեցին, ու լուռ աղոթեցի՝ ասելով. «Ի՞նչ պետք է անեմ, ո՛վ Տեր»:

Նրա լացն ու կոծը սիրտս ճմլեցին: Չէի կարող նրա ցավը ամոքել, կացուկթյունը փոխել կամ իմաստուն խոսք գտնել: Սակայն գիտեի, թե ով կարող էր օգնել: Մինչ լաց էի լինում բարեկամուհուս հետ, հազիվ կարողացա փափսալով կրկնել այս աղոթքը. «Հիսուս, Հիսուս, Հիսուս»:

Նրա լացը կամաց-կամաց սկսեց թուլանալ ու վերածվել կծկծանքի, մինչև որ շնչառությունը դանդաղեց: Ամուսնու ձայնը ցնցեց ինձ, երբ ասաց. «Քնած է: Վաղը կհեռաձայնենք»:

Հեռախոսը տեղը դրի ու բարձիս վրա շարունակեցի լալ:
Մարկոս Ավետարանիչը բաժանում է մեզ հետ ուրիշի պատմությունը, որ ուզում էր օգնել իր սիրելիին: Հուսահատ մի մարդ իր տառապող որդուն Հիսուսի մոտ բերեց (Մարկ. 9.17): Կասկածը հստակ էր իր թախանձանքի մեջ, երբ նշեց իրենց ունեցած վիճակի անկարելիության մասին (Հմ. 20-22) և խնդրեց, որ Հիսուսը օգնի իր անհավատության մեջ (Հմ. 23): Հայր ու որդի ազատության, հույսի ու խաղաղության փորձառությունը ունեցան, երբ Հիսուսը միջամտեց ու իր ձեռքերի մեջ առավ նրանց դժվար պարագան (Հմ. 24-26): Երբ սիրելիները ցավի մեջ են, բնական է ճիշտ բան անելու ու ճիշտ բառեր ասելու փափազը ունենալ: Սակայն Քրիստոսը միակն է, որ կարող է իրապես մեզ օգնել: Երբ Հիսուսի անունը կանչենք, Նա կարող է օգնել մեզ, որ հավատանք ու իր զորության ներկայությունը վստահենք:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Տե՛ր Հիսուս: Օ՛հ, որքա՛ն Քո կարիքն ունենք: Ամեն:

Հիսուսի անունը գորավոր աղոթքն է, որ մեզ առաջնորդում է իր հզոր ներկայության մեջ:

Կարդա՛

Մարկոս 9. 14-29

...հավատացողի համար ամեն ինչ հնարավոր է: Մարկ. 9.23

Մինչև ե՞րբ

Լեվիտ Կարուլի «Ալիսը հրաշքների աշխարհում» դասական գրական գործում Ալիսը հարցնում է. «Որքա՞ն է տևում հավերժությունը»: Ճերմակ նապաստակը պատասխանում է. «Երբեմն միայն մեկ վայրկյան»:

Այդպես թվաց ժամանակը, երբ եղբայրս՝ Դավիթը հանկարծամահ եղավ: Իր հիշատակի պաշտամունքին տանող օրերը սկսեցին երկարել՝ սաստկացնելով կորստի ու ողբի զգացումը: Յուրաքանչյուր վայրկյանը թվաց անվերջ:

Մի այլ Դավիթ այս զգացումին արձագանքեց, երբ երգեց. «Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի մոռանաս ինձ իսպառ, մինչև ե՞րբ պիտի չըջես երեսդ ինձնից: Մինչև ե՞րբ խռովք ունենամ իմ հոգում և ամենօրյա ցավ՝ իմ սրտում: Մինչև ե՞րբ թշնամին պիտի բռնանա ինձ վրա» (Սաղմ. 12.1-3): Միայն երեք համարներում չորս անգամ նա Աստծուն հարցնում է. «Մինչև ե՞րբ»: Շատ անգամ կյանքի ցավերը թվում են անվերջ:

Այս տեսակի սրտի ցավի մեջ Աստծո ներկայությունն ու հոգատարությունն են միջամտում: Դավիթ Թագավորի նման մենք էլ անկեղծաբար կարող ենք Նրա մոտ գնալ մեր ցավերով ու կորուստներով՝ գիտենալով, թե Նա երբեք մեզ չպիտի թողնի (Եբ. 13.5): Սաղմոսերգուն այս ճշմարտությունն է գտնում՝ թույլ տալով, որ իր ողբը փոխվի հաղթանակի հայտարարության. «Ես ողորմությանդ վրա հույս դրի, Տե՛ր, սիրտս հրճվեց քո փրկագործությունք» (Սաղմ. 13.6): Մեզ անվերջ թվացող պայքարի պահերին Նրա հավատարիմ սերը մեզ վեր պիտի հանի:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ, որ կարողանանք միշտ Քեզ ապավինել ու հուսալ, որովհետև Դու ես մեր հույսը, զորությունը, մխիթարությունն ու ազատարարը: Ամեն:

Ցավի ու կորստի ժամանակ մեր մեծագույն մխիթարությունը մեր անսահման ու հզոր Աստվածն է:

Կարդա՛ր Սաղմոս 12

Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի մոռանաս ինձ իսպառ, մինչև ե՞րբ պիտի չըջես երեսդ ինձնից: Սաղմ. 12.1

Հավատք, հույս և սեր

Հորաքույրս՝ Քեթին, տասը տարի իր տան մեջ հոգ տարավ պապիս: Նա ճաշ եփեց ու մաքրություն արեց այն շրջանում, երբ դեռ նա ինքնուրույն էր, ապա երբ պապիս վիճակը վատթարացավ, հիվանդապահուհու դերը ստանձնեց: Նրա մատուցած ծառայությունը Սալոնիկի եկեղեցու անդամներին Պողոսի գրած բառերի այժմէական օրինակն է, ուր նա շնորհակալություն է հայտնում՝ ասելով. «Հիշում ենք ձեր հավատի գործը, սիրո աշխատանքն ու մեր Տեր Հիսուս Քրիստոսի հույսի համբերությունը Աստծու և մեր Հոր առաջ» (Ա Թես. 1.3): Հորաքույրս հավատքով ու սիրով ծառայեց: Նրա՝ պապիս մատուցած ամենօրյա հոգատարությունը արդյունքն էր Աստծո հանդեպ իր հավատքի, և համոզված էր, որ Աստված իրեն կանչել էր այս կարևոր գործի համար: Նրա գործը ծնունդ էր առել Աստծո ու պապիս հանդեպ ունեցած սիրուց: Նա նաև հարատևեց հույսի մեջ: Պապս շատ ազնիվ մարդ էր, սակայն դժվար էր տեսնել նրա կամաց-կամաց նվազելը: Հորաքույրս կրճատեց իր ընտանիքի ու բարեկամների հետ անցկացնելու ժամանակն ու ճամփորդությունները՝ պապիս խնամելու համար: Նա կարողացավ հարատևել Աստծո տված հույսով, որ օրըստօրե պիտի նորոգեր իր գորությունը, ինչպես նաև երկնքի հույսով, որ սպասում էր պապիս: Հոգ չէ թե ինչ կլինի՝ ընտանիքի անդամի հոգատարություն, դրացուն օգնել կամ կամավորական աշխատանք. քաջալերվիր, մինչ անում ես այն, ինչ Տերը ինքն է սահմանել քեզ համար: Քո գործը կարող է հզոր վկայություն լինել քո հավատքի, հույսի ու սիրո մասին:

Աղոթք - Տեր, օգնիր, որ այսօր կարողանամ տեսնել ուրիշների կարիքները, ու թե ինչպես կարելի է նրանց օգտակար լինել, ու հոգու զորությունը՝ հնազանդվելու համար: Թող որ Քո՝ ինձ տված հավատքով, հույսով ու սիրով ապրեմ:

Կյանքի փառքը սիրելն է ու ոչ թե սիրվելը, տալը ու ոչ թե արձանելը, ծառայելը ու ոչ թե ծառայություն ընդունելը:

Կարդա՛
Ա Թես. 1.1-3
 Ամեն ժամանակ ձեր բոլորի համար գոհանում ենք Աստծուց:
 Ա. Թես. 1.2

Երբ մեկը տառապում է, բոլորն են ցավում

Երբ մի աշխատակից տեղեկացրեց, թե հիվանդ է, գրասենյակի բոլոր պաշտոնյաները սկսեցին մտահոգվել նրա համար: Երբ հիվանդանոցում մնալուց ու մեկ օր հանգստանալուց հետո մեր աշխատակիցը վերադարձավ, ցույց տվեց իր ցավի պատճառ դարձած երիկամի քարը: Նա խնդրել էր վիրաբույժից, որ քարը իրեն տար որպես հիշատակ: Նա յերով այդ քարին՝ ուզեցի իր ցավը բաժանել՝ հիշելով տարիներ առաջ իմ ունեցած միզաքարը: Իմ ցավն էլ անտանելի էր: Հետաքրքրական է, թե ինչպես է այդպիսի փոքր մի քար այդքան ցավ տալիս մարմնին: Ինչ-որ տեղ սա է հիշում Պողոսը՝ Ա. Կորնթ. 12.26-ի մեջ. «Եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավում են»: 12-րդ դիտում Պողոսը գործածում է մարմնի փոխաբերական օրինակը՝ նկարագրելու աշխարհի շուրջ գտնվող Բրիտանոնյաներին: Երբ Պողոսն ասում է՝ «Աստված մարմին էլ է» (հմ. 24), ակնարկում է Բրիտանոնյան ամբողջ մարմնի՝ բոլոր Բրիտանոնյաների մասին: Մենք բոլորս էլ ունենք զանազան պարզեւներ ու կատարելիք դերեր: Սակայն քանի որ մենք բոլորս էլ նույն մարմնի անդամներն ենք, եթե մեկը ցավ ունենա, մենք բոլորս ցավում ենք: Երբ հավատակիցներից մեկը հալածվում է, ցավ զգում ու փորձություններ դիմադրավում, մենք էլ ենք ցավում, կարծես մենք ենք կրում այդ վիշտն ու ցավը:

Աշխատակցիս ցավը մղեց նրան, որ նա իրեն հարկավոր օգնությունը ստանա: Հիսուսի մարմնի մեջ որևէ մեկի ցավը բորբոքում է մեր սերը ու մղում մեզ գործ անելու: Մենք կարող ենք աղոթել, քաջալերական խոսք ասել կամ էլ անել այն, ինչ հարկավոր է՝ օգտակար լինելու բուժման ընթացքում: Ճիշտ այդպես է գործում մարմինը ամբողջական կերպով:

Աղոթք - Տե՛ր, խաղաղություն տուր նրանց, որոնք հալածվում են կամ ցավ ունեն: Ամեն:

Մենք միասին ենք այս բանի մեջ:

Կարդա՛ր Ա Կորնթ. 12.14-26

Եվ եթե մի անդամը ցավում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ցավում են, ու եթե մի անդամը փառավորվում է, բոլոր անդամներն էլ նրա հետ ուրախանում են:
Ա Կորնթ. 12.26

Մեր փոթորիկների մեջ

Տասնչորս տարեկան պատանի էի, երբ մի օր պապս ու ես ձկնորսություն էինք անում լճի վրա ու մի քիչ երկար մնացինք: Մինչ արևը մայր էր մտնում, սաստիկ քամին փչեց, կայծակը փայլատակեց, ու ալիքները զարկեցին: Մտածեցի, թե պիտի մեռնեմ: Պապս ցուցում տվեց ու ասաց, որ նստեմ նավակի առջևի մասում՝ հավասարակշռությունը պահելու համար: Սիրտս վախով լցվեց: Սակայն քիչ հետո, չգիտեմ ինչպես, ազդեցի սկսեցի սրտիս մեջ: Խնդրեցի Աստծուց Իր պաշտպանությունն ու վստահությունը: Փոթորիկը չմեղմացավ, սակայն մենք կարողացանք ապահով ցամաք հասնել: Մինչև օրս չգիտեմ, թե Աստծո ներկայությունն ավելի մեծ զգացում ունեցե՞լ եմ, քան այդ երեկո փոթորիկի մեջ: Հիսուսը ծանոթ էր փոթորիկների: Մարկոս 4.35-41 համարների մեջ կարդում ենք, թե Նա պատվիրում է Իր աշակերտներին, որ ծովի մյուս եզերքն անցնեն: Այդ երեկո փոթորիկը քննության ենթարկեց այդ չարքաշ ու կորովի ձկնորսներին: Նրանք էլ մտածեցին, թե պիտի մեռնեն, սակայն Հիսուսը խաղաղեցրեց ջրերը ու առաջնորդեց Իր աշակերտներին ավելի խոր հավատքի: Հիսուսը նույնպես մեզ հրավիրում է Իրեն վստահել մեր կյանքի փոթորիկների մեջ: Երբեմն հրաշքով Նա քամիներն ու ալիքները խաղաղեցնում է: Ուրիշ ժամանակներ նույնչափ հրաշալի բան է անում. Նա հանդարտեցնում է մեր սրտերը և օգնում մեզ, որ կարողանանք Իրեն վստահել: Նա թեկադրում է մեզ հավատալու, թե Ինքը ունի զորություն՝ ասելու ալիքներին. «Դադարիր, լո՛ւս մնա»:

Աղոթք - Տեր, այնպես է թվում, թե մեր կյանքի մեջ մեր ունեցած փոթորիկները մեզ պիտի կուլ տան: Օգնիր, որ վստահեմք, թե Դու փոթորիկի Տերն ես, ու մենք կարող ենք մեր հավատքը Քեզ վրա հաստատել՝ մեր դիմագրաված կյանքի բոլոր փոթորիկների մեջ: Ամեն:

Ոչ մի վտանգ չի կարող մեզ ավելի մոտենալ, քան Աստծո ներկայությունը:

Կարդա՛

Մարկոս 4. 35-41

Նա, զարթնելով, քամուն սաստեց ու ծովին ասաց. «Լռի՛ր, հանդարտվի՛ր»: Եվ քամին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց: Մարկ. 4.39

Երգելու առիթ

Երբ տասներեք տարեկան էի, մեր դպրոցի ծրագիրը պահանջում էր աշակերտներից չորս հետազոտական դասընթացների հետևել՝ ներառյալ տնային տնտեսություն, արվեստ, երգեցողություն ու փայտագործություն: Երգչախմբի առաջին օրը դասատուն հրավիրեց յուրաքանչյուր աշակերտի մոտենալ դաշնամուրին՝ ձայնը լսելու ու դասարանի տարբեր մասերում դասավորելու՝ ձայնի համեմատ: Երբ հերթս հասավ, մի քանի անգամ երգեցի նվագած երաժշտությունը: Դասատուն ինձ չուղարկեց միանայու նույն ձայն ունեցողների խմբին: Ընդհակառակը՝ նա ինձ ուղարկեց դպրոցի խորհրդատու ուսուցչին, որպեսզի ուրիշ դասընթացի հետևեմ: Այդ պահից սկսած՝ ես զգացի, որ երբեք չպիտի երգեմ, ու իմ ձայնը չպիտի լսվի:

Տասը տարուց ավելի այդ զգացումը ունեցա, մինչև որ մի օր կարդացի 97-րդ Սաղմոսը: Հեղինակը սկսում է այս Սաղմոսը «Տիրոջը օրհներգելու» հրավերով (Սաղմ. 97.1): Այստեղ նշված պատճառը բնավ կապ չունի մեր ձայնի որակի հետ: Աստված ցնծում է իր զավակների շնորհակալության ու փառաբանության երգերի համար: Մենք հրավիրված ենք երգելու, որովհետև Աստված «սքանչելագործություններ արեց» (Հմ. 1):

Սաղմոսերգուն մատնանշում է երկու սքանչելի պատճառ ուրախության երգերով ու մեր դիրքով Աստծուն փառավորելու՝ մեր կյանքերի մեջ իր արած փրկության գործի և մեր հանդեպ իր ունեցած մնայուն հավատարմության համար: Աստծո երգչախմբի մեջ մեզնից յուրաքանչյուրը ունի իր տեղը՝ երգելու իր արած սքանչելի գործերի համար:

Աղոթք - Տե՛ր, Դու մե՞ծ բաներ ես արել իմ կյանքի մեջ: Նույնիսկ եթե իմ ձայնը չպիտի լսվի բեմի վրա, ցանկանում եմ միանալ Քո երգչախմբին՝ շնորհակալություն հայտնելու Քո արած հիանալի գործերի համար: Ամեն:

Աստված սիրում է իր զավակների ձայները լսել:

Կարդա՛ր Սաղմոս 97

Օրհնեցե՛ք Տիրոջը
Նոր օրհներգով, քանզի
պրանչելագործություններ
արեց նա:
Սաղմ. 97.1

Մի րոպե

Գլխունականները բժախնդիր են ժամանակի մեջ: 2016-ի վերջին Մերիլենդ նահանգի Կողբարդ տիեզերանավային թռիչքների կենտրոնում գործող գիտնականները մի վայրկյան ավելացրին տարվա վրա: Ուստի եթե զգացիր, որ այդ տարին մի քիչ ավելի երկար էր բնականից, ճիշտ էիր:

Ինչո՞ւ նրանք այդ բանն արեցին: Որովհետև երկրի շրջապատույտը ժամանակի ընթացքում դանդաղում է, ու տարին մի քիչ երկարում է: Երբ գիտնականները հետևում են տիեզերք ուղարկված մարդկանց շինած արբանյակներին, հարկ է, որ գիտնականի բառերով, «վստահ լինեն, որ ընդհարումներն արգելող ծրագրերը ճշգրիտ են»:

Մեզնից շատերի համար մի վայրկյան շահելը կամ կորցնելը այդքան էլ մեծ տարբերություն չունի: Սակայն Աստվածաշնչի համաձայն՝ մեր ժամանակը և այն, թե ինչպես ենք օգտագործածում այն, կարևոր է: Օրինակ՝ Պողոսը հիշեցնում է մեզ Ա Կորնթացիս 7.29-ում, թե «ժամանակը կարճ է»: Աստծո գործը անելու համար մեր ունեցած ժամանակը սահմանափակ է, ուստի իմաստովյալմբ պիտի օգտագործենք այն: Նա մեզ թախանձում է՝ ասելով. «Ժամանակը գնահատեցե՛ք, որովհետև օրերը չար են» (Եփ. 5.16):

Սա չի նշանակում, թե մենք յուրաքանչյուր վայրկյանը պիտի հաշվարկենք, ինչպես գիտնականները: Սակայն երբ նկատի ունենանք կյանքի սրընթաց բնույթը (Սաղմ. 38.4), կարող ենք հիշել մեր ժամանակը իմաստովյալմբ գործածելու մասին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք Քո տված յուրաքանչյուր րոպեի համար: Թող ձգտենք Քեզ փառավորել մեր ժամանակը իմաստությամբ գործածելու այս պարգևով՝ Քո փառքի ու պատվի համար: Ամեն:

Միայն ժամանակ մի՛ վատնիր, այլև օգտագործիր:

Կարդա՛
Սաղմոս 38

...որպեսզի իմանամ,
 թե ինչքան կորուստ
 եմ ունեցել: Սաղմ.
 38.4

Աստծուն ճանաչել սովորել

Որքան ինձ հիշում եմ, միշտ ցանկացել եմ մայր լինել: Ցանկանում էի ամուսնանալ, հղիանալ ու ձեռքերիս մեջ առնել նորածնիս: Երբ վերջապես ամուսնացա, ամուսինս ու ես նույնիսկ չմտածեցինք մեր ընտանիքը մեծացնելու միտքը հետաձգելու մասին: Սակայն մեր փորձերը չհաջողվեցին, ու բժշկական զանազան քննությունները հաստատեցին, որ մենք չէին կարողանալու զավակներ ունենալ: Ամիսներ շարունակ բժիշկների այցելություններից ու զանազան ստուգումներից հետո արցունք թափեցինք: Մենք փոթորիկի մեջ էինք: Ամուսիջունը դառը դեղ էր կույ տալու համար ու պատճառ դարձավ կասկածելու Աստծո բարությունն ու հավատարմությունը:

Կարդա՛ր
Յովիաննես 6.16-21

Նա էլ ասաց նրանց. «Ես եմ, մի՛ վախեցեք»:
Յովի. 6.20

Երբ անդրադառնում եմ մեր այս դառն ճամփորդությունը, հիշում եմ ծովի վրա փոթորկի հանդիպած աշակերտներին: Մինչ նրանք պայքարում էին իրենց սպառնացող ալիքների դեմ, անակնկալորեն Հիսուսը իրենց մոտեցավ փոթորկի միջից: Նրանց հանդարտեցրեց՝ ասելով. «Ե՛ս եմ, մի՛ վախեցեք» (Հովհ. 6.20):

Աշակերտների նման ամուսինս ու ես էլ գաղափար չունեինք, թե ինչ էր մոտենում մեզ փոթորկի միջից, սակայն մենք խաղաղություն ունեցանք՝ սովորելով ու համոզվելով, թե Աստված Նա է, որ միշտ հավատարիմ ու ճշմարիտ է: Թեև մենք չպիտի չկարողանալինք ունենալ մեր փափազած երեխան, բայց սովորեցինք, որ մեր բոլոր պայքարների մեջ կարող ենք ունենալ Նրա խաղաղեցնող ներկայությունը գորությունը: Քանի որ Նա այնտեղ է՝ մեր կյանքերի մեջ մեծ գորությունը գործելու, չպետք է հուսահատվենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ այս կյանքի փոթորիկները առանց Քեզ չպիտի դիմագրավեն: Շնորհակալ եմ ինձ հանդարտեցնող ուժեղ ներկայությանդ ու իմ դիմագրաված ներդրությունների մեջ ինձ կրելու Քո զորության համար: Ամեն:

Մենք կարող ենք Աստծո ներկայությունը վայելել նույնիսկ փոթորիկների մեջ:

Դատող ծագումներ

«Որտեղի՞ց ես» հարցով մենք հաճախ ուզում ենք ավելի լավ ճանաչել մարդկանց: Սակայն մեզնից շատերի համար այս հարցի պատասխանը խրթին է: Երբեմն չենք ուզում բոլոր մանրամասնությունները կիսել ուրիշների հետ:

Դատավորների գրքում հնարավոր է, որ Հեփթայեն երբեք չպիտի ուզեր պատասխանել այդ հարցին:

Իր հոր՝ Գաղաազի որդիները, խորթ եղբայրները, նրան վռնեցին՝ ասելով. «Դու մեր հոր տան մեջ ժառանգություն չպիտի ունենաս, որովհետև պոռնիկ կնոջ որդի ես» (Դատ. 11. 2): Հատվածը բացարձակորեն ասում է. «Որդին էր մի պոռնիկ կնոջ» (Հմ. 1):

Սակայն Հեփթայեն ի ծնե առաջնորդ էր: Երբ թշնամի Ամմոնի որդիները Գաղաազի վրա հարձակվեցին, նրանք, որոնք իրեն վռնեցին էին, հանկարծ նրան ետ ուզեցին ու ասացին. «Եվ և մեզ համար գորավար եղիր...» (Հմ. 6): Հեփթայեն հարցրեց նրանց. «Ձե՞ որ դուք ինձ ատեցիք... Հիմա, երբ նեղության մեջ եք, ինչո՞ւ եք եկել ինձ մոտ» (Հմ. 7): Նրանց երաշխավորությունն ապահովելուց հետո նա համաձայնեց առաջնորդել: Խոսքը մեզ ասում է. «Եվ Տիրոջ հոգին հակվեց Հեփթայեի կողմը» (Հմ. 29): Նա հավատքով զնաց ու մեծ հաղթանակ տարավ: Նոր Կտակարանը հիշում է նրա անունը հավատքի հերոսների ցանկի մեջ (Եբ. 11.32):

Թվում է, թե Աստված շատ անգամ չափնկալված անձեր է ընտրում իր գործի համար: Կարևոր չէ, թե մենք որտեղից ենք, ինչպես ենք այստեղ եկել և կամ ինչ ենք արել: Կարևորը հավատքով մեր տված պատասխանն է իր կոչին ու սիրուն:

Աղոթք - Տե՛ր, մխիթարություն ունենք, որ Դու կողմնապահություն ցույց չես տալիս՝ հիմնվելով մեր ծագման վրա: Մեր հարստությունը Քո մեջ է: Շնորհակալ եմք, որ մեզ Քո ընտանիքի մեջ ես ընդունում: Ամեն:

Եվ շատ առաջիններ հետիններ կլինեն, իսկ հետիններ՝ առաջիններ: Մատթ. 19.30

Կարդա՛

Դատավոր. 11.1-8, 29

Եվ Տիրոջ հոգին հակվեց Հեփթայեի կողմը: Դատ. 11.29

Մի՛ շտապիր

Երբ երկու բարեկամներ կրկնեցին «շտապելը մտքիցդ հանիր» իմաստուն խոսքը, համոզվեցի, որ լրջությամբ պիտի հետևեմ այդ առածին: Արդյոք ո՞ւր էի վատնում ուժս ու ժամանակս: Նաև ավելի կարևորը. ո՞ւր էի գնում աճապարանքով, ու չէի խնդրում Աստծո առաջնորդությունն ու օգնությունը: Հաջորդող շաբաթների ու ամիսների ընթացքում այդ խոսքերը հիշեցի ու Աստծուն դառնալով՝ իմաստություն խնդրեցի: Ինքս ինձ հիշեցրի, որ Աստծուն պիտի վստահեի՝ փոխանակ իմ ուժին ու կարողությունը վստահելու:

Կարդա՛ եսայի 26.1-4

Յոգուն եմ ճշմարտության մասին և ապահովում խաղաղությունը:
Ես. 26.3

Վերջապես աճապարելը Եսայի մարգարեի հիշած «կատարյալ խաղաղության» ճիշտ հակառակն է: Տերը այս պարզևը տալիս է նրանց, «որոնք հոգում են ճշմարտության մասին» որովհետև Աստուծուն են վստահում (Եսայի 26.3): Ու նաև Նա արժանի է մեր վստահությանն այսօր, վաղը ու հավիտյան, քանի որ «հույսով ապավինեցինք քեզ հավիտենապես, ո՛վ Տեր» (Հմ. 4): Հաստատ մտքով Աստծուն վստահելը լավագույն դարմանն է աճապարող կյանքի դիմաց:

Իսկ մե՞նք. մեզ միշտ աճապարանքի մե՞ջ ենք զգում, թե՞ խաղաղության զգացում ունենք մեր կյանքերում: Եվ կամ էլ այս երկու ծայրահեղությունների մեջտեղում ենք:

Ուր էլ լինենք, ազդվում եմ, որ մենք կարողանանք մի կողմ դնել աճապարանքը ու Աստծուն վստահել, որ բնավ մեզ հուսախաբ չի անում ու Իր խաղաղությունն է շնորհում:

Աղոթք - Տե՛ր Աստված, ամեն մտքից վեր եղող խաղաղությունն ես տալիս մեզ, որ պարզև է, որը ես բնական չեմ ուզում դիտել: Շնորհակալ եմ: Ամեն:

Աստծո խաղաղությունը օգնում է, որ չաճապարե՛նք:

Ներելու արվեստը

Մի կեսօրից հետո չուրջ երկու ժամ անցկացրի «Հայրը ու երկու որդիները. ներումի արվեստը» խորագրով գծանկարների ցուցահանդեսի սրահում: Ցուցադրված հիանալի նկարները կենտրոնացած էին Տեր Հիսուսի պատմած Անառակ որդու առակի վրա (տե՛ս Ղուկ. 15.11-31): Մասնավորաբար էդուարդ Ռիոջասի նկարած Անառակ որդու պատկերը ուժեղ համարեցի: Նկարը ներկայացնում էր կորսված որդու վերադարձը՝ ցնցոտիներ հագած ու գլուխը կախ: Իր ամբողջ ունեցածը վատնած ու պատժի արժանի լինելու զգացումով նա քայլում է դեպի տուն ու տեսնում հորը, որ վազելով իրեն է մոտենում: Այս նկարի տակ գրված էին Տեր Հիսուսի խոսքերը. «Ու երբ նա դեռ հեռու էր, հայրը նրան տեսավ, և գուլթը շարժվեց...» (Հմ. 20):

Կարդա՛
Ղուկաս 15.11-24

Ու երբ նա դեռ հեռու էր, հայրը նրան տեսավ, և գուլթը շարժվեց. վազեց, նրա վզովն ընկավ ու համբուրեց նրան: Ղուկ. 15.20

Մի անգամ էլ անդրադարձա, թե ինչպես է Աստծո անփոփոխ սերը իմ ամբողջ կյանքը հեղաշրջել: Երբ Նրանից հեռացա, Նա Իր մեջքը չդարձրեց ինձ, այլ շարունակեց նայել, դիտել ու սպասել: Նրա սիրուն արժանի չենք, սակայն Նա մնում է անփոփոխ, հաճախ անտեսված, սակայն երբեք ետ չառնված:

Բոլորս էլ մեղավոր ենք, սակայն մեր երկնավոր Հայրը Իր ձեռքը մեզ է երկարում ու ընդունում այս առակի հոր նման, որ իր անառակ որդու հետ ողջագուրվում է: Նա իր սպասավորներին հրամայում է. «Մասցու եզն էլ բերեք մորթեցե՛ք, ուտենք՝ ուրախ լինենք: Որովհետև իմ այս որդին մեռած էր ու կենդանացավ, կորած էր ու գտնվեց» (Հմ. 23-24): Տերը դեռ ուրախանում է նրանց համար, որոնք Իրեն են վերադառնում այսօր: Սատնակատարության է արժանի:

Աղոթք - Հայր, մինչ վայելում եմք Քո սերն ու ներումը, թող ուրիշներին էլ տանք այդ հիանալի սերը Քո անունով: Ամեն:

Աստծո սիրուն արժանի չե՛նք, սակայն Նա մնում է անփոփոխ:

Ցանկացած տեղ

Երբ նայում էի մեր ամուսնություն հին նկարներին, ուշադրությամբ դիտումս գրավեց մեկը, որ մեզ ցույց էր տալիս առաջին անգամ որպես «Տեր և տիկին»: Նկարում իմ դեմքին շատ հստակ գծագրվում է պատրաստակամությունս՝ նրա հետ ցանկացած տեղ զնայուհետ կապված: Շուրջ չորս տասնամյակ անց դեռ մեր ամուսնությունը ուժեղ սիրո կապով ու նվիրումով է հաստատ մնում, որ մեզ առաջնորդել է թե՛ դժվարությունների և թե՛ լավ ժամանակների մեջ: Տարեցտարի ես վերահաստատել եմ նվիրումս՝ ցանկացած տեղ նրան հետևելու գնով: Երեմիա 2.2-ի մեջ Աստված խանդաղատագին է Իր սիրելիի հանդեպ, սակայն Իսրայելը սայթաքել է. «Քեզ հիշեցի, քո պատանություն խանդաղատանքն ու քո հարսնության սերը, երբ դու ընթանում էիր Իսրայելի սրբի ետևից»: Այստեղ հիշատակված սերը հայտնում է հնարավոր գերագույն նվիրումն ու հավատարմությունը: Իսրայելը այս սերն ուներ Աստծո հանդեպ, սակայն ժամանակի ընթացքում կամաց-կամաց մոռացվել էր դա:

Հակառակ սկզբնական շրջանում եղած անուրանալի նվիրումի հզոր զգացումներին՝ գոհունակությունը կարող է մարել սերը, և նախանձախնդրության պակասը կարող է անհավատարմության առաջնորդել: Մենք գիտենք նման պարագաների դեմ պայքարելու կարևորությունը մեր ամուսնական կյանքում:

Սակայն ինչ վերաբերում է մեր սիրո հարաբերությունը Աստծո հետ, արդյո՞ք դեռ ունենք այն նվիրումը, որ ունեինք, երբ հավատացինք Աստծուն: Աստված հավատարմորեն թույլ է տալիս, որ մարդիկ վերադառնան Իրեն (3.14-15): Այսօր մենք կարող ենք նորոգել մեր ուխտը և Իրեն հետևել ցանկացած տեղ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր, որ պահեմ Քեզ տված խոստումներս: Քեզ պիտի հետևեմ ցանկացած տեղ: Ամեն:

Կարիք չունես գիտենալու, թե ո՛ր ես գնում, եթե գիտես, որ Աստված է առաջնորդում:

Կարդա՛ր
Երեմ. 2.1-8, 3.14-15

Քեզ հիշեցի, քո պատանության խանդաղատանքն ու քո հարսնության սերը, երբ դու ընթանում էիր Իսրայելի սրբի հետևից: Երեմ. 2.2

Աստված մանրամասների մեջ

Երբ շնիկս՝ Տուրմը, երեք ամսական էր, նրան անասնաբու-
ժարան տարա ստուգելու ու անհրաժեշտ սրսկումների հա-
մար: Անասնաբույժը ուշադիր քննելիս նկատեց ճերմակ նշան
նրա ձախ թաթին ու ժպտալով նրան ասաց. «Այդտեղից էր քեզ
Աստված բռնել, երբ թաթախեց շոկոլադի մեջ»:

Ես չկարողացա ծիծաղս գսպել: Սա-
կայն անասնաբույժը նշանակալից
կարևոր կետ հաստատեց, թե Աստված
հետաքրքրված է իր ստեղծագործու-
թյունով:

Մատթեոս 10.30-ի մեջ Հիսուսն
ասում է, թե «ձեր գլխի բոլոր մազերն
էլ հաշված են»: Աստված այնքան մեծ
է, որ կարող է մեր կյանքի յուրաքանչ-
յուր մանրամասնի առնչությամբ անսահ-
ման հետաքրքրություն ցույց տալ: Չկա որևէ փոքր բան, որ
Նրա ուշադրությունից վրիպի, ու չկա որևէ բան մեր մասին,
որ կարևոր չլինի Նրա համար: Նա պարզապես մեզ շատ է սի-
րում ու հոգ տանում:

Աստված ոչ միայն ստեղծում է, այլև պահում ու պաշտ-
պանում ցանկացած պարագայում: Նա հսկում է մեզ վրա ու
նույնիսկ այն բաների վրա, որոնք կարող էին վրիպել մեր
ուշադրությունից: Որքան մխիթարական է գիտենալ, թե մեր
կատարյալ իմաստուն ու հոգատար երկնավոր Հայրը մեզ իր
հզոր ու սիրող ձեռքերի մեջ է պահում բոլոր մյուս արարչա-
գործությունների կողքին:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, փառավորում եմ Քեզ Քո արարչա-
գործության սքանչելիության համար: Օգնիր, որ Քո սիրուն
անդրադառնամ՝ ուշադիր լինելով Քո արած բոլոր բաների
համար: Ամեն:

Աստված մեր բոլոր կարիքները հոգում է:

Կարդա՛
Մատթ. 10. 29-31

Արդար է Տերն իր
բոլոր ճանապարհ-
ներից, և սուրբ է
նա իր բոլոր գոր-
ծերում:
Սաղմ. 144.17

Խաղաղության գաղտնիքը

Գրեյսը հատուկ կին է: Երբ մտածում եմ նրա մասին, մեկ բառ է գալիս միտքս՝ «խաղաղություն»: Նրա դեմքի վրա- յի լուռ ու հանդարտ արտահայտությունը շատ քիչ էր փոխվել անցյալ վեց ամիսների մեր ծանոթություն ընթացքում՝ հակա- ուակ ամուսնու հազվագյուտ հիվանդության ախտաճանաչումի ու հիվանդանոց փոխադրվելուն:

Երբ Գրեյսին հարցրի, թե ինչն էր իր խաղաղության գաղտնիքը, ասաց. «Գաղտնիք չէ՛, այլ մի անձ. իմ մեջ բնակվող Հիսուսն է: Ուրիշ կերպ չի կարելի բացատրել փոթորկի մեջ իմ զգացած խաղաղությունը»:

Խաղաղության գաղտնիքը Տեր Հիսուսի հետ մեր ունեցած հարաբերության մեջ է: Նա է մեր խաղաղությունը: Երբ Հիսուսը մեր Փրկիչն ու Տերն է, ու երբ փորձում ենք ավելի իրեն նմանվել, խաղաղությունը իրականություն է դառնում: Հիվանդություն, վտանգ և նյութական նեղություններ կարող են պատահել, սակայն խաղաղությունը վստահեցնում է մեզ, թե Աստված մեր կյանքերը իր ձեռքերի մեջ է առնում (Դան. 5.23), ու մենք կարող ենք վստահ լինել, թե ամեն բան բարու գործակից պիտի լինի:

Մենք այս խաղաղության փորձառությունը ունեցե՞լ ենք, որ ամեն մտքից վեր է: Ունե՞նք ներքին վստահություն, թե Աստված կառավարում է: Այսօր իմ մաղթանքը մեր բոլորի համար արձագանքում է Պողոս առաքյալի բառերին. «Իսկ ինքը՝ խաղաղության Տերը... ձեզ խաղաղություն տա»: Եվ թող որ մենք այս խաղաղությունը զգանք «ամեն ժամանակ ու ամեն կերպ» (Բ Թես. 3.16):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, խնդրում եմք Քո խաղաղությունը տուր մեզ ամեն պարագայում ու ամեն ժամանակ: Ամեն:

Հիսուսին վստահելը խաղաղություն է:

Կարդա՛

Բ Թես. 3.16-18

Իսկ ինքը՝ խաղաղության Տերը, ամեն ժամանակ ու ամեն կերպ ձեզ խաղաղություն տա: Բ Թես. 3.16

Վրեժխնդրությունը թե՞ վերապրում

Անցյալ տարի մեծ էկրանների վրա տեսանք ծանոթ ուժեղացող Ջորջ Թերրիի՝ 1915-ի հայոց ցեղասպանության պատմությունը ներկայացնող սքանչելի «Նոստոմը» շարժապատկերը: Նրա պատրաստությունը արժանացավ շատերի գնահատանքին, ոմանք էլ թերագնահատեցին: Սակայն ներկայացված պատմական իրողության հակառակորդները քննադատեցին ու նույնիսկ ամեն ջանք թափեցին արգելք հանդիսանալու նրա նկարահանմանը: Հայերն ու օտարները դիտեցին այս ֆիլմը, և շատերը վկայեցին, որ շատ բան չգիտեին հայոց ցեղասպանության մասին: Ուրիշներն սկսեցին կարգալ հայոց պատմությունը ու մասնավորաբար Օսմանյան պետության կողմից իրագործված 1.5 միլիոնից ավելի հայերի ոճրի մասին:

Կարդա՛ր
Յոռմ. 12. 9-21

Ձեր անձերի համար վրեժխնդիր մի՛ եղեք... «Վրեժխնդրությունն իմն է, և հատուցումը ես եմ տալու», ասում է Տե՛րը: Յոռմ. 12.19

Վերջին մասում բժիշկ Միքայելի ու Աննայի միջև եղած մի երկխոսություն ինձ մեծապես տպավորեց ու հիշեցրեց Աստուծո խոսքը: Երբ Միքայելը իր ամբողջ ընտանիքը կորցրեց ու ականատես եղավ հազարավոր հայերի սպանությանը, նրա սրտում վրոժխնդրություն բորբոքվեց, ու փորձեց վրիժառու լինել: Աննան ասաց. «Մենք վերապրելով մեր վրեժը պիտի լուծենք»: Ու ֆիլմի վերջում տեսնում ենք վերապրող որբերին ու լսում Միքայելի արտասանած խոսքը, որ իրականում Աստուծո շնորհի ու ողորմության համար բարձրացող աղոթք է: Պողոսը Հռոմ. 12-րդ գլխում հորդորում է վրեժխնդրությունը Աստուծոն թողնել. «Կհատուցեմ վրեժխնդրության օրը» (Բ Օր. 32-35): Որպես Քրիստոնյա՝ մեր պարտականությունն է մաքուր կենցաղով շարունակել մեր կյանքն ու պայքարը՝ չարից հրաժարվելով ու բարին ամուր բռնելով:

Աղոթք - Արդա՛ր Աստված, աղոթում ենք՝ մեզ հիշեցրու, որ Դու սիրո և ողորմության Աստվածն ես, ու վրեժխնդրությունը թո՛ղն է ու ոչ թե մերը: Ամեն:

Աստված գիտի մեր ցավն ու վիշտը: Նրա գործն է հատուցումը, իսկ մերը՝ միայն Իրեն վստահելն ու գոյատևելը:

Մոռացութիւն

Կալիֆորնիայի Քարլսբադ շրջանում շտապօգնութեան ծառայութիւնը արագ հասավ՝ օգնելու ավստրալական առողջանութեամբ անգլերեն խոսող, հիշողութեան կորստով տառապող մի կնոջ, որ չէր հիշում, թե ինքն ով է: Չունէր անձնագիր և չէր կարողանում ասել, թե որտեղից էր եկել և հարազատներ ունե՞ր արդէր: Բժիշկները հարկ եղած խնամքը տարան, ու միջազգային տեղեկատվութեան միջոցով հնարավոր եղավ նրա պատմութեանը ծանոթանալ ու վերամիացնել նրան ընտանիքին: Բաբերոնի թագավորը՝ Նաբուգոդոնոսորը, նույնպես կորցրեց իր գիտակցութիւնը: Նրա «մոռացութիւնը» հոգևոր մոռացութիւնն էր: Իրեն տրված թագավորութեան համար իր շահած վարկի պատճառով նա մոռացավ, որ Աստված Թագավորների Թագավորն էր, ու իր ունեցածը Աստծո պարգևն էր: Աստված թագավորի մտածական վիճակը թատերական ներկայացման վերածեց՝ տանելով նրան դաշտերում կենդանիների հետ բնակվելու և արջառների պես բույս ուտելու (Դան. 4.17, 28-30): Վերջապես յոթ տարի հետո Նաբուգոդոնոսորը աչքերը երկինք բարձրացրեց ու հասկացավ, թե ով է ինքը, և ով է տվել իր թագավորութիւնը (Հմ. 32-33): Իր գիտակցութեան վերահաստատումով նա հայտարարեց ու ասաց. «Ես՝ Նաբուգոդոնոսորս, օրհնում եմ, փառավորում և առավել պանծացնում երկնքի արքային» (Հմ. 37): Ինչ վերաբերում է մեզ, ի՞նչ ենք մտածում մեր մասին: Որտեղի՞ց ենք եկել: Քանի որ մենք հակում ունենք մոռացութեան, ո՞ւմ կարող ենք ապավինել՝ բացի Թագավորների Թագավորից: Տերը քաջալերում է մեզ այսօր՝ Իրեն վստահելու, հավատարիմ լինելու ուրիշներին օգնելու համար, անգաղար աղոթելու և տեղի չտալու:

Աղոթք - Յայր, մենք հակամետ ենք մոռանալու, թե ով ենք, որտեղից ենք գալիս և ում ենք պատկանում: Օգնիր մեզ՝ հիշելու, թե Քրիստոսով մենք իմացված, սիրված ու պարգևներով օժտված Քո զավակներն ենք հիմա ու հավիտյան: Ամեն:

Երբ մոռանանք, թե ով ենք մենք, մեր հայրը հոգ կտանի:

Կարդա՛ր Դանիել 4. 28-37

...օրհնում եմ, փառավորում և առավել պանծացնում երկնքի արքային... Դան. 4.34

Այրիի հավատքը

ԱՏ-փրկի օրը վաղ է սկսվում: Գյուղի մյուս բնակիչները շուտով պիտի արթնանան՝ զնայու իրենց աշխատանքին՝ ձգախեղով մշակավայրը: Ջինաստանի Հոնկզուանգ գյուղի բնակիչների եկամտի կարևոր աղբյուրը բուսակաթ կամ խեժ հավաքելն է: Առավելագույն չափով խեժ հավաքելու համար ծառերը պիտի ցնցվեն առավոտ շատ կանուխ՝ արևածագից առաջ: ԱՏ-փրկն այդ ձգախեժ հավաքողների մեջ պիտի լինի, սակայն նա նախ Աստծո հետ է ժամանակ անցկացնում:

ԱՏ-փրկի հայրը, ամուսինը ու որդին մահացել էին: Նա իր հարսի հետ գործելով հող էր տանում իր տարեց մորն ու երկու թոռնիկներին: Նրա պատմությունը ինձ հիշեցնում է մի ուրիշ այրիի Աստվածաշնչի մեջ, որ Աստծուն վստահեց: Այրու ամուսինը մահացել էր ու իրեն պարտքերի մեջ թողել (Դ Թագ. 4.1): Իր նեղությունն մեջ նա Աստծուն փարվեց օգնություն համար՝ Նրա ծառային՝ Եղիսեեին դառնալով: Նա հավատաց, որ Աստված հոգատար է ու կարող է մի բան անել իր վիճակի համար: Ու Աստված արեց. նա հրաշագործությունով նրա կարիքները հոգաց (հմ. 5-6): Այս նույն Աստված ԱՏ-փրկի կարիքներն էլ հոգաց՝ ոչ հրաշագործությամբ, այլ նրա ձեռքերի միջոցով, երկրի բարիքներով ու մարդկանց տված նվերներով:

Թեև կյանքը կարող է զանազան տեսակի պահաջներ պարտադրել մեզ, սակայն մենք Աստծուց ենք մեր գործությունը ստանում: Մենք կարող ենք մեր բոլոր հոգսերը Նրան վստահել, անել այն, ինչ կարող ենք, ու թույլ տալ, որ նա մեր ամեն պարագայում իր արածներով մեզ սքանչացնի:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քո համբերության համար, երբ ես իմ ունեցածներին եմ վստահում ու Քեզ դիմում միայն որպես վերջին աղբյուր: Սովորեցրու ինձ Քո օգնությունը խնդրելու որևէ բան անելուց առաջ: Ամեն:

Մենք կարող ենք մեր ուժերից վեր հանգամանքների դիմագրավել, բայց ոչ Աստծո աղբյուրներից:

Կարդա՛ Դ Թագ. 4. 1-7

Որովիտես այդ ամենը հեթանոսներն են փնտրում. որովիտես ձեր երկնավոր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք են ձեզ:

Մատթ. 6.32

Իմաստության կոչը

Տանոթ թղթակից ու ընկերաբան քննադատ Մալքոմ Մագ-գերիդջը վաթսուև տարեկանում հավատքի եկավ: Իր յոթանասուևհինգերորդ տարեդարձին նա քսանհինգ կետ մատնանշեց կյանքի մասին: Այդ կետերից մեկն ասում է. «Երբեք հարուստ մարդու չհանդիպեցի, որ ուրախ էր, սակայն քիչ հանդիպեցի աղքատ մարդու, որ ուզեր հարստանալ»:

Մեզնից շատերը պիտի համաձայնեն, որ փողը մեզ չի կարող ուրախացնել, սակայն մենք ցանկանում ենք ավելին ունենալ՝ ավելի վստահ լինելու:

Սողոմոն թագավորի հարստությունը արժևորված է այսօրվա հաշվով ավելի քան երկու եռիլիոն ամերիկյան դոլար: Հակառակ նրան, որ նա շատ հարուստ էր, գիտեր, որ դրամը իր սահմանափակումները ուներ: Ծրդ առակը իր փորձառություն վրա է հիմնված և առաջարկում է. «Ձեզ եմ աղաչում, ո՛վ մարդիկ, և մարդու որդիներին եմ ես բաշխում իմ խոսքը... Քանզի իմ կորուկրդը միշտ ճշմարտություն է բարբառում» (Հմ. 4-7): «Խրա՛տ ձեռք բերեք և ոչ թե արծաթ, գիտություն, քան թե ընտիր ոսկի: Իմաստությունը լավ է անգին քարերից, և թանկարժեք ոչ մի բան չի հավասարվի նրան» (Հմ. 10-11):

Իմաստությունն ասում է. «Լավ է ի՛նձ ունենալ, քան ոսկի ու անգին քարեր, ունենալ ի՛մ արդյունքը, քան ոսկի և ընտիր արծաթ: Ես քայլում եմ արդարություն ճանապարհներով և շրջում արդարության շավիղներով, որ բարիք բաշխեմ իմ սիրելիներին և նրանց գանձարանները լցնեմ բարիքներով» (Հմ 19-21):

Անշուշտ կան ճշմարիտ հարստություններ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո իմաստության հարստության համար, որոնք մեր քայլերն են ուղղորդում: Ամեն:

Աստված առաջարկում է իմաստության հարստությունները բոլոր նրանց, որոնք Իրեն են խնդրում ու Իրեն հետևում:

Կարդա՛ր Առակներ 8.10-21

Իմաստությունը լավ է անգին քարերից, և թանկարժեք ոչ մի բան չի հավասարվի նրան: Առ. 8.11

Աշխատանքի վարժվածություն

Երբ զավակիս ուսուցիչը խնդրեց ինձնից իրենց բանակումին ծառայել որպես հոգատար, վարանեցի: Ինչպե՞ս կարող էի օրինակ դառնալ, երբ սխալներն անցյալում աղտոտել էին ինձ, երբ դեռ պայքարում էի, սայթաքում ու հին վատ սովորություններս շարունակում: Աստված օգնեց, որ կարողանամ որդուս մեծացնել, սակայն հաճախ կասկածում էի, թե կարո՞ղ էր ինձ գործածել ու՝ րիչներին ծառայելու համար:

Երբեմն չեմ անդրադառնում, թե Աստված՝ միակ կատարյալը, որ կարողանում է սրտեր ու կյանքեր փոխել, կարող է նաև մեզ բարեփոխել ժամանակի ընթացքում: Հետո Սուրբ Հոգին ինձ հիշեցնում է, թե ինչպես Պողոսը քաջալերեց Տիմոթեոսին՝ հիշելու իր աշխատանքի վարժվածությունը, հավատքը պահելն ու իրեն տրված պարգևները գործածելը (Բ Տիմ. 1.6): Տիմոթեոսը կարող էր քաջ լինել, որովհետև Աստված՝ իր գործության աղբյուրը, կարող է օգնել իրեն, որ սիրով ու խոհեմությամբ շարունակի աճել ու ծառայել իր անմիջական շրջանակի մեջ եղողներին (Հմ. 7): Քրիստոսը մեզ փրկում է ու գորացնում, որպեսզի իրեն պատվենք մեր կյանքերով, ոչ թե նրա համար, որ մենք առանձնահատուկ ենք, այլ որովհետև յուրաքանչյուրս իր ընտանիքի կարևոր անդամն ենք (Հմ. 9): Մենք կարող ենք վստահությամբ գործել, երբ գիտենք, թե մեր դերը պարզապես Աստծուն ու մեր շուրջիներին սիրելն է: Քրիստոսի դերը մեզ փրկելն է ու մեզ նպատակ տալը, որ մեր աշխարհի սահմանափակ տեսողությունից այն կողմ է: Մինչ հետևում ենք Հիսուսին ամեն օր, նա բարեփոխում է մեզ ու գործածում է ուրիշներին քաջալերելու համար՝ իր սերը ու ճշմարտությունը բաժանելով՝ ուր որ ուղարկի:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ, որ հաստատում ես, թե մենք կարող ենք ամբողջությամբ Քեզ վստահել, մինչ ուրախությամբ, վստահությամբ ու քաջաբար Քեզ բաժանում ենք: Ամեն:

Կարդա՛

Բ Տիմոթեոս 1.6-14

Որին ես քարոզիչ և առաքյալ կարգվեցի ու հեթանոսների ուսուցիչ: Բ Տիմ. 1.11

Մեր գործության աղբյուրը ճանաչելը վստահություն է տալիս մեր բաժինը կատարելու որպես Աստծո ծառաներ:

Երկրորդ նայվածք Յիսուսին

Եթե երբևէ հավատարիմ անձ է եղել, դա Եղբայր Արդարն է: Նա նվիրված էր իր ամուսնությունը, հովվական աշխատանքին ու ամեն կիրակի իր դիրքին մնաց՝ որպես մեր եկեղեցու առաջնորդն ու ղեկավարը: Վերջերս այցելեցի իմ մանկության հաճախած եկեղեցին ու տեսա, թե դաշնամուրի վրա տակավին մնում էր փոքր զանգակը, որ Եղբայր Արդարն էր հնչեցնում՝ մեզ տեղեկացնելու, թե Աստվածաշնչի դասաժամը ավարտվելու վրա էր: Զանգակը ժամանակի քննությանն էր դիմացել: Հակառակ նրան, որ Եղբայր Արդարը տարիներ ի վեր Տիրոջ հետ է, իր հավատարմության ավանդը դեռ շարունակում է մնալ: Եբրայեցիա Յրդզ գլուխը ընթերցողների ուշադրությանն է հանձնում հավատարիմ ծառային ու Մարդուն: Թեև Մովսեսի հավատարմությունը որպես Աստծո «ծառա» անուրանալի է, սակայն Հիսուսը այն կենդանի օրինակն է, որի վրա կենտրոնանալ պիտի սովորեն բոլոր հավատացյալները: «Ուստի, սո՛ւրբ եղբայրներ... նայեցե՛ք Քրիստոս Հիսուսին» (Հմ. 1): Այդպես էր քաջալերանքը բոլոր նրանց, որոնք փորձություններ էին դիմազբալում (2:18): Նրանց ավանդը կարող էր առաջ գալ միմիայն Հիսուսին՝ Հավատարմին հետևելով:

Ի՞նչ ես անում, երբ փորձության սաստիկ հովերը գոռում են շուրջդ: Երբ դու հոգնած ու սպառված ես և ուզում ես տեղի տալ: Հատվածը մեզ հրավիրում է, ինչպես մի տարբերակում ենք կարգում. «Նայեցե՛ք Քրիստոս Հիսուսին» (3:1): Դարձյալ նայիր Նրան. դարձյալ ու դարձյալ: Մինչ վերաքննում ենք Հիսուսին, իր մեջ տեսնում ենք վստահելի Աստծո Որդուն, որ մեզ քաջություն է տալիս՝ ապրելու իր ընտանիքի մեջ:

Աղոթք - Հայր, Քո Հոգու միջոցով մեզ զորացրու, որ քաջաբար սիրենք, պատվենք ու հետևենք մեր Տեր Յիսուս Քրիստոսին: Ամեն:

Յիսուսին նայելը քաջություն է տալիս մեր կյանքի մեջ եղած բոլոր մարտահրավերներին դիմագրավելու:

Կարդա՛ր Եբրայեցիներ 3.1-6

Բայց Քրիստոսը, իբրև որդի է իր տան մեջ, որի տունը մենք ենք, եթե համարձակությունն ու հույսի պարծանքը մինչև վերջ հաստատ բռնենք: Եբր. 3.6

Շղթաները փշրել

Խորապես զգացվեցինք, երբ այցելեցինք Ջանգիբարի Սթոուն քաղաքի՝ Քրիստոսի եկեղեցու տաճար, որ կառուցված է Արևելյան Աֆրիկայի գերինների նախկինում ամենամեծ շուկայի տեղում: Տաճարի ճարտարապետը Ֆիզիկական խորհրդանիշով ցանկացել է ցույց տալ, թե ինչպես կարող է Ավետարանը փշրել գերության շղթաները: Այդ վայրը այլևս չպիտի լիներ չար ու գազանաբարո առարքների վայր, այլ Աստծո մարմնացյալ շնորհի վայրը:

Նրանք, որ կառուցեցին տաճարը, ուղեցին ցույց տալ, թե ինչպես Հիսուսի մահը խաչի վրա շնորհում է ազատություն մեղքից, որի մասին Պողոս առաքյալը խոսում է Եփեսոսի եկեղեցու հավատացյալներին ուղղված իր նամակի մեջ. «...Փրկությունը ունենք նրա արյունով...» (Եփ. 1.7): Այստեղ գործածված ազատություն բառը ցույց է տալիս Հին Կտակարանի հասկացողությունը շուկայի մասին, ուր մեկը կարող է զնել մարդուն, ինչպես ցանկացած առարկա: Հիսուսը զնում է մեղքի գերի դարձած ու սխալ գործերի մեջ թաղված մի կյանք:

Այս նամակի սկզբում Պողոսը իր գրած խոսքերի մեջ (հմ. 3-14) հրճվում է Քրիստոսով եղած ազատության համար: Նա մատնանշում է փառաբանության խոսքերի երկար մի շարք, Աստծո արած շնորհի մասին մեզ համար Հիսուսի մահվան միջոցով, որ մեզ ազատ է արձակում մեղքի դատապարտությունից: Այլևս կարիք չունենք մեղքին գերի լինելու, որովհետև մենք ազատ ենք արձակված՝ Աստծո ու Նրա փառքի համար ապրելու:

Աղոթք - Տեր Աստված, Քո Որդու մահվան միջոցով մեզ հավիտենական կյանք ես տվել: Օգնիր, որ այս շնորհի պարգևը ուրիշների հետ բաժանեն այսօր: Ամեն:

Հիսուսը մեզ ազատում է մեղքի գերությունից:

Կարդա՛ Եփես. 1.3-14

Որով փրկությունը ունենք նրա արյունով՝ մեղքերի թողությունն իր շնորհի մեծության չափով: Եփես. 1.7

Անձկությամբ սպասել

Ամեն տարի մայիսի 1-ի վաղ առավոտյան Անգլիայի Օքսֆորդ քաղաքի մեջ մեծ բազմություն է հավաքվում՝ դարնան եղանակը դիմավորելու: Առավոտ ժամը վեցին Մագդալեն քոլեջի երգչախումբը երգում է քոլեջի աշտարակի կատարից: Հազարավոր մարդիկ անձկությամբ սպասում են գիշերվա խավարի բացվելուն՝ երգերով ու զանգակների ղողանջներով:

Ես էլ այդ զվարճացողների նման հաճախ իմ աղոթքների պատասխանին կամ Տիրոջ առաջնորդությունն եմ սպասում:

Թեև ճշգրիտ կերպով չգիտեմ, թե իմ սպասման ժամանակը երբ պիտի ավարտվի, սակայն սովորում եմ ակնկալությամբ սպասել: 129-րդ Սաղմոսի մեջ սաղմոսերգուն գրում է խորապես ճնշման տակ եղած իր վիճակի մասին, որոնք թվում են խավարազույն գիշերների նման: Իր դիմագրաված պարագաներում նա նախընտրում է Աստծուն վստահել ու զգաստ լինել՝ պատենչի վրա կանգնած պահակի նման՝ հայտարարելու արշալույսի բացվելը. «Առավոտյան պահից մինչև երեկո, առավոտյան պահից Իսրայելը հույսը դրեց Տիրոջ վրա» (Հմ. 6):

Խավարի միջից ծագող Աստծո հավատարմության ցանկությունները սպասելը հույս է ներշնչում սաղմոսերգուի հարատևելուն իր կրած տառապանքների մեջ: Սուրբ Խոսքի մեջ գտնված Աստծո խոստումների վրա հիմնվելով՝ այդ հույսը թույլ է տալիս նրան շարունակելու իր սպասումը, նույնիսկ երբ դեռ չի տեսել լույսի առաջին շողերը:

Քաջալերվիր, եթե խավար գիշերվա մեջ ես: Արշալույսը մոտ է. լինի այս կյանքում կամ երկնքում: Նա հավատարիմ պիտի լինի:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ լուսավորիր իմ խավար կյանքը: Աչքերս բաց՝ Քեզ տեսնելու ու Քեզ վստահելու համար: Հայր, շնորհակալ եմ, որ հավատարիմ Աստված ես: Ամեն:

Կարելի է Աստծուն վստահել լույսի ու խավարի մեջ:

Կարդա՛ր

Սաղմոս 129. 1-6

Հոգիս հույսը դրեց Տիրոջ վրա: Առավոտյան պահից մինչև երեկո, առավոտյան պահից Իսրայելը հույսը դրեց Տիրոջ վրա:

Սաղմ. 129.6

Աստծուն ցանկանալ

Մի օր աղջիկս մեկ տարեկան թոռնիկիս հետ մեր տուն էր եկել: Պատրաստվում էի տնից դուրս գալ: Հազիվ սենյակից դուրս էի եկել, երբ թոռնիկս սկսեց լալ: Երկու անգամ այս բանը պատահեց, և երկու անգամն էլ ներս վերադարձա ու մի փոքր ժամանակ անցկացրի նրա հետ: Երբ երրորդ անգամը ուղղվեցի դեպի դուռը, իր փոքրիկ շրթունքները սկսեցին նորից ծռմուկել: Այդ պահին աղջիկս ասաց.

«Հա՛յր, ինչո՞ւ հետդ չես տանում»:

Ցանկացած պապիկ քեզ կարող է ասել, թե ինչ եղավ հետո: Թոռնիկս ինձ հետ դուրս եկավ պարզապես այն բանի համար, որ իրեն սիրում եմ:

Որքա՛ն լավ է իմանալ, թե Աստծո հանդեպ մեր սրտի տենչանքները նույնպես սիրով են դիմավորվում: Աստվածաշունչը մեզ վստահեցնում է, թե կարող ենք «ճանաչել սերն ու հավատալ այն սիրուն, որ Աստված ունի մեր նկատմամբ» (Ա Հովհ. 4.16): Աստված մեզ չի սիրում մեր արած կամ չարած բաների համար: Նրա սերը հիմնված չէ մեր արժանի լինելու վրա, այլ իր բարության ու հավատարմության: Երբ մեր շուրջ գտնվող աշխարհը սիրող ու ազնիվ չէ, մենք կարող ենք Աստծո անփոփոխ սիրուն ապավինել՝ որպես մեր հույսի ու խաղաղության աղբյուրի:

Մեր երկնավոր Հոր սերը մեզ հայտնվել է իր Որդու ու Հոգու ընծայումով: Որքա՛ն մխիթարական է այն վստահությունը, թե Աստված մեզ սիրում է այնպիսի սիրով, որ բնավ չի սպառվում:

Աղոթք - Սիրո՞ղ Տեր, շնորհակալ եմ խաչի վրա փաստված կարեկցությանդ համար: Խնդրում եմ օգնիր ինձ, որ Քեզ սիրեմ ու Քեզ հնազանդվեմ այսօր: Ամեն:

Աստված ցանկանում է, որ մենք իրեն տենչանք:

Կարդա՛ր
Ա Յովհ. 4.13-16

Սիրտս ու մարմինս
ցնծում եմ կենդանի
Աստծով: Սաղմ.
83.3

Փոփոխություն պատկերում

Իմ քաղաքը սաստիկ ձմեռ անցկացրեց, որի նմանը չէր եղել վերջին երեսուն տարիների ընթացքում: Ժամերով ձյունը թիով մաքրելուց հետո, երբ հոգնած ու ապարդյուն ջանքի զգացումներով տուն մտա ու կոշիկներս հանեցի, մկաններիս մեջ սաստիկ ցավ զգացի: Սակայն վառարանի ու զավակներիս ջերմ ողջույնով տրամադրությունս փոխվեց: Տանս մեջ ապաստարան գտնելով՝ պատուհանից դուրս նայելիս հեռապատկերը բոլորովին փոխվեց: Փոխանակ ավելի աշխատանք տանելու՝ ըմբոշխնեցի ծառերի սառած ճյուղերը և ձմեռային ձյունապատ գեղեցիկ բնությունը:

Տեսնում եմ նման, սակայն շատ ավելի կծող վերադարձ Ասափի պարագային, երբ կարդում եմ 72-րդ Սաղմոսի մեջ իր արձանագրած խոսքերը: Սաղմոսի սկիզբը նա ողբում է աշխարհի կարգը, և թե ինչպե՛ս են ամբարիշտները հաջողություն գտնում: Նա կասկածում է մարդկանցից տարբեր լինելու արժեքին և ուրիշների բարեքի համար ապրելուն (Հմ. 13): Սակայն երբ նա Աստծո Տունն է մտնում, իր տեսակետը փոխվում է (Հմ. 16-17). նա հիշում է, թե Աստված ինչպես վարձահատույց պիտի լինի բոլոր նրանց, որոնք չարություն են անում: Եվ ավելի կարևորը, թե Աստծուն մոտենալը բարիք է (Հմ. 28): Երբ սարսուռում ենք աշխարհի անվերջ դժվարություններից, կարող ենք Աստծո տաճարը մտնել աղոթքով ու ջերմանալ մեր կյանքն ու հեռապատկերը փոխող ճշմարտությունով: Վստահ լինենք, որ Նրա դատաստանները շատ ավելի լավ են, քան մեր տեսակետները: Հակառակ այն բանի, որ մեր պարագաները չեն փոխվում, մեր հեռանկարը կարող է փոխվել:

Աղոթք - Տե՛ր, ընդունում եմ, որ շուտ եմ հուսահատվում իմ հայտնված հանգամանքներում: Օգնիր, որ կարողանամ տեսնել այնպես, ինչպես Դու ես տեսնում: Ամեն:

Աստված մեզ շիտակ հեռապատկեր է տալիս:

Կարդա՛

Սաղմոս 72.12-28

Բայց հասկացա, որ սա ևս դժվար է ինձ համար, մինչև մտնեմ Աստծու սրբարանը և իմանամ նրանց վախճանը: Սաղմ. 72.16-17

Սկիզբից առաջ

Կիրականորյա դպրոցի աշակերտները հաճախ հարցնում են հետևյալը, երբ խոսում ենք Աստծո հավիտենական բնության մասին: «Սակայն եթե Աստված սկիզբ ու վերջ չունի և միշտ գոյություն է ունեցել, ի՞նչ էր անում մեզ ստեղծելուց առաջ»: Ես հաճախ այդ հարցին պատասխանում էի՝ ասելով, թե դա մի քիչ խորհրդավոր է: Սակայն վերջերս հասկացա, թե Աստվածաշունչը պատասխան ունի այս հարցին:

Երբ Հիսուսն աղոթում է Հորը Հովհաննու 17-ի մեջ, Նա ասում է. «Հայր ... աշխարհը հիմնելուց առաջ ինձ սիրեցիր» (Հմ. 24): Այս Աստվածը, որ մեզ հայտնվեց Հիսուսի միջոցով, աշխարհը ստեղծելուց կամ նրա վրա իշխելուց առաջ, Սուրբ Հոգու միջոցով Իր զավակին սիրող Հայր էր: Երբ Հիսուսը մկրտվեց, Աստված Իր Հոգին ուղարկեց աղավնիի պես ու ասաց. «Դա է իմ սիրելի Որդին՝ որին ես հավանեցի» (Մատթ. 3:17): Աստծո ինքնության ամենից հիմնական երևույթը այս ժայթքող ու կյանք տվող սերն է:

Ի՞նչ հիանալի ու քաջալերական ճշմարտություն է սա Աստծո մասին: Երկուստեք ցույց տրված ու արտահայտված այս սերը Երրորդության յուրաքանչյուր անդամի կողմից - Հայր, Որդի և Սուրբ Հոգի - Աստծո բնույթը հասկանալու բանալին է: Ի՞նչ էր անում Աստված ժամանակի սկզբից առաջ: Հոգու միջոցով Իր Որդուն էր սիրում: Աստված սեր է (Ա Հովհ. 4:8), ու այս պատկերը օգնում է, որ սկսենք հասկանալ, թե ինչ է նշանակում այդ բանը:

Աղոթք - Աստված, շնորհակալ եմ Քո հորդառատ ու անձնատուր սիրո համար: Ամեն:

Մենք ստեղծված ենք սիրող ու հաղորդակցվող Աստծո պատկերով:

Կարդա՛ր
Մատթեոս 3.13-17

...աշխարհը հիմնելուց առաջ ինձ սիրեցիր:
Մատթ. 17.24

Մոտ պահել

Առավոտները աղջկաս դպրոց տանելուց հետո մեկ մղոն քայլելը ինձ առիթ է տալիս Աստվածաշնչից մի քանի համարներ սովորել: Այդ մի քանի բոլորների ընթացքում Աստծո խոսքը մտաբերելուց հետո հաճախ հիշում եմ դրանք օրվա ընթացքում ու մխիթարություն և իմաստություն ստանում:

Մինչ Մովսեսը պատրաստում էր ժողովրդին խոստացյալ երկիրը մտնելու, թախանձեց նրանց, որ Աստծո կանոններն ու պատվիրանները պահեն (Բ Օր. 6.1-2): Նա նաև հորդորեց, որ դրանք իրենց սրտերում պահեն աճելու համար ու կրկնելով սովորեցնեն իրենց որդիներին (Հմ. 6-7): Նա նույնիսկ ասաց, թե դրանք կապեն իրենց ձեռքերին ու որպես ճակատնոց իրենց աչքերի մեջտեղում դնեն (Հմ. 8): Չուզեց, որ նրանք Աստծո ցուցումները մոռանան ու ապրեն որպես Տիրոջը պատվող ժողովուրդ ու վայելեն Նրա օրհնությունները:

Դու ինչպե՞ս ես ուզում ընկալել Աստծո խոսքերը: Աստվածաշնչից մի համար մի տեղ արձանագրելը գաղափար է, և ամեն անգամ որ ձեռքերդ լվաս կամ ջուր խմես, կարգա խոսքերը ու մտքիդ մեջ պահիր: Կամ էլ քնելուց առաջ նկատի ունեցիր Աստվածաշնչից կարճ հատված՝ որպես օրվա վերջին գործ: Աստծո խոսքը սրտին մոտ պահելու զանազան ձևեր կան:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք քո խոսքի համար, որ մեր կյանքերի աղբյուրն է: Օգնիր մեզ, որ այսօր կարդանք ու լավ ըմբռնենք այն: Ամեն:

Աստծո խոսքով շրջապատվիր:

Կարդա՛ր
Երկ. Օրենք 6. 1-9

Դրանք որպես
նշան կկապես քո
ձեռքին, որ մնան
անշարժ քո աչքե-
րի առջև:

Երկ. Օր. 6.8

Խոստումների վրա կանգուն

Բարեկամիս եղբայրը (երբ դեռ փոքր էին) վստահեցրեց իր քրոջը, թե հովանոցը բավարար ուժ ունի իրեն վեր պահելու, եթե միայն «հավատա»։ Ուստի նա, «հավատքով» հովանոցը բռնած, ախոռի տանիքից վար ցատկեց ու իր ուժը կորցրեց փոքր ցնցում ստանալով։ Ինչ որ Աստված խոստացել է, պիտի կատարի։ Սակայն մենք վստահ պիտի լինենք, թե Աստծո Խոսքի վրա հաստատ ենք, եթե ուզում ենք տեսնել մի խոստումի իրականացում, ու այն ժամանակ վստահ պիտի լինենք, թե Աստված պիտի կատարի կամ տա այն, ինչ որ խոստացել է։ Հավատքը որևէ գորուծյուն չունի ինքն իր մեջ։ Նրա գորուծյունը երևում է, երբ այն կանգուն է Աստծուց տրված հստակ ու հաստատ խոստումի վրա։ Դրանից զատ որևէ բան լոկ բաղձալի մտածում է։

Այստեղ տեսնում ենք պարագա, ուր Աստված խոստանում է՝ ասելով. «...Ինչ էլ որ կամենաք, կխնդրեք, ու կլինի ձեզ։ Իմ Հայրը Նրանով կփառավորվի, որ շատ պտուղ բերեք և իմ աշակերտները լինեք» (Հովհ. 15.7-8)։ Սակայն սա խոստում չէ, որ Աստված մեր ամեն աղոթքին պիտի պատասխանի, այլ խոստում է, որ Նա պիտի պատասխանի մեր արդարացման համար։ Պողոսը սա կոչում է «Հոգու պտուղ» (Գաղ. 5.22)։ Երբ մենք անոթի ու ծարավ լինենք սրբության ու Աստծուց խնդրենք, Նա պիտի սկսի մեզ գոհացնել։ Հոգևոր աճումը մարդկային աճման նման ժամանակի է կարոտում ու աստիճանական է։ Բնավ տեղի չպիտի տանք։ Շարունակ պիտի խնդրենք, որ Աստված մեզ սրբացնի։ Իր ժամանակի ու իր կամքի համաձայն «պիտի կատարվի մեզ համար»։ Աստված չի տալիս խոստումներ, որոնք չի կարող պահել։

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք Խոսքիդ մեջ տված Քո բոլոր խոստումների համար։ Նաև շնորհակալ եմք Սուրբ Զոգու համար, որ մեզ խրատում է։ Ամեն։

Իր խոստումները պահող Աստված ունենք։

Կարդա՛ր
Յովհաննես 15. 5-8
...իմ էլ որ կամենաք, կխնդրեք, ու կլինի ձեզ։
Յովհ. 15.7

Աստծո մատների դրոշմը

Լայկոն Սթիվենսը սիրում էր իր եղբոր՝ Նիքի հետ լեռ մազլցել: Նրանք փորձառու մազլցողներ էին, ու երկուսն էլ Հյուսիսային Ամերիկայի ամենաբարձր՝ Մըք-Քենլի Դենալի լեռան գագաթին էին հասել: Հետո, 2008-ին, ձնասահքի պատճառով խորտակվելով Կոլորադոյի լեռան վրա, Նիքը ծանր վիրավորվում է, ու քսան տարեկան Լայկոնը մահանում է: Այնուհետև, երբ Նիքը գտնում է իր քրոջ օրագիրը պայուսակներից մեկի մեջ, մեծապես քաջակերվում է նրա բովանդակությամբ: Օրագիրը լեցուն էր խորհրդածություններով, աղոթքներով ու Աստծուն տրված փառաբանություններով: Այդ արձանագրություններից մեկն ասում է. «Ես արվեստի գործ եմ՝ ստորագրված Աստծո գրիչով: Սակայն Նա տակավին չի ավարտել իր գործը. իրականում Նա նոր է սկսել: Ինձ վրա ունեմ Աստծո մատների դրոշմը: Ինձ նման ուրիշ մեկը չպիտի լինի: Ես գործ ունեմ կատարելիք այս կյանքում, որ ոչ ոք չի կարող»:

Թեև Լայկոնը ֆիզիկապես ներկայ չէ աշխարհի վրա, սակայն իր կյանքի ավանդի ու օրագրի միջոցով ներշնչում է ու մարտահրավեր տալիս մեզ: Յուրաքանչյուրս «արվեստի գործ եմ» Աստծո ստորագրությունով», որովհետև մենք Նրա պատկերով ենք ստեղծված (Ծննդ. 1.26): Ինչպես Պողոսն է ասում. «... Նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար...» (Եփ. 2.10): Փառք Աստծո, որ մեզնից յուրաքանչյուրին գործածում է Իրեն հատուկ ձևով ու իր ժամանակի մեջ, որպեսզի մենք կարողանանք ուրիշներին օգնել:

Աղոթք - Տե՛ր, ինչպե՞ս ես ուզում ինձ գործածել: Ես պատրաստ եմ: Ամեն:

Յուրաքանչյուր անհատ Աստծո սիրո ձևակերպումի հատուկ արտահայտություն է:

Կարդա՛ Եփեսացիներ 2.1-10

Որովհետև նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանցով ընթանանք: Եփես. 2.10

Աստծո առաջնորդության պատասխանը

2015-ի օգոստոս ամսին, երբ պատրաստվում էի գնալ մեր Զտնից մի քանի ժամ հեռու գտնվող համալսարանը որպես ուսանող, անդրադարձա, որ շատ հնարավոր է, որ տուն չվերադառնայի շրջանավարտ լինելուց հետո: Ու սկսեցի արագ մտածել: Ինչպե՞ս կարող եմ թողնել մեր տունը, մեր ընտանիքը, մեր եկեղեցին: Ի՞նչ պիտի լինի, եթե հետո Աստված ինձ ուրիշ նահանգ կամ երկիր առաջնորդի: Մովսեսի օրինակի նման, երբ Աստված պատվիրեց, որ գնա «...փարավոնի մոտ, ու խորայելացիներին հանի եգիպտացիների երկրից» (Ել. 3.10), ես էլ վախենալով չէի ուզում թողնել իմ ապահով միջավայրը: Այո՛, թեև Մովսեսը հնազանդվեց ու Աստծուն հետևեց, սակայն ոչ առանց Նրան հարցաքննելու, խնդրելով, որ մի ուրիշը գնա իր փոխարեն (Հմ. 11-13, 4.13):

Կարդա՛ր Ելք 3.7-14

Եվ նրանք, իսկույն իրենց ուռվանները թողած, նրա հոտից գնացին: Մատթ. 4.20

Մովսեսի օրինակի մեջ մենք տեսնում ենք, թե ինչ պիտի անենք, երբ հստակ կոչ ենք ստանում: Մենք կարող ենք փորձել աշակերտների նման լինել: Երբ Հիսուսը կանչեց նրանց, նրանք ամեն բան թողեցին ու Իր ետևից գնացին (Մատթ. 4.20-22, Ղուկ. 5.28): Վախենալը բնական է, սակայն մենք կարող ենք Աստծո ծրագրին վստահել: Տակավին դժվար է տնից շատ հեռու լինել: Սակայն երբ հարատև Աստծուն փնտրեմ, Նա դռներ կբացի ինձ համար, որոնք հաստատում են, թե ուր պիտի լինեմ:

Երբ մեր ապահով միջավայրից դուրս առաջնորդվենք, մենք կարող ենք գնալ ակամա՝ Մովսեսի նման և կամ աշակերտների նման հոժարակամ, որոնք հետևեցին Հիսուսին, ուր որ առաջնորդեց իրենց: Շատ անգամներ դա անել նշանակում է մեր հանգիստ կյանքը հարյուրավոր կամ հազարավոր մղոններ մեր ետևում թողնելով ապրել: Սակայն որքան էլ դժվար թվա, արժե Տեր Հիսուսին հետևել:

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ կարողանամ քեզ հետևել, ուր որ ինձ տանես: Ամեն:

Մենք հրավիրված չենք հանգիստ լինելու:

Ետ չդառնալու կետը

Մովորական գետ անցնելու նման պարզ բան չէր: Օրենքով ոչ մի հռոմեացի զորավար չէր կարող զինյալ բանակ առաջնորդել դեպի Հռոմ: Հետևաբար, երբ Ն. Ք. 49 թ. Հուլիոս Կեսարի 13-րդ լեգեոնի Ռուբիկոն գետը կտրելով Իտալիա մտնելը դավաճանություն նկատվեց, Կեսարի այս արարքը երկար տարիների ներքին քաղաքացիական պատերազմի պատճառ հանդիսացավ, մինչև որ Հռոմի այս հզոր զորավարը դարձավ մեծ կառավարիչ: Այսօր տակավին «Ռուբիկոնը անցնելը» փոխաբերական իմաստն է «ետ չդառնալու կետը» խոսքի:

Երբեմն մենք էլ կարող ենք անցնել մեր հարաբերությունների «Ռուբիկոնը» ուրիշներին ասած մեր խոսքերով: Արտասանված խոսքերը չի կարելի ետ առնել: Երբ այդ խոսքերն ու արտահայտությունները մեր բերաններից դուրս են գալիս, նրանք կամ օգտակար են դառնում և կամ էլ վնաս հասցնում ու այն զգացումը տալիս, թե ետդարձ չկա Կեսարի՝ Հռոմի վրա կատարած հարձակումի նման: Հակոբոսը խոսքերի այլ մի պատկեր տվեց, երբ ասաց. «Լեզուն էլ կրակ է՝ մի անիրավության աշխարհ: Լեզուն մեր անդամների մեջ այնպես է դրված, որ ամբողջ մարմինն ապականում է և մեր գոյություն չըջանը կրակով վառում է, և ինքը գեհենից բորբոքված է» (Հակ. 3.6): Երբ խորհում ենք, թե անցել ենք «Ռուբիկոնը» մեկի հետ, կարող ենք նրա ու Աստծո ներդրամությունը խնդրել: Եվ նույնիսկ ավելի լավ կլինի ամեն օր Աստծո Հոգուն դիմել՝ լսելով Պողոսի մարտահրավերը, որ ասում է. «Ձեր խոսքն ամեն ժամանակ թող շնորհով... լինի» (Կող. 4.6):

Աղոթք - Տե՛ր, հսկիր սրտիս ու խոսքերիս: Թող որ արտասանեմ միայն այն բառերը, որոնք Քեզ հաճելի են ու բժշկություն են պարգևում ուրիշներին: Ամեն:

Երբ խոսքերը գենքեր դառնան, մեր հարաբերությունները շուտով կորստի կմատնվեն:

Կարդա՛ր Հակոբոս 3.1-12

Լեզուն էլ կրակ է՝
մի անիրավության
աշխարհ: Լեզուն
մեր անդամների
մեջ այնպես է դր-
ված, որ ամբողջ
մարմինն ապակա-
նում է... Հակ. 3.6

Հեռու տեղ գնալ

Էմի Կարլմայքլը (1867-1951) ծանոթ է Հնդկաստանի մեջ որ-բացած աղջիկներ ազատելու ու նրանց նոր կյանք տալու գործով: Իր այս սպառիչ գործի մեջ կային ժամանակներ, որ նա կոչում էր «տեսիլքի պահեր»: «Ոսկի լուսնի լույս տակ» գրքի մեջ նա գրում է. «Խճողված օրվա մեջ մեզ տրված է հպանցիկ ակնարկ «հեռավոր երկրի» մասին, ու մենք ձերբակալված հաստատ կանգնում ենք ճանապարհի վրա»:

Եսայի մարգարեն խոսում է այն ժամանակի մասին, երբ Աստծո ապստամբ ժողովուրդը Իրեն պիտի վերադառնա: «Դուք տեսնելու եք թագավորին իր փառքի մեջ, ձեր աչքերը հեռվից դիտելու են երկիրը» (Ես. 33.17): Տեսնել այս «հեռավոր երկիրը» նշանակում է ներկայի անմիջական պարագաներից բարձրանալ ու հավիտենական հեռանկար ունենալ: Դժվար պահերին Տերը մեզ կարողություն է պարգևում՝ տեսնելու մեր կյանքերը Իր տեսանկյունից ու հույսով լցվելու: «Տերն է մեր դատավորը է, Տերն է մեր իշխանը, Տերն է մեր թագավորը... Նա է փրկելու մեզ» (Հմ. 22):

Ամեն օր մենք ընտրություն ունենք հուսալքված ցած նայելու և կամ մեր աչքերը վեր բարձրացնելու ու տեսնելու «հեռավոր երկիրը» ու մեր վեհափառ Տիրոջը (Հմ. 21): Էմի Կարլմայքլը հիսուն տարուց ավելի անցկացրեց Հնդկաստանի մեջ՝ օգնելով կարիքավոր երիտասարդ աղջիկների: Ինչպե՞ս նա կարողացավ այս բանն անել: Ամեն օր նա Տեր Հիսուսին նայեց ու իր կյանքը Նրա ձեռքերի մեջ դրեց: Մենք էլ նույնը կարող ենք անել:

Աղոթք - Տեր, այսօր մեր աչքերը մեզ չքաջալերող հանգամանքներից վեր ենք բարձրացնում՝ Քեզ տեսնելու Քո փառավորության մեջ ու խաղաղություն գտնելու: Ամեն:

Աչքերդ սևեռիր Հիսուսին:

**Կարդա՛ր
Եսայի 33.17-22**

Դուք տեսնելու էք թագավորին իր փառքի մեջ, ձեր աչքերը հեռվից դիտելու են երկիրը: Ես. 33.17

Խաղաղությանը պահել

Մինչ շարունակում եմ Աստծուն վստահել՝ պայքարելով իմ առօրյա ցավերի մեջ, նույնիսկ ամենապարզ ցավը թվում է դաժան հարձակում: Առաջին հարցը խոցում է ինձ աջ կողմից: Երկրորդը նեղում է ետևից: Երրորդը հարվածում է երեսիս: Այս ժամանակներում, երբ ուժս նվազում, ու անմիջական ամոքումս խուսափում է, փախչելն ու թաքնվելը լավ միտք է թվում: Սակայն երբ չեմ կարողանում ձերբազատվել իմ ցավերից ու հանգամանքներից, և կամ իմ զգացումները անտեսել, սովորում եմ կամաց-կամաց Աստծուն ապավինել, որ ինձ պահի: Երբ քաջության, հանգստության ու քաջալերանքի կարիք եմ զգում, սաղմոսերգուի խոսքերն եմ աղոթքով կարդում, որոնք անկեղծաբար իրենց հանգամանքները Աստծո առջև են դնում: Իմ նախասիրած սաղմոսներից մեկի մեջ Դավիթ Թագավորը փախուստ է տալիս իր որդուց՝ Աբիսողոմից, որ ուզում էր նրան սպանել ու իր թագավորությունը խլել: Թեև Դավիթը իր վիճակի համար ողբում է (Սաղմ. 3.1-2), սակայն նա վստահում է Աստծո պաշտպանությունն ու ակնկալում է, որ Նա կպատասխանի իր աղոթքներին (Հմ. 3.4): Թագավորը իր քույր չկորցրեց մտահոգվելով կամ էլ վախենալով, թե ինչ կարող է պատահել, որովհետև նա Աստծուն վստահեց, որ իրեն պիտի պահի ու ազատի (Հմ. 5-8):

Կարդա՛ր Սաղմոս 3

Ես մնջեցի ու քուն մտա. զարթնեցի, և Տերն իմ ապավենն է: Սաղմ. 3.6

Ֆիզիկական ու զգացական ցավը կարող է շատ հաճախ որպես թշնամի ու ոտիս թվալ: Մենք ստիպված ենք տեղի տալ և կամ հուսալ, թե պիտի կարողանանք փախչել, և չենք կարողանում տեսնել մեր ներկայի պայքարի ավարտը: Սակայն Դավիթի նման մենք էլ պետք է կարողանանք սովորել վստահություն ունենալ, թե Աստված մեզ վեր պիտի պահի և օգնի, որ Իր մնայուն սիրո պաշտպանություն մեջ հանգչենք:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ մեզ հանգիստ ես պարգևում քո մնայուն ներկայության խաղաղության մեջ ու վստահեցնում մեզ քո արդեն շահած հաղթանակի մասին: Ամեն:

Աստված մեզ խաղաղություն է առաջարկում մեզ վեր քարծրացնելու ու կրելու մեզ մեր փորձությունների մեջ:

Ժամանակը գնիր

Ռիման՝ սիրիացի մի կին, որ վերջերս Միացյալ Նահանգներ էր փոխադրվել, ձեռքի շարժումներով ու իր քիչ իմացած անգլերենով փորձեց իր դասատուին բացատրել, թե ինչու էր տխուր: Նրա այտերից արցունքներ հոսեցին, մինչ ձեռքի մեջ մսով, պանրով ու շոմինով իր պատրաստած Ֆաթայրը խմորեղենով զարդարված գեղեցիկ պնակ էր բռնել: Ապա ձեռքի արագ նշանով ցույց տվեց դռնից սենյակ ու ետ դուռը տանող կողմը և ասաց. «Մի մարդ»: Ուսուցիչը կռահեց, թե մոտակա եկեղեցուց շատերը պետք է Ռիմային ու իր ընտանիքին այցելեին և նվերներ բերեին: Սակայն միայն մի մարդ էր եկել: Նա ածապարանքով ներս էր մտել ու դուրս եկել: Նա զբաղված էր իր պարտականություններով, մինչ Ռիման ու իր ընտանիքը միայնությունից տառապում էին ու փափագ ունեին մարդկանց հետ բարեկամություն մշակելու ու իրենց պատրաստած համեղ Ֆաթայրը նոր բարեկամների հետ բաժանելու:

Հիտուսը ժամանակ տրամադրեց մարդկանց հետ հաղորդակցվելու: Նա ընթրիքի հավաքույթներին մասնակցեց, բազմությունների սովորեցրեց, ինչպես նաև ժամանակ անցկացրեց անհատների հետ: Նա նույնիսկ նրան հրավիրեց մի մարդու տուն: Երբ Ջաքեսոս մաքսավորը ծառ բարձրացավ Հիտուսին տեսնելու համար, Հիտուսը նրան նայելով ասաց. «Ջաքեսոս, շուտ արա իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը լինեմ» (Ղուկ. 19.1-9): Ու Ջաքեսոսի կյանքն ամբողջությամբ փոխվեց: Գործերի բերումով հաճախ մենք ժամանակ պիտի չունենանք տրամադրելու: Սակայն երբ տրամադրենք, հիանալի առանձնաշնորհում կունենանք ուրիշների հետ լինելու ու տեսնելու, թե ինչպես է Տերը նրանց միջոցով գործում:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ նրանց համար, որոնք իրենց սուղ ժամանակից ինձ եմ տրամադրել: Օգնիր, որ ես էլ Քո սերը կարողանամ ուրիշներին ցույց տալ: Ամեն:

Լավագույն պարգևը, որ դու կարող ես ուրիշներին տալ, քո ժամանակը կարող է լինել:

Կարդա՛ր Ղուկաս 19.1-10

Ջաքեսոս, շուտ արա իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը լինեմ: Ղուկ. 19.5

Երկնքի մեջ գանձ

Երբ մարմնով մեծանում էի, երկու քույրերս և ես սիրում էինք մայրի ծառի փայտով շինված մորս արկղի վրա կողք կողքի նստել: Մայրս մեր բրդե վերնաշապիկներն ու տատիս հյուսած ձեռագործները նրա մեջ էր պահում: Նա մեծ դանձ էր նկատում նրա մեջ եղածները ու ապավինում էր մայրի ծառի փայտի ուժեղ հոտին, որ միջատներին հեռու պահի արկղի մեջ եղած բաներից:

Մեր երկրային ունեցվածքներից շատերը կարող են հեշտությամբ փչանալ միջատների կամ ժանգի պատճառով, կամ էլ կարող են գողացվել: Մատթեոսի Երգ գլուխը մեզ քաջալերում է, որ հատուկ կերպով կենտրոնանանք ոչ թե այն բաների վրա, որոնք ժամանակավոր կյանք ունեն, այլ այն բաների վրա, որոնք հավիտենական արժեք ունեն: Երբ մայրս մահացավ 57 տարեկանում, նա շատ երկրային ունեցվածք էր կարողացել ամբարել: Սակայն ես ուզում եմ մտածել այն գանձերի մասին, որ ինքը կարողացավ ամբարել երկնքի մեջ (Հմ. 19-20):

Հիշում եմ, թե որքա՛ն նա սիրեց Աստծուն ու ծառայեց Նրան լուռությամբ. հոգատար եղավ իր ընտանիքին, կիրակնօրյայի մանուկներին սովորեցրեց, բարեկամացավ ամուսնուց լքված մի կնոջ հետ, մխիթարեց նորածին մանկանը կորցրած երիտասարդ մորը, ազդեց, նույնիսկ իր տեսողությունը կորցնելուց ու անվասայլակի վրա արգելափակվելուց հետո նա շարունակեց սիրել ու ազդեց ուրիշների համար:

Մեր իսկական գանձը չի չափվում մեր դիզածով, այլ թե ինչի մեջ է կամ ում ենք տրամադրում մեր ժամանակն ու սերը: Հիսուսին հետևելով ու ծառայելով ինչպիսի՜ «գանձեր» ենք դիզում երկնքում:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր, որ կարողանամ իմ կյանքը շահարկել այն բաների մեջ, որոնք հավիտենական են: Ամեն:

Մեր իսկական հարստությունը հավիտենականության համար մեր արած շահարկումների մեջ է:

Կարդա՛ր
Մատթեոս 6. 19-21

Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի:
Մատթ. 6.21

Ոչ այն, ինչ թվում է

«Հսի՛ր,- ասաց կինս հեռախոսի միջից,- մի կապիկ կա մեր բա-
կի մեջ»: Ու հեռախոսը բարձր պահեց, որ կարողանամ լսել:
Այո՛, կապիկի ձայնին նման էր, ինչը տարօրինակ էր, որով-
հետև մեզ ամենից մոտ եղող կապիկը 2000 մղոն հեռու էր:

Հետո աներս հաստատեց ու բացատրեց՝ ասելով. «Կապիկ
չէ՛, այլ բուռ»: Իրողությունը այն չէր, ինչ
թվում էր: Երբ Սենեքերիմ թագավորի
բանակները Հուդայի եզեկիա թագավո-
րին արգելափակեցին Երուսաղեմի պա-
տերի ներսում, ասորիները խորհեցին,
թե հաղթանակը վստահաբար իրենցն
էր: Սակայն իրողությունը տարբեր բան
փաստեց: Թեև ասորիների հրամանատա-

րը մեղմ բառեր գործածեց ու ձևացրեց Աստծո անունով խոսե-
լու մեջ, Տիրոջ ձեռքը տակավին Իր ժողովրդի գլխին էր:

«Առանց Տիրոջ հրամանի՞ եմ ես հարձակվել այս երկրի վրա,
որ բնաջնջեմ այն» (Դ. Թագ. 18. 25): Մինչ նա փորձեց Երուսա-
ղեմին հրապուրել, որ հանձնվի, նա նույնիսկ ասաց. «Դուք այն-
տեղ կապրեք ու չեք մեռնի» (Հմ. 32): Սա թվում է մի բան, որ
Աստված կարող է ասել: Սակայն Եսայի մարգարեն Իսրայելի ժո-
ղովրդին ասում է Տիրոջ ճշմարիտ խոսքերը. «Ասորեստանի ար-
քան չի մտնի այս քաղաքը, նետեր չի արձակի դրա վրա: Այս քա-
ղաքը պիտի հովանավորեմ» (Դ. Թագ. 19.32-34): Այդ նույն երե-
կոյան Տիրոջ հրեշտակը կործանեց ասորիներին (Հմ. 35):

Ժամանակ առ ժամանակ մենք պիտի հանդիպենք մեղմ խոսող
մարդկանց, որոնք մեզ պիտի խրատեն՝ ուրանալով Աստծո զորու-
թյունը: Նրանք Աստծո ձայնը չեն, որովհետև նա մեզ խոսում է Իր
Խոսքի միջոցով ու առաջնորդում է Իր Հոգով: Նրա ձեռքը նրանց
վրա է, որոնք Իրեն են հետևում ու նրանց երբեք չի թողնում:

Աղոթք - Տե՛ր, սովորեցրու մեզ լսել Քո ձայնը: Ամեն:

Աստված միշտ վստահելի է:

Կարդա՛
Դ Թագ. 19.29-37

Ամեն հոգու մի՛ հա-
վատացեք, այլ փոր-
ձեցեք հոգիները, թե
արդյոք Աստծո՞ւց
են: Ա. Յովհ. 4.1

Աստված գործի վրա

Մի շարք բարեկամների հարց տվեցի ասելով. «Ինչպե՞ս եք Աստծուն գործի վրա տեսնում»: Մեկը պատասխանեց ու ասաց. «Տեսնում եմ Նրան գործի վրա, երբ կարգում եմ Իր Խոսքը ամեն առավոտ: Տեսնում եմ Նրան գործի վրա, երբ օգնում է ինձ, որ դիմագրավեմ յուրաքանչյուր օր: Տեսնում եմ Իրեն գործի վրա, երբ իմանում եմ, թե ինձ հետ է ճանապարհիս վրա ամեն քայլափոխին: Անդրադառնում եմ, թե ինչպես է ինձ օգնում մարտահրավերների դիմագրավելու ժամանակ՝ ինձ հրճվանք տալով»: Սիրում եմ բարեկամիս տված պատասխանը, որովհետև ցույց է տալիս, թե ինչպես է Աստծո Խոսքն ու Հոգին մեր մեջ բնակվում, Աստված մեզ մոտ մնում ու գործում նրանց մեջ, որոնք Իրեն են սիրում:

Կարդա՛ր
Եբր. 13.20-21

...ձեր մեջ կատարի,
ինչ որ հաճելի է իր
առաջ, Հիսուս
Քրիստոսի ձեռքով...
Եբր. 13.21

Աստծո գործելը Իր հետևողների մեջ հիանալի խորհուրդ է, ինչին ակնարկում է Եբրայեցիների նամակի հեղինակը, երբ իր նամակը փակում է ծանոթ առաքելական օրհնությունով. «Ձեր մեջ կատարի, ինչ որ հաճելի է իր առաջ, Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Եբ. 13.21): Այս եզրակացությունով հեղինակը հաստատում է իր նամակի հիմնական պատգամը, թե Աստված Իր ժողովրդին պիտի զինի Իրեն հետևելու և պիտի գործի իրենց մեջ ու միջոցով Իր փառքի համար: Մեր մեջ գործող Աստծո պարզեք կարող է մեզ զարմացնել. կարող ենք ներել նրան, որ մեր դեմ սխալ է գործել, կամ համբերություն ցույց տալ դժվարահաճ մի մարդու: Մեր «խաղաղության Աստվածը» (Հմ. 20) Իր սերն ու խաղաղությունն է տարածում մեր մեջ ու մեր միջոցով: Վերջերս արդյոք տեսե՞լ ենք Աստծուն գործի վրա:

Աղոթք - Տե՛ր Հիսուս Քրիստոս, ինձ զինում ես Քո գործն անելու՝ Քո փառքի համար: Բա՛ց իմ աչքերն այսօր, որպեսզի հասկանամ, թե Դու ինձ ինչպես ես կանչում: Ամեն:

Աստված գործում է մեր և Իրեն հետևողների միջոցով:

Ազատ՝ հետևելու

Ավագ դպրոցի երկար վազքի մարզիչը մի անգամ մրցումից առաջ խրատեց ինձ ու ասաց. «Մի փորձիր վազողների խմբում առաջիններից լինել: Ընդհանրապես նրանք շուտ հոգնում են ու սպառվում»: Ընդհակառակը՝ նա թելադրեց, որ ամենից արագ վազողների անմիջապես ետևից վազեմ, որովհետև երբ թույլ տամ, որ նրանք պահեն վազքի քայլաչափը, ես կարող եմ ինձ պետք եղած մտային ու ֆիզիկական ուժը պահել՝ մրցումը ավարտելու համար: Առաջնորդությունը սպառիչ կարող է լինել, մինչդեռ հետևելը ազատություն է տալիս: Սա իմանալը բարեկամացի է վազքը, սակայն միաժամանակ շատ երկար ժամանակ պետք եղավ՝ անդրադառնալու, թե ինչպես է այս միտքը հնարավոր իրագործել Քրիստոնեական աշակերտության պարագային: Ես միշտ մտածում էի, թե Հիսուսին հավատացող լինել նշանակում է իրապես ամեն ջանք թափել: Հետապնդելով իմ սպառիչ ակնկալությունները, թե ինչպիսին պիտի լինի Քրիստոնյան, ես կորցնում էի պարզապես Իրեն հետևելու ուրախությունն ու ազատությունը (Հովհ. 8.32, 36): Մեր կյանքերը առաջնորդելու համար չէ, որ մենք գոյություն ունենք, ոչ էլ Հիսուսը վերանորոգման ծրագիր սկսեց: Ընդհակառակը՝ նա խոստացավ, թե Իրեն հետևելով՝ մեզ հարկավոր հանգիստը պիտի գտնենք (Մատթ. 11.25-28): Հիսուսը սովորեցրեց, թե պարզապես Իրեն ճանաչելով՝ մենք կարող ենք Աստծուն ճանաչել (Հմ. 27): Իր մոտ զնալով՝ մեր բեռները թեթևանում են (Հմ. 28-30), ու մեր կյանքերը վերափոխվում են: Մեր ազնիվ ու խոնարհ առաջնորդին հետևելը (Հմ. 29) բնավ բեռնավորում չէ, այլ հույսի ու բժշկության ուղին է:

Կարդա՛ր Մատթեոս 11. 25-30

Իմ լուծը ձեզ վրա՝ վերցրեք ու ինձանից սովորեցեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք: Մատթ. 11.29

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու ես իմ կյանքի առաջնորդը: Օգնիր, որ Քո մեջ գտնեմ իմ հանգիստը: Ամեն:

Ճշմարիտ ազատությունը Գիսուսին հետևելու մեջ է:

Աստծո բարութիւնը փառավորել

Մեր Աստվածաշնչի խմբակի անդամներից մեկը առաջարկեց՝ ասելով. «Եկեք մեր անձնական սաղմոսները գրենք»: Անմիջապես շատերը բողոքեցին՝ ասելով, թե չունեն գրելու անհրաժեշտ կրակը, սակայն մի քիչ քաջալերանքից հետո յուրաքանչյուրը գրեց հուզիչ բանաստեղծական երգեր, որոնք պատմում էին, թե Աստված ինչպես էր գործել իրենց կյանքերի մեջ: Փորձու թյունների, նախատեսու թյունների և նույնիսկ ցավերի ու արցունքների միջից դուրս եկան հավերժական պատգամներ, որոնք մեր գրած սաղմոսներին տվեցին հիանալի նյութեր: 135-րդ Սաղմոսի նման յուրաքանչյուր սաղմոս հայտնեց այն ճշմարտութիւնը, թե Աստծո կարեկցութիւնը հավիտյան է:

Բոլորս էլ ունենք պատմելիք պատմութիւն Աստծո սիրո մասին. գրենք կամ երգենք կամ պատմենք այն: Ոմանց համար մեր փորձառութիւնները թատերական կամ ուժեղ կարող են լինել 135-րդ Սաղմոսի հեղինակի նման, որ նչեց, թե ինչպես Աստված իր ժողովրդին գերութիւնից ազատեց ու հաղթեց նրանց թշնամիներին (Հմ. 10-15): Ուրիշները պարզապես կարող են նկարագրել Աստծո սքանչելի ստեղծագործութիւնը. «Երկինքն ստեղծեց իր իմաստութեամբ... Երկիրը հաստատեց ջրերի վրա... Միայն ստեղծեց լուսատուները մեծ... Արեգակը կարգեց ցերեկվա տիրակալ... Լուսինն ու աստղերը՝ գիշերվա տիրակալ» (Հմ. 5-9): Հիշելը, թե ով է Աստված և ինչ է արել, իրեն փառավորող գոհաբանութիւն ու շնորհակալութիւն է առաջացնում, և մենք մեր մեջ կարող ենք հաղորդակցվել «սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգևոր երգերով» (Եփ. 5.19):

Կարդա՛ր Սաղմոս 135. 1-15

Գոհութիւն մատուցեցեք Տիրոջը, քանզի բարի է նա, քանզի հավերժ է նրա ողորմութիւնը: Սաղմ. 135.1

Աղոթք - Տէր, շնորհակալութիւն ստեղծագործութեանդ ու ունեցած բոլոր օրհնութիւններիս համար: Լցրու սիրտս երախտագիտութեամբ ու դիր բերանիս մեջ շնորհակալութեան խոսքեր: Ամեն:

Հավիտեանականութեան համար Աստծո կարեկցութիւնը հավիտյան է:

Յորդանաս

«Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ»,- բացականչեցի: Սակայն՝ անօգուտ: Զուգարանի խցանված ջուրը դատարկելու լուծուժս իմ նախատեսածի ճիշտ հակառակը եղավ: Այն պահին, երբ ջրի լծակը սեղմեցի, հասկացա, որ սխալվեցի ու չկարողացա մի բան անել, երբ ջուրը սկսեց հորդել:

Քանի՛ անգամ են մեր մանուկները փորձել կաթ լցնել գավաթի մեջ ու չեն կարողացել՝ ամեն տեղ թափելով այն: Եվ կամ մեր մեքենաների ետևի սնդուկի մեջ գովացուցիչ ըմպելիքների շերտ և ջրոտ կերակուրների ամանները անպահով դնելը որքա՛ն վնաս է հասցրել ու գործ բացել մեզ համար:

Ո՛ւ: Հեղուժները լավ չեն: Սակայն կարող է պատահել մի բացառություն: Պողոս առաքյալը հորդելու պատկերը գործածում է՝ նկարագրելու համար Աստծո Հոգով լցված մարդկանց, ասելով, թե ինչ որ հորդում է, հույս է (Հռոմ. 15.13): Սիրում եմ մեր կյանքերի մեջ Իր հզոր ներկայություն ուրախությունով, խաղաղությունով ու հավատքով մինչև եզրը կամ բերանը լեցուն լինելու պատկերը, և մենք չենք կարող չարտահայտել ու արտահայտել մեր զվարթ վստահությունը մեր Երկնավոր Հոր հանդեպ: Դա կարող է լինել մեր կյանքի գեղեցիկ ու պայծառ եղանակին, և կամ երբ մեր կյանքերի գավաթը փչրվում է: Երկու պարագաներում էլ ինչ-որ տղմոտ է դառնում ու հորդում, կյանք տվող հույս է մեր շուրջ հողդներին, որոնք ողողվում են նրանով:

Աղոթք - Տեր, հեղուժներ պատահում են կյանքի մեջ: Սակայն երբ պատահեն, օգնիր մեզ, որ լեցուն լինենք Քո Հոգով, ու ինչ որ թափվում է մեզմից, թող լինի այն հույսը, որ մարդիկ տեսնեն ու օրհնվեն: Ամեն:

Հայրը մեզ Հոգուն տվեց՝ մեզ Որդու նման դարձնելու համար:

Կարդա՛ր Գոմ. 15. 4-13

Եվ հույսի Աստվածը լցնի ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ՝ հավատի մեջ...
 Գոմ. 15.13

Իսկ եթե...

Երբեմն կյանքը մեզ տալիս է սարսափելի հարվածներ: Այլ զեպարեում հրաշքներ են պատահում:

Գերեվարված երեք երիտասարդներ կանգնեցին Բաբելոնի մոլեգին թագավորի առջև ու քաջաբար հայտարարեցին, թե ոչ մի դեպքում չպիտի պաշտեն նրա շինած ոսկե արձանը: Նրանք միասնաբար հաստատեցին. «Մեր Աստվածը... կարող է փրկել մեզ բոլորքված կրակի հնոցից... Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում» (Դան. 3.17-18):

Այս երեք երիտասարդները՝ Սեդրակը, Միսաքը եւ Աբեղնագովը, բոլորքված կրակի հնոցի մեջ նետվեցին, սակայն Աստված հրաշագործությունով ազատեց նրանց: Նրանց գլխից մի մազ չխանձվեց, ոչ էլ կրակի հոտը դիպավ նրանց (Հմ. 19-27): Նրանք պատրաստ էին մեռնելու, սակայն Աստծո վրա ունեցած վստահությունը անխախտ էր՝ «եթե...» անգամ չա նրանց չազատեր:

Աստված ցանկանում է, որ մենք Իրեն կառչենք, նույնիսկ եթե մեր սիրելին չբժշկվի, կամ մեր գործը կորցնենք, կամ էլ հալածանք կրենք: Երբեմն Աստված մեզ վտանգներից ազատում է այս կյանքի մեջ ու երբեմն՝ ոչ: Սակայն այն ճշմարտությունը, որ կարող ենք ամուր բռնել, այս է: Մեր պաշտած Աստված կարող է սիրում է ու մեզ հետ է՝ կրակոտ փորձանքների մեջ ու ցանկացած «եթե»-ի պարագայում:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, Քեզ ենք սիրում: Խնդրում ենք, տուր մեզ անխախտ հավատք ու զորություն և հույս ամեն օրվա համար, կարևոր չէ, թե ինչ պարագաներում ենք: Ամեն:

Աստված կարող է:

Կարդա՛ր Դանիել 3.8-16

Մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք... կարող է փրկել մեզ բոլորքված կրակի հնոցից... Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա՛, որ քո աստվածները մենք չենք պաշտում: Դան. 3.17-18

Նոր հասարակություն

Բարեկամուհուս՝ Քերիի հինգ տարեկան աղջիկը՝ Մեյջան, հետաքրքիր մոտեցում ունի խաղի ժամանակ: Նա սիրում է տարբեր հավաքածուների տիկնիկները իրար խառնել ու նոր խումբ կամ հավաքածու ստեղծել: Իր երևակայությամբ աշխարհում ամեն բան շաղկապված է: Նրանք իր ժողովուրդն են, ու հավատում է, թե շատ ավելի ուրախ են, երբ միասին են, հակառակ իրենց տարբեր չափերին և ձևերին:

Նրա ստեղծագործ միտքը ինձ հիշեցնում է Աստծո նպատակը եկեղեցու համար: Հոգեգալուստի օրը Ղուկաս ավետարանիչն ասաց. «Երուսաղեմում բնակվում էին հրեաներ՝ աստվածապախ, երկնքի տակ գտնվող բոլոր ազգերից» (Գործք Առ. 2.5): Թեև այս մարդիկ տարբեր մշակույթներից էին ու խոսում էին տարբեր լեզուներով, Սուրբ Հոգու գալուստը նրանց նոր հասարակություն՝ եկեղեցի դարձրեց: Այդ ժամանակից ի վեր նրանք նկատի են առնված որպես մեկ մարմին՝ միացած Հիսուսի մահով ու հարությունով:

Այս նոր մարմնի առաջնորդները՝ աշակերտները, բազմաթիվ մարդկանցից կազմված խումբն էր, որոնց Հիսուսը միատեղ բերեց իր երկրային առաքելության ընթացքում: Եթե Հիսուսը նրանց չմիացներ, հավանաբար բնավ իրար կողքի չպիտի լինեին: Ու մարդիկ, «երեք հազարի չափ» (241), Քրիստոսի հետևորդները եղան: Սուրբ Հոգու շնորհիվ ժամանակին բաժանված այս խմբի համար հիմա «ամեն ինչ ընդհանուր ունեին» (Հմ. 44): Նրանք ցանկություն ունեին իրենց ունեցածը իրար հետ բաժանելու: Սուրբ Հոգին շարունակում է կամրջել մարդկանց խմբերի միջև եղած բացերը: Կարող է պատահել այնպես, որ ամեն բանի մեջ համակարծիք չլինենք ու իրար միշտ չհասկանանք, սակայն որպես հավատացյալներ՝ մենք իրար ենք պատկանում:

Աղոթք - Տեր Յիսուս, շնորհակալ եմք, որ մեռար մեզ համար ու միացրիր մեզ որպես մեկ ժողովուրդ եկեղեցու մեջ: Ամեն:

Սուրբ Հոգին «մեր»-ը և «նրանց»-ը փոխում է «մենք»-ի:

Կարդա՛

Գործք 2.1-12, 42-47

Բոլոր հավատացյալներն իրար հետ՝ մեկտեղ էին ու ամեն ինչ ընդհանուր ունեին:

Գործք. Առ. 2.44

Ներիմի աղոթքը

1960-ին վեց տարեկան Ռուբի Բրիդջեսը առաջին աֆրո-ամերիկացի մանուկն էր, որ ընդունվեց ձերմակամորթների պետական նախակրթարան Միացյալ Նահանգների Հարավային շրջանում: Ամիսներ շարունակ դաշնակցային ոստիկանները Ռուբիին ուղեկցեցին, երբ անցնում էր զայրացած ծնողների մոտով, որոնք նախատում էին, անհիծում ու սպառնում նրան: Նա ապահով, սակայն առանձին դասարանում նստեց Բարբարա Հենրիի հետ, որը դասավանդելու համաձայն միակ դասատուն էր, մինչ բոլոր ծնողները արգելեցին իրենց զավակներին դպրոց հաճախել Ռուբիի հետ:

Երևելի ու լավ ծանոթ մանկական հոգեբան Ռոբերտ Քոլսը ամիսներ շարունակ հանդիպեց Ռուբիի հետ՝ օգնելու, որ նա կարողանա տոկալ իր վախի ու ճնշումների դիմաց: Քոլսը հիացալ լսելով ամեն օր Ռուբիի արտասանած աղոթքը դպրոց զնալու և վերադառնալու ժամանակ. «Հա՛յր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում» (Ղուկ. 23.34):

Հիսուսի արտասանած խոսքերը խաչի վրա ավելի հզոր էին, քան իրեն ուղղված ատելությունն ու արհամարհանքը: Իր կյանքի ամենից ցավալի պահերին մեր Տերը ցույց տվեց իր հիմնական պատասխանը չարության փոխարեն, որը սովորեցրել էր իր աշակերտներին. «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին: Օրհնեցե՛ք ձեզ անհիծողներին, աղոթեցե՛ք ձեզ նեղողների համար: ...Ողորմա՛ժ եղեք, ինչպես ձեր Հայրն է ողորմած» (Ղուկ. 6.27-28, 36): Այս մոտեցումը հնարավոր է միայն, երբ նկատի ունենանք Տեր Հիսուսի ցուցաբերած հզոր սերը:

Աղոթք - Հայր, Դու շնորհով մեզ ներել ես: Օգնիր մեզ այսօր, որ կարողանանք մեր հանդեպ սխալ անողներին ներել: Ամեն:

Օրհնեք նրանց, որոնք անհիծում են ձեզ, ու աղոթեք նրանց համար, որոնք վատ վերաբերմունք ունեն ձեր հանդեպ:

Կարդա՛ր Ղուկաս 6. 27-36

Միրեցե՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին: Օրհնեցե՛ք ձեզ անհիծողներին, աղոթեցե՛ք ձեզ նեղողների համար:
Ղուկ. 6.27-28

Ծառի վրա

Երբ մայրս տեսավ իմ կատվին՝ Վելվեթին, խոհանոցի սեղանի վրա իր նոր թխած հաց լափելիս, բարկանալով նրան դուրս վռնդեց: Ժամեր հետո մենք խուզարկեցինք մեր բակը՝ գտնելու կորած կատվին, սակայն՝ ապարդյուն: Երբ մեզմ մշավոց լավեց քամու ձայնի հետ, աչքերս վեր բարձրացրի ու տեսա մի սև բան կաղամախի վերի ճյուղերից մեկի վրա:

Մորս բարկուկությունից փախուստ տալու իր ջանքի մեջ Վելվեթը ընտրեց ավելի վտանգավոր տեղ: Արդյոք հնարավոր է, որ մենք էլ երբեմն նույնանման բան անենք՝ փախուստ տալով մեր գործած սխալներից՝ մեզ վտանգի մեջ դնելով: Հոգ չէ թե ինչ վիճակի մեջ ենք, Աստված մեզ օգնություն է հասնում:

Հովնան մարգարեն Նինվեի մեջ քարոզելու Աստծո տված կոչին չհնազանդվելով՝ փախուստ տվեց ու իրեն գտավ մեծ ձկան փորի մեջ: «Հովնանը կետի փորի միջից աղոթեց Տեր Աստծուն և ասաց. «Իմ նեղության մեջ ես աղոթեցի իմ Տեր Աստծուն, և նա լսեց իմ աղաչանքը...» (Հով. 2.1-2): Աստված լսեց Հովնանի աղերսը և «...հրամայեց վիշապ ձկանը, և ձուկը նրան ցամաք նետեց» (Հմ. 11): Հետո Աստված Հովնանին ուրիշ առիթ տվեց (3.1):

Վելվեթին ցած կանչելու մեր թափած անօգուտ ջանքերից հետո լուր տվեցինք տեղական հրդեհի բաժանմունքին: Ազնիվ մի մարդ մագլցեց ամբողջությամբ բացված շատ երկար աստիճանի գազաթը, վերցրեց կատվին ճյուղից, ցած իջեցրեց ու դրեց իմ ապահով բազուկների մեջ:

Բարձունքներում և խորխորատներում Աստված գալիս է ու մեզ ազատում մեր անհնազանդություններից իր փրկարար սիրով:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, որքա՛ն կարիք ունենք Քո փրկությանն այսօր: Ամեն:

Հիսուսի մահը խաչի վրա մեզ մեր մեղքերից ազատեց:

Կարդա՛ր Յովնան 2. 1-10

Իմ նեղության մեջ ես աղոթեցի իմ Տեր Աստծուն, և նա լսեց իմ աղաչանքը...
Յովնան 2.2

Բարուշկա կինը

Բարուշկա կինը 1963-ի Միացյալ Նահանգների նախագահ Ջոն Բ. Բեննեդիի սպանության խորհրդանիշներից է: Հակառակ այն բանին, որ Ֆիլմ է նկարահանվել այս դեպքի հիման վրա, հնարավոր չեղավ վերարկուով ու ոռու բարուշկայի նմանությամբ շալ հագած այս խորհրդավոր կնոջ ինքնությունը հաստատել ու նրա ֆիլմերը տեսնել: Տասնյակ տարիներ պատմաբաններն ու մեկնաբանները այն կարծիքը ունեին, թե վախը արգելել է «բարուշկա կնոջը» իր այդ խավար նոյեմբեր օրվա պատմությունը պատմել:

Կարծիք կամ ենթադրության կարիք չկա՝ հասկանալու, թե ինչու Տեր Հիսուսի աշակերտները փախուստ տալով թաքնվեցին խաչելության ժամանակ: Վախենալով իրենց Տիրոջը սպանող հեղինակություններից (Հովհ. 20.19)՝

նրանք սոսկումով ակամա իրենց փորձառության մասին չխոսեցին: Սակայն երբ Հիսուսը հարություն առավ ու Սուրբ Հոգուն հասավ, այլևս հնարավոր չէր այդ աշակերտներին լուռ պահել: Հոգեգալուստի Օրը, Սուրբ Հոգու զորությունով լցված, Միմոն Պետրոսը հայտարարեց. «Հիմա Իսրայելի ամբողջ տունը թող ստույգ իմանա, որ Աստված նրա՛ն Տեր ու Օծյալ արեց, այս Հիսուսին, որին դուք խաչ հանեցիք» (Գործք Առ. 2.36):

Հիսուսի անունով հանդգնորեն խոսելու առիթը սահմանված չէ միայն նրանց, որոնք ունեն հանդուգն անձնավորություն և կամ առաքելության ծառայության պատրաստություն: Սուրբ Հոգու բնակությունն է, որ մեզ կարողություն է տալիս Հիսուսի մասին եղած բարի լուրը պատմելու:

Աղոթք - Տեր, խնդրում եմ՝ տո՛ւր ինձ զորություն, քաջություն և հանդգնություն՝ ուրիշների մոտ խոսելու Քո մասին: Ամեն:

Խոսիր Քրիստոսի անցման ու եզակի սիրո մասին նրանց, որոնք կարիք ունեն լսելու:

Կարդա՛ր Գործք Առ. 2. 22-36

Դիմա Իսրայելի ամբողջ տունը թող ստույգ իմանա, որ Աստված նրա՛ն Տեր ու Օծյալ արեց, այս Դիսուսին, որին դուք խաչ հանեցիք: Գործք. Առ.2.36

ՇՈՒՈՒՆՈՒՆ զԱՄ

Ի՞նչն է քեզ արթուն պահում գիշերը: Վերջերս ինձ համար դժվար է լինում քնել. շՈՒՈՒՆՈՒՆ եմ գալիս անկողնուս վրա՝ փորձելով լուծում գտնել ինձ մտահոգող հարցին: Սկսեցի զայրանալ բավարար հանգիստ չունենալու ու հաջորդ օրվա մարտահրավերները դիմադրավելու համար: Ծանոթ է թվում այս փորձառությունը մեզ: Հարցեր մեր հարաբերություններում, անստույգ կամ անորոշ ապագա. ինչ էլ լինի խնդիրը, բոլորս էլ սկսում ենք մտահոգվել:

Հստակ էր, թե Դավիթ թագավորը ճշումի տակ էր, երբ հյուսեց 4-րդ Սաղմոսը: Մարդիկ սկսել էին Նրա համբավի մասին խոսել անհիմն ամբաստանություններով (Հմ. 3): Եվ ուրիշները հարցականի տակ գրեցին իշխելու իր կարողությունը (Հմ. 7):

Շատ հնարավոր է, որ Դավիթը բարկացավ իր հանդեպ եղած անարդարության համար: Այս վիճակում վստահաբար նա կարող էր երկար գիշերներ անցկացնել՝ նրանց մասին մտածելով: Սակայն կարդում ենք իր գրած հետևյալ խոսքերը. «Խաղաղությամբ կննջենք ու կարթնանանք» (Հմ. 9): Չարից Սփերջըն շատ գեղեցիկ է բացատրում 8-րդ համարը. «Հետևաբար, պառկելով, ... (Դավիթ) իրեն հանձնեց ուրիշի ձեռքերին. ամբողջապես հանձնվեց ու հոգատարության բացակայության զգացում ունենալով հանդերձ քնեց: Ի՞նչը ներշնչեց այս խաղաղությունը: Սկզբից Դավիթը վստահ էր, թե Աստված իր աղոթքներին պիտի պատասխաներ (Հմ. 2), ու վստահ էր, թե որովհետև Աստված որոշել էր սիրել իրեն, հետևաբար նա սիրով իր բոլոր կարիքները պիտի հոգար:

Աղոթք - Սիրելի՛ Դայր, շնորհակալ եմ, որ ինձ լսում ես, երբ կանչում եմ. ոչ մի բան Քեզ համար անհնար չէ, ու միշտ պատրաստ ես ինձ լսելու: Իմ բոլոր հոգսերը Քեզ եմ հանձնում ու քո մեջ հանգչում: Ամեն:

Մենք կարող ենք մեր հոգսերը հանձնել ամբողջովին վստահելի Աստծուն:

Կարդա՛ր Սաղմոս 4

Սակայն մենք... կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես որ Տիրոջ Դոգուց: Բ Կորնթ. 3.18

Հանկարծակի իմաստություն

Մի քանի տարի առաջ մի կին ինձ հետ կիսեց մի պատմու-
թյուն իր փոքր որդու մասին, որը հեռուստացույցով դի-
տում էր վայրագ մի դեպքի մասին լրատվություն: Ինքնաբերա-
բար նա փոխեց ալիքը և կոչտուլթյամբ ասաց. «Կարիք չունես դա
նայելու»: Վեճ սկսվեց նրանց միջև, ու վերջապես ավելացրեց, որ
կարիք ուներ միտքը լցնելու նրանով,
«...ինչ որ ճշմարիտ է, ինչ պարկեշտ, ինչ
որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն,
ինչ որ բարի անուն» (Փիլ. 4:8): Ընթրի-
քից հետո, երբ նա ու իր ամուսինը լուրե-
րին էին հետևում, հանկարծ իրենց հինգ
տարեկան աղջիկը ներս վազեց, հեռուս-
տացույցը անջատեց և փորձեց հնարավորինս լավ «մայրական» ձայնով ասել.
«Կարիք չունենք այդ բաները դիտելու:
Սուրբ Գրային բաների մասին մտածեք»:

Որպես չափահասներ՝ մենք մեր զա-
վակներից ավելի լավ կարող ենք ընդունել
ու հասկանալ լուրերը: Սակայն այդ զույգի աղջիկը թե՛ հաճելի
էր և թե՛ իմաստուն, երբ արձագանքեց իր մոր նախապես տված
ցուցումներին: Նույնիսկ հավասարակշռված չափահասները կա-
րող են ազդվել կյանքի սև ու մուլթ լուրերի մշտական ընկալու-
մից: Խորհրդածելը՝ Փիլիպպեցիս 4:8-ի մեջ Պողոսի տված ցուցա-
կը, հզոր դարման է մեզ վրա նստած խավարի համար, որ մեզ
ծածկում է, երբ տեսնենք մեր աշխարհի մեջ տիրող պայմանները:
Ուշադիր որոշումներ ընդունելը մեր մտքերում եղած բաների
մասին վսեմ միջոց է Աստծուն պատվելու ու մեր սրտերին հսկելու:

Աղոթք - Հայր, մեր աչքերը բաց այսօր գեղեցիկ բաների
դիմաց: Սովորեցրու խորհրդածել Քո մասին:

**Ինչ որ թույլ ենք տալիս մեր մտքերին, ձևավորում է
մեր հոգիները:**

Կարդա՛ Փիլիպ. 4. 4-9

Ինչ որ ճշմարիտ է,
ինչ որ պարկեշտ,
ինչ որ արդար, ինչ
որ սուրբ, ինչ որ
սիրուն, ինչ որ բա-
րի անուն, թե առա-
քինություն է և թե
զովասանք է, այն
մտածեցեք:

Փիլիպ. 4:8

Ոչ ոք ինձ չի սիրում

Երեխա ժամանակ երբ մենակ, մերժված ու տխուր էի լինում, մայրս փորձում էր ինձ ուրախացնել՝ երգելով ծանոթ մի տաղ. «Ոչ ոք ինձ չի սիրում, բոլորն ատում են ինձ: Մտածում եմ զնալ ու որդեր ուտել»: Երբ խոժոռ դեմքիս ժպիտ էր պարզվում, մայրս օգնում էր ինձ, որ տեսնեմ իմ ունեցած այն բոլոր հատուկ հարաբերությունները, որ ունեի, ու պատճառները՝ շնորհակալ լինելու:

Երբ կարգացի, որ Դավիթը ունեցավ նման զգացում, թե ոչ ոք չէր մտածում իր մասին, այդ տաղը հնչեց ականջներին մեջ: Դավիթի զգացումները չափազանցված չէին: Մինչ ես իբրև մանուկ առանձնություն զգացում ունեի, Դավիթը իրականում շատ լքված լինելու պատճառ ուներ: Նա գրեց հետևյալ խոսքերը քարայրի խավարի մեջ, Սավուղից փախուստ տալով, որ իրեն հալածում էր՝ սպանելու ծրագրով (Ա Թագ. 22.1, 24.3-10): Դավիթը օժիված էր լինելու Իսրայելի ապագա թագավորը (16.13), երկար տարիներ ծառայել էր Սավուղին, սակայն հիմա թափառական կյանք էր վարում՝ միշտ վախենալով իր կյանքի համար: Առանձնության զգացումների մեջ Դավիթը Աստծուն աղերսեց ու դիմեց Նրան՝ իբրև «Հուլյի» և «բաժինը՝ ողջերի երկրում» (Սաղմ. 141.6):

Դավիթի նման մենք էլ կարող ենք աղաղակել Աստծուն, երբ միայնակ ենք զգում՝ հայտնելով մեր զգացումները իր սիրո ապահովության մեջ: Աստված բնավ չի ցանկանում մեր առանձնությունը: Նա ուզում է մեր ընկերակիցը լինել մեր կյանքի խավար քարայրների մեջ: Երբ նույնիսկ մտածենք, թե ոչ ոք մեր մասին հոգ չի տանում, վստահ լինենք, որ Աստված հոգ է տանում:

Աղոթք - Տե՛ր, Դու ես իմ բարեկամը, երբ միայնակ եմ: Ծնորհակալ եմ խավար ժամերիս ինձ հետ լինելու համար: Ամեն:

Աստված մեր բարեկամն է առանձնության պահերին:

Կարդա՛ր Սաղմոս 141

...ոչ ոք ինձ չի ճանաչում. փախելիս ինձ համար անհնար դարձավ, և չկար մեկը, որ փնտրեր ինձ: Սաղմ. 141.5

Շոշափելի Աստված

Երբ ամուսինս մի ամսով ճամփորդեց, անմիջապես աշխատանքի, տան ու զավակներին կարիքների ճնշումը զգացի: Գրություն պատրաստելու ժամկետը մոտեցավ, խոտ կտրելու գործիքը փչացավ, զավակներիս դպրոցական արձակուրդը սկսվեց, ու ըստ սովորության՝ նրանք սկսեցին ձանձրանալ: Ինչպե՞ս կարող էի այս ամենը միայնակ անել: Շուտով անդրադարձա, թե մենակ չեմ: Եկեղեցուց բարեկամներ եկան օգնելու: Զոչը եկավ խոտի մեքենան նորոգելու: Զոնը ճաշ բերեց: Քեսիդին լվացքն օգնեց անել: Էբին զավակներին իր տուն հրավիրեց, որ իր զավակների հետ խաղան, ու ես կարողանամ իմ գործերն անել: Աստված այս յուրաքանչյուր բարեկամի միջոցով գործեց՝ կարիքներս հոգալու: Նրանք կենդանի պատկերներ էին Հռոմ. 12-ի մեջ Պողոսի նկարագրած հավաքականությունից: Նրանք անկեղծորեն սիրեցին (Հմ. 9), ուրիշների կարիքները նկատի ունեցան՝ փոխանակ միայն իրենցին ուշադրություն դարձնելու (Հմ. 10), ինձ հետ կիսվեցին, երբ հյուրասիրության կարիք ունեի, ու հյուրասիրություն ցույց տվեցին (Հմ. 13): Բարեկամներիս ցուցաբերած անկեղծ սիրո շնորհիվ «հույսով ուրախ» եղա և «նեղությունը համբերեցի» (Հմ. 12), նույնիսկ անգամ երբ մի ամսով ինձ միայնակ ծնող էի զգում: Քրիստոսով եղբայրներս ու քույրերս ինձ համար եղան այն, ինչ մի բարեկամ ասում է՝ «շոշափելի Աստված»: Նրանք ցուցաբերեցին այն անկեղծ սերը, որ ցույց պիտի տանք ամենքին, հատկապես նրանց, որոնք մեր հավատքի ընտանիքից են (Գաղ. 6.10): Հույս ունեմ ավելի նմանվել նրանց:

Կարդա՛ր
Յոռն. 12. 1-13

Սրբերի կարիքներին հաղորդակից եղեք, հյուրասիրության հետևեցեք:
Յոռն. 12.13

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ դնում ես հավաքականության մեջ: Օգնիր, որ ուրիշների կարիքները տեսնեմ և հոգատար լինեմ: Ամեն:

Ո՞ւմ համար կարող եմ «շոշափելի Աստված» լինել:

Վերջին կոչը

Երկու տասնամյակ որպես ուղղաթիռի ղեկավար իր երկրին ծառայելուց հետո Ջեյմսը տուն վերադարձավ իր համայնքին ծառայելու որպես ուսուցիչ: Սակայն նա կարոտեց ուղղաթիռները և ընտրեց տեղական հիվանդանոցում օգնականին շտապ օգնություն գործը: Նա այս գործը շարունակեց երկար տարիներ՝ մինչև իր մահը: Հիմա երբ որպես իր բարեկամներ, ընտանիքի անդամներ և գործընկերներ հավաքվել էինք գերեզմանատան մեջ մեր ողջերթը ասելու նրան, մի գործընկեր ուղղիցով կոչ արեց վերջին առաքելություն: Շուտով լսվեց ուղղաթիռի անիվներին հատուկ ձայնը, և մի ուղղաթիռ սկսեց շրջադայել գերեզմանատան վրա՝ իր հարգանքի տուրքը մատուցելու: Այդ արտաճմլիկ պահին ոչ ոք չկարողացավ իր արցունքները զսպել, նույնիսկ ուղղական անձնավորությունները:

Երբ Սավուղ Թագավորը և իր որդին՝ Հովնաթանը սպանվեցին պատերազմի մեջ, Դավիթը ողբ գրեց, որ դարեր շարունակ կոչվեց «Աղեղի ողբը» (Բ Թագ. 1.17): Նա երգեց. «Բլուրների բարձունքներում իբրև արձան կանգնի՛ր, Իսրայել՛, վերավոր ընկած քո զորավոր որդիների համար» (Հմ. 19): Հովնաթանը Դավիթի ամենից մտերիմ բարեկամն ու պատերազմական եղբայրն էր: Եվ հակառակ նրան, որ Դավիթը ու Սավուղը թշնամիներ էին, Դավիթը երկուսին էլ պատվեց: «Լա՛ց եղեք Սավուղի վրա», - ասաց նա: «Ցավում եմ քեզ համար, եղբա՛յր» (Հմ. 24, 26):

Նույնիսկ լավագույն ողջերթները դժվար են: Սակայն նրանք, որոնք Տիրոջը վստահում են, նրանց հիշատակն ավելի քաղցր է լինում: Որքա՛ն բարի է, երբ կարող ենք պատվել նրանց, ովքեր ուրիշներին են ծառայել:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք նրանց համար, որոնք իրենց ժողովրդին են ծառայում՝ որպես շտապ օգնության գործիչներ: Խնդրում ենք, որ նրանց պահես: Ամեն:

Մենք պատվում ենք Արարչին, երբ պատվում ենք Իր ստեղծածների հիշատակը:

Կարդա՛ր
Բ Թագ. 1. 17-27

Ինչպե՞ս ընկան
հզորները...
Բ Թագ. 1. 27

Հորիզոնը դիտել

Հագրիվ լատեր սկսել էր շարժվել, փոքր աղջիկս ասաց, թե անհանգիստ է: Ծովամրրիկը արդեն սկսել էր ազդել իր վրա: Քիչ հետո ես էլ անհանգիստ զգացի, ու սիրտս սկսեց խառնել: Ինքս ինձ ասացի. «Պարզապես հորիզոնին նայիր»: Նավապետները ասում են, թե սա օգնում է մեր վիճակը բարելավելու:

Հորիզոնը Ստեղծողը (Հոր 26.10) գիտի, որ կյանքի մեջ շատ անգամ մենք վախեր ու անհանգստություններ ենք ունենում: Կարող ենք մեր դիտակետը վերագտնել՝ հեռվում գտնվող մի կետի կենտրոնանալով:

Եբրայեցիների գրքի հեղինակը հասկացավ սա: Նա զգաց իր ընթերցողների քաջալերանքի պակասը: Հալածանքը շատերին էր իրենց տներից հեռու քշել: Ուստի նա հիշեցրեց նրանց, թե ուրիշ հավատքի մարդիկ կարողացել են դիմանալ սաստիկ փորձությունների ու իրենց նման դարձել անտուն: Նրանք այդ բոլոր բաներին կարողացան դիմանալ, որովհետև ակնկալեցին ավելի լավ բան:

Որպես աքսորյալներ՝ այս ընթերցողները կարող էին առաջ նայել, դեպի այն քաղաքը, որի ճարտարապետը Աստված Ինքն է: Երկնային երկիրը՝ Աստծո քաղաքը իրենց համար է պատրաստվել (Եբ. 11.10, 14, 16): «Որովհետև այստեղ հաստատուն մնացող քաղաք չունենք, այլ հանդերձյալն ենք որոնում» (Եբ. 13.14):

Մեր ներկա խնդիրները ժամանակավոր են: Մենք «երկրում օտարականներ և պանդուխտներ ենք» (11.13), սակայն Աստծո խոստումների հորիզոնին նայելը տալիս է մեզ անհրաժեշտ հանձնարարականը:

Աղոթք - Հայր, նեղությունների ու հարցերի մեջ օգնիր ինձ, որ կարողանամ կենտրոնանալ Քո խոստումների վրա: Ամեն:

Աստծո վրա կենտրոնացիր ու վերագտիր դիտակետդ:

Կարդա՛ր
Եբր. 11. 8-16

Որովհետև այստեղ հաստատուն մնացող քաղաք չունենք, այլ հանդերձյալն ենք որոնում: Եբր. 13.14

Երբ բառերը ձախողում են

Մի քանի օր առաջ տիկնոջս՝ Քարինի բջջային հեռախոսով կարճ հաղորդագրություն ուղարկեցի՝ միայն գործածելով ճայնային արագ հուշումներ: Աշխատատեղիցս դուրս էի գալիս ու զնալու էի նրա ետևից ու ցանկանում էի հետևյալ պատգամը տալ. «Ուտեղի՞ց ես ուզում, որ քեզ վերցնես, «ծե՛ր կին»:

Քարինն չի նեղվում, երբ նրան ծեր կին եմ անվանում, որովհետև այդ արտահայտությունը տան մեջ մեր գործածած սիրալիր ու գորովալիր ծածկանուններից մեկն է: Սակայն բջջային հեռախոսս չհասկանալով ասածս՝ «ծեր կով» բառերը ուղարկեց: Բարեբախտաբար Քարին անմիջապես հասկացավ ու զվարճալի նկատեց պատահածը: Հետո սոցիալական ցանցում դնելով՝ հարցրեց. «Պե՞տք է վշտանամ ու դառնանամ»: Ու մենք երկուսս կարողացանք զվարճանալ պատահածից:

Կնոջս տված սիրալիր պատասխանը իմ տարօրինակ բառերին ինձ մտածել է տալիս մեր ազդիթներին ի պատասխան Աստծո տված սիրո հասկացություն մասին: Մենք կարող ենք չիմանալ, թե ինչ պիտի ասենք, երբ ազդիթում ենք, և նույնիսկ չգիտենք, թե ինչ պիտի խնդրենք: Սակայն երբ Քրիստոսին ենք պատկանում, մեր մեջ եղած Իր Հոգին «անբարբառ հառաչանքներով բարեխոս է լինում մեզ համար» (Հռոմ. 8.26) և սիրով օգնում է մեզ, որ կարողանանք մեր կարիքները տեսնել: Մեր երկնավոր Հայրը մեզինից հեռու չի մնում՝ սպասելով, որ մեր շիտակ բառերը գտնենք: Մենք կարող ենք Իրեն մոտենալ մեր ամեն տեսակի կարիքների համար՝ վստահ, թե Նա հասկանում է ու մեզ սիրով ընդունում:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ կարող եմ Քեզ գալ՝ առանց իմ բառերը շիտակ ասելու վախի: Օգնիր, որ Քեզ հետ քայլեմ այսօր: Ամեն:

Աստծո սերը բառերից անդին է:

Կարդա՛

Հոմեացիներ 8.22-27

Թող ողորմությունդ, Տե՛ր, լինի մեզ վրա, ինչպես որ մեր հույսը դրինք քեզ վրա: Սաղմ. 32.22

Ընդհատված հաղորդակցություն

Ցավալի ու բարձրաձայն աղաղակը խոցեց Խաչելուծյան օրվա կեսօրից հետո եղած խավարը: Կարող եմ երևակայել, թե ինչպես այն խեղդեց սիրելիների ու բարեկամների ողբի ձայնը, որոնք հավաքվել էին Հիսուսի ոտքերի մոտ: Վստահաբար ավելի բարձր լավեց մեռնող ոճրագործների աղաղակներից ու ցնցեց բոլոր նրանց, որոնք լսեցին այդ խոսքերը: Հիսուսը, կախված այդ խաչի վրա, Իր ցավերի միջից սրտաբեկ բացականչեց. «Էլի՛, էլի՛, լա՛մա սաբաբթանի», որ թարգմանվում է. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինձ ինչո՞ւ թողեցիր» (Մատթ. 27.45-46):

Կարդա՛ր
Մատթեոս 27. 32-50

...Աստվա՛ծ իմ,
Աստվա՛ծ իմ, ինձ
ինչո՞ւ թողեցիր:
Մատթ. 27.46

Չեմ կարող ավելի սրտաճմլիկ բառեր երևակայել: Հավիտենականությունից ի վեր Հիսուսը կատարյալ հաղորդակցություն մեջ էր Հայր Աստծո հետ: Նրանք միասին ստեղծեցին տիեզերքը, Իրենց պատկերով ձևավորեցին մարդկությունը ու ծրագրեցին փրկությունը: Անցյալ դարերում չկար ժամանակ, երբ նրանք Իրար հետ հավորդակցություն մեջ լինեին:

Ու հիմա, մինչ խաչի ցավն ու տառապանքը շարունակեցին Հիսուսին սաստիկ ցավ տալ, առաջին անգամ Նա կորցրեց Աստծո ներկայություն գիտակցությունը, մինչ Նա Իր վրա կրեց աշխարհի բոլոր մեղքերը: Քանի որ ընդհատված հաղորդակցությունը միակ ճանապարհն ու միջոցն էր, որով կարելի էր տալ մեր փրկությունը, Հիսուսը պատրաստ էր մեր լքված լինելու այս զգացումի փորձառությունը ընդունել խաչի վրա, որպեսզի մենք կարողանանք Աստծո հետ մեր հաղորդակցությունը վերահաստատել: Շնորհակալ ենք, Տե՛ր Հիսուս, որ նման ցավ կրեցիր մեր փրկության համար:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, դարձյալ սոսկումով ենք կանգնում Քո գոհաբերության առջև: Շնորհակալությամբ տեսնում ենք, թե ինչ արեցիր խաչի վրա մեզ համար: Շնորհակալ ենք, որ հնարավոր դարձրիր հավիտենական հաղորդակցությունը Հոր հետ: Ամեն:

Խաչը ցույց է տալիս Աստծո սիրտը կորսվածների համար:

Կանգ առ

Բարեկամուհիս ու ես նստեցինք ծովափի ավազի վրա՝ լսելով օվկիանոսի ալիքների համաչափ թավալումը: Մինչ արևը հորիզոնից սկսեց իջնել, ալիքները հաջորդաբար ծփծփալով հասան մինչև մեր երկարած ոտնաձայրերին՝ ամեն անգամ մի քիչ ավելի հեռու մնալով: Բարեկամուհիս ասաց. «Շատ եմ սիրում օվկիանոսը, որովհետև շարժվում է, որպեսզի ես չչարժվեմ»: Ի՛նչ հիանալի խորհուրդ: Շատերը տազնապում են կանգ առնելու պատճառով: Մենք աշխատում ենք, աշխատում և գնում, գնում՝ վախենալով, որ եթե մեր ջանքերը դադարեցնենք, այլևս գոյություն չենք ունենա: Եվ կամ եթե կանգ առնենք, մեր անձերը պիտի ցուցադրենք միշտ գոյություն ունեցող իրականություններին, որոնք փորձում ենք ծածկել: Սաղմոս 45.9-10-ի մեջ Աստված իր ամենազոր միկանները թեքում է՝ իր ուժը ցույց տալով. «Եկեք տեսե՛ք գործերն Աստծու, որ նշաններ ու զարմանահրաշ գործեր արեց երկրի վրա: Դադարեցրեց պատերազմը երկրի մի ծայրից մինչև մյուսը, աղեղներ փշրեց, զենքեր խորտակեց և վահանները մատնեց հրի»: Աստված զբաղված է և գործում է մեր օրերի քառասյին վիճակներում խաղաղություն ստեղծելու համար: Ապա 11-րդ համարում կարդում ենք. «Շտապեցե՛ք և իմացե՛ք, որ ես Աստվածն եմ»:

Կարդա՛ Սաղմոս 45

Շտապեցե՛ք ու իմացե՛ք, որ ես Աստվածն եմ:
Սաղմ. 45. 11

Անշուշտ կարելի է Աստծուն ճանաչել, մինչ վազում ենք այս ու այնտեղ: Սակայն Սաղմոսերգուհի հրավերը, որ դադարենք մաքառել, մեզ հրավիրում է տարբեր տեսակի գիտակցության, թե կարող ենք կանգ առնել մեր հեքոտ վազքի մեջ ու տակավին գոյություն ունենալ, որովհետև Աստված բնավ կանգ չի առնում: Գիտակցե՛նք, թե միայն Աստծո զորությունն է, որ մեզ տալիս է գերագույն արժեքը, պաշտպանությունն ու խաղաղությունը:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, տո՛ւր ինձ կարողությունը՝ Քո մեջ իմ հանգիստը գտնելու: Ամեն:

Մենք լավ ենք հանգստանում, երբ Աստծո սիրո բազուկների և կատարյալ կամքի մեջ ենք:

«Ծամոդ» տարիները

Վերջերս տիկինս Լաբրատոր որսի շան ձագ ինձ տվեց՝ Մեքսանունով: Մի օր, երբ ես աշխատասենյակումս կենտրոնացել էի գործիս վրա, և Մեքսը մոտս էր, ետևումս լսեցի թղթի պատռվելու ձայն: Ետ դառնալով տեսա հանցավոր նայվածքով Մեքսին բաց գրքի առջև կանգնած և բերնից մի էջ կախված:

Մեր անասնաբույժը մեզ ասում է, թե Մեքսը իր «ծամոդ տարիներին» մեջ է: Երբ շան ձագերը իրենց կաթնատամները կորցնում են, ու նրանց մնայուն ատամներն են սկսում մեծանալ, նրանց լնդերը ծամում են ինչ գտնում են: Մենք ուշադիր պիտի լինենք, որ Մեքսը չկրճի բաներ, որոնք կարող են իրեն վնասել, ու ցույց ենք տալիս ավելի օգտակար բաներ:

Մեքսի մղումը ծամելու ու իմ պատասխանատվությունը ուշադիր լինելու ինձ մտածել են տալիս, թե մենք ինչ ենք «ծամում» մեր մտքերի ու սրտերի մեջ: Արդյո՞ք ուշադրությունը նկատի ենք ունենում, թե ինչով ենք կերակրում մեր հավիտենական հոգիները, երբ համացանցի վրա զանազան տեղեր ենք այցելում և կամ հեռուստացույց դիտում: Աստվածաշունչը մեզ քաջալերում է ու ասում. «Նորածին մանուկների պես այն բանական անխարդախ կա՛թը ցանկացեք, որպեսզի նրանով աճեք դեպի փրկություն, եթե ճաշակել եք, որ Տերը քաղցր է» (Ա Պետ. 2.2-3): Մենք ամեն օր կարիք ունենք մեր անձերը լցնելու Աստծո խոսքով և ճշմարտությունով, եթե ուզում ենք բարգավաճել որպես Քրիստոսի հետևորդներ ու աճել միայն իր միջոցով:

Աղոթք - Սիրող Տեր, օգնիր, որ ծարավեմ Քեզ ու Քո խոսքին և հեռու մնամ այն բաներից, որոնք կարող են ինձ վնաս հասցնել: Քո բարությունով ինձ լցրու: Ամեն:

Երբ Քրիստոսը վերադառնա, ինչի՞ տենչանք պիտի տեսնի մեր մեջ:

Կարդա՛ր Ա Պետրոս 2. 1-11

Երանի՛ նրանց, ովքեր քաղցած են և ծարավ արդարության, որովհետև նրանք կկշտանան: Մատթ. 5.6

Ժամացույցներ և օրացույցներ

Հայրս մահացավ, երբ 58 տարեկան էր: Այդ օրից ի վեր նրա մահվան տարեդարձին մի պահ լուռ եմ մնում՝ նրան հիշելու համար, և մտածում եմ կյանքիս վրա նրա ունեցած ազդեցություն մասին: Երբ անդրադարձա, թե երկար տարիներ եմ ապրել առանց իրեն, սկսեցի մտածել կյանքիս կարճություն մասին:

Սովալով մենք կարող ենք ժամանակի ընթացքում պատահած դեպքի և նրա տված զգացումների դեմ գոտեմարտել: Թեև ժամանակը չափում ենք ժամացույցով և օրացույցով, հիշում ենք ժամանակները՝ պատահած դեպքերի պատճառով: Կյանքի այն պահերին, երբ մեր խոր զգացումներն են հայտնաբերվում, կարող ենք ուրախություն, կորստի, օրհնություն, ցավի, հաջողության ու ձախողության փորձառություն ունենալ: Աստվածաշունչը մեզ քաջալերում է՝ ասելով. «Ձեր հույսը դրե՛ք նրա

վրա, ժողովուրդների ո՛ղջ բազմություններ, բացե՛ք նրա առջև սրտերը ձեր, քանզի Աստված օգնականն է մեր հավիտյանս հավիտենից» (Սաղմ. 61.9): Այս վստահ հայտարարությունը հանգստի ու անդորրության ժամանակի մեջ չէ, որ պատահում է: Դավիթը գրեց այս բառերը, երբ թշնամիներով էր շրջապատված (Հմ. 3-4): Հակառակ իր այս վիճակին՝ նա տակավին լուրթյամբ սպասեց Աստծո առջև (Հմ. 1, 5)՝ մեզ հիշեցնելով, թե Աստծո անխախտ սերը (Հմ. 12) ավելի մեծ է, քան մեր դիմադրական պայքարի ժամանակները:

Ամեն պարագայում մենք ունենք վստահությունը, թե մեր Աստվածը մեր կողքին է ու մեր ակնկալածից շատ ավելի կարող է մեզ կրելու կյանքի բոլոր ժամերին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու միշտ հավատարիմ պիտի լինես մեզ: Ամեն:

Կարդա՛
Սաղմոս 61

Ձեր հույսը դրե՛ք նրա վրա, ժողովուրդների ո՛ղջ բազմություններ, բացե՛ք նրա առջև սրտերը ձեր, քանզի Աստված օգնականն է մեր...
Սաղմ. 61. 9

Մեր Աստվածը պատրաստ է մեզ հետ լինելու մեր կյանքի բոլոր պահերին:

Աչքերս բաց

Երբ առաջին անգամ այցելեցի Ստամբուլի հիանալի Չորա եկեղեցին, ձեռունին գծագրված բյուզանդական որմնանկարներից ու խճանկարներից կարողացա պատկերացնել Աստվածաշնչից մի շարք պատմություններ, բայց շատ բաներ չկարողացա: Սակայն իմ երկրորդ այցելության ընթացքում առաջնորդը ցույց տվեց բոլոր մանրամասնությունները, որոնք նախապես չէի կարողացել նկատել, ու հանկարծ ամեն բան կատարյալ իմաստ ունեցավ: Օրինակ՝ առաջին շարքը նկարագրում էր Հիսուսի կյանքը այնպես, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում:

Երբ Աստվածաշունչը կարդում ենք, հասկանում ենք հիմնական պատմությունները, սակայն քիչ ենք հասկանում մանրամասնությունները, որոնք հյուսում են Աստծո խոսքը՝ մի կատարյալ պատմության վերածվելով: Ունենք Աստվածաշնչի մեկնաբանություն, ինչպես նաև սերտողության համար որոշ գրքեր: Այո՛: Սակայն առաջնորդի կարիք ունենք, մեկի, որ կարողանա մեր աչքերը բանալ և օգնի, որ կարողանանք Աստծո գրավոր հայտնությունն սքանչելիքները տեսնել ու հասկանալ: Մեր առաջնորդը Սուրբ Հոգին է, որ մեզ սովորեցնում է «ամեն բան» (Հովհ. 14.26): Պողոսը գրեց, թե Նա Սուրբ Հոգին բացատրում է «հոգևորները հոգևորների հետ համեմատելով» (Ա. Կորնթ. 2.13): Ի՞նչ հիանալի է ունենալ Գրքի Հեղինակին՝ մեզ ցույց տալու նրա միջի հրաշքները: Աստված ոչ թե միայն մեզ տվել է Իր գրավոր խոսքն ու Իր հայտնությունը, այլև մեզ օգնում է այն հասկանալու ու նրանից սովորելու: Ուստի եկեք աղոթենք Սաղմոսերգուհի հետ՝ ասելով. «Բաց իմ աչքերը, որ տեսնեմ Քո Օրենքի հրաշալիքները» (Սաղմ. 118.18):

Աղոթք - Սիրելի՛ Տեր, երբ կարդում եմ Քո խոսքը, իմ աչքերը բաց, որպեսզի կարողանամ Քո հայտնության հրաշալիքները տեսնել: Ամեն:

Աստծո կարիքն ունենք՝ Իր խոսքը հասկանալու համար:

Կարդա՛ր ՅՈՎԻԱՆՆԵՍ 14.23-31

Բայց Մխիթարիչը՝
Սուրբ Յոզիմ, որին
Յայրն իմ անուևով
կուղարկի, նա ամեն
բան կսովորեցնի
ձեզ... Յովի. 14. 26

Կույր մարդու աղերսանքը

Մի քանի տարի առաջ մի ճամփորդական ընկեր նշմարեց, որ աչքերս կկոցում էի հեռուն տեսնելու համար: Նրա արած պարզ արարքը կյանք փոխող փորձառուություն եղավ ինձ համար: Իր ակնոցը հանեց ու ասաց. «Փորձիր սա»: Ու երբ իր տված ակնոցը աչքիս դրեցի, իմ պղտորած տեսողությունը զարմանալի հստակ դարձավ: Հետևաբար, աչքի բժշկի մոտ գնացի: Ինձ հարկավոր ակնոցը տվեց, ու տեսողությունս հարցը լուծվեց:

Այսօրվա ընթերցումը Ղուկաս 18-ի մեջ ներկայացնում է մի մարդու, որ երբեք չէր տեսնելու, ու ամբողջապես խավարի մեջ ապրելը պարտադրել էր նրան մուրալ:

Բոլորին ծանոթ ուսուցչի ու հրաչքներ գործող Տեր Հիսուսի պատմությունը հասել էր կույր մուրացկանի ականջներին էլ: Ուստի երբ ճամփորդության ուղին տարավ Հիսուսին այնտեղ, ուր կույր մարդն էր նստած, հույս բռնկվեց նրա սրտում, ու «Հիսո՛ւս, Դավթի՛ որդի, որորմի՛ր ինձ» (Հմ. 38),- աղբյուրեց նա: Թեև այս կույր մարդը Ֆիզիկական տեսողության պակաս ուներ, սակայն ուներ նաև Հիսուսի ճշմարիտ ինքնության ու Նրա վրա եղած հավատքի հոգևոր տեսությունը և հավատում էր, թե Նա իրեն պետք եղածը կարող է տալ: Այս հավատքով շղթայված՝ նա ավելի բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Դավթի՛ որդի, որորմի՛ր ինձ» (Հմ. 39): Արդյո՞ւնքը: Կուրությունը անհետացավ, ու նա մուրալու փոխարեն սկսեց Աստծուն փառավորել, որովհետև տեսնում էր (Հմ. 43):

Խավար պահերի և եղանակների մեջ դու ո՞ւմ ես դիմում: Ինչի՞ն կամ ո՞ւմ ես կանչում: Ակնոցները օգնում են մեր տեսողությունը բարելավել, սակայն Հիսուսի՛ Աստծո Որդու ողորմածի հպումը կարող է մեզ հոգևոր խավարից դեպի լույս առաջնորդել:

Աղոթք - Զայր, սրտիս աչքերը բաց, որպեսզի հստակ տեսնեմ, թե ով է Զիսուսը և թե ինչ կարող է անել ինձ համար: Ամեն:

Չոր հաճույքը տեսողություն տալն է նրանց, որոնք խնդրում են Իրենից:

Կարդա՛

Ղուկաս 18. 35 - 43

Զիսո՛ւս, Դավթի՛ որդի, որորմի՛ր ինձ: Ղուկ. 18. 38

Կողք կողքի

Հին օրերում փլած պարիսպներով քաղաքը խոստում էր պարտված ու վտանգի և ամոթի արժանի մի ժողովրդի մասին: Դրա համար հրեա ժողովուրդը Երուսաղեմի պարիսպները վերաշինեց: Ինչպե՞ս: Արտահայտություն, որ շատ լավ է նկարագրում Նեեմիա 3-ը:

Առաջին ակնարկով 3-րդ գլուխը ճանճրացուցիչ տեղեկագիր կարող է թվալ, թե ով ինչ արեց վերաշինության ընթացքում: Սակայն ավելի մոտից նայելով տեսնում ենք, թե ինչպես մարդիկ միասին՝ աշխատեցին: Քահանաները գործում էին իշխանների կողքին: Օժանելիք պատրաստողները, ինչպես նաև ոսկերիչները օգնում էին: Մոտակա բնակավայրների մեջ ապրող մարդիկ էլ եկան օգնության ձեռք մեկնելու: Ուրիշներն իրենց տան դիմացը նորոգեցին: Օրինակ՝ Սեղումի աղջիկները տղամարդկանց կողքին գործեցին (3.12), և այլ մարդիկ թեկվացի մարդկանց նման պարսպից երկու մաս նորոգեցին (հմ. 5, 27): Երկու բան է հատկանշական այս գլխում: Առաջին՝ նրանք ամենքը միասին գործեցին նույն նպատակի համար: Երկրորդ՝ բոլորը գնահատվեցին իրենց աշխատանքի համար և ոչ թե ուրիշների աշխատանքի համեմատությամբ: Այսօր տեսնում ենք քայքայված ընտանիքներ ու խզված ընկերություններ: Տեր Հիսուսը եկավ կյանքեր փոխակերպելով Աստծո թագավորությունը կառուցելու: Կարող ենք օգնել վերաշինելու մեր շրջակայքը՝ ուրիշներին ցույց տալով, որ նրանք կարող են հույս և նոր կյանք գտնել Տեր Հիսուսի մեջ: Գործե՛նք կողք կողքի ու մեր բաժինը կատարենք՝ մեծ կամ փոքր, ստեղծելու սիրո հավաքակառուցություն, ուր Հիսուսը կորածին է փնտրում ու գտնում:

Կարդա՛ Նեեմիա 3. 1-12

Երկու հոգով ավելի լավ է, քան մեկով, որովհետև ավելի վարձ կա նրանց վաստակի համար... Ժող. 4.9

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր ինձ, որ ուրիշների հետ կողք կողքի գործեմ՝ սեր ցույց տալով և ուրիշներին Հիսուսին ուղորդելով: Ամեն

Միասին գործենք՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար:

Եվ ճշմարտությունով

Տարիներ առաջ տարբեր երկրներից եկած երկու երիտասարդ-ների պսակադրություն արարողությունը ներկա եղա: Տարբեր մշակույթների նման միախառնումը կարող է գեղեցիկ լինել, սակայն այս արարողությունը խառնուրդ էր Քրիստոնեական սովորությունների և բազմաստվածության հավատքի ծեսերի:

Սոփոնիա մարգարեն հատակորեն դատապարտեց այլ կրոններ խառնելը ճշմարիտ Աստծո հանդեպ հավատքին, որ կարելի է կոչել համահաշտություն բոլորովին իրար հակադիր կրոնական դրությունների: Հուդայի ժողովուրդը ճշմարիտ Աստծուն էր պաշտում, սակայն միաժամանակ վատահում էր Մեղքոմ աստծուն (Սով. 1.5): Սոփոնիան նկարագրում է նրանց հեթանոս մշակույթի որդեգրությունը (հմ. 8) և ազդարարում, թե որպես արդյունք իրենց արած այդ արարքին՝ Աստված իրենց երկրից դուրս պիտի վճռի: Սակայն Աստված բնավ չդադարեց իր ժողովրդին սիրել: Նա դատապարտեց նրանց՝ ցույց տալու, թե իրեն դառնալու կարիքն ունեին: Ուստի նա քաջալերեց նրանց՝ սանելով. «Երկրի բոլոր խոնարհներ, իրավո՛ւնք արեք, արդարություն՝ ուն փնտրեք» (2.3): Ապա գորովալից խոսքեր ասաց. «Այն ժամանակ... բարիք կանեմ ձեզ, այն ժամանակ... կընդունեմ ձեզ» (3.20): Շատ դյուրին է դատապարտել բոլորովին իրար հակադիր դրությունների ակներև հաշտությունը այս պսակադրության նման: Սակայն իրականում բոլորս էլ դյուրությունք խառնում ենք Աստծո ճշմարտությունները մեր մշակութային ենթագրությունների հետ: Սուրբ Հոգու առաջնորդությամբ քննենք մեր հավատամքը՝ Աստծո խոսքի ճշմարտությունների հետ բաղդատելով ու հետո ճշմարտության համար վատահումքյամբ և սիրով հաստատ մնալով:

Կարդա՛ր Սովորո՛ւմ 1.1-6, 2.1-3

...Կնորոգի քեզ իր սիրով և ուրախ կլինի քո մեջ զվարճությամբ... Սով. 3.17

Աղոթք - Տե՛ր, երբ դժվարության մեջ եմ, ո՞ւմ դիմեմ: Երբ ճգնաժամ ունենամ, ինչի՞ն վստահեմ: Օգնիր, որ կարողանամ իմ հավատքը անբողջությամբ Քեզ վրա դնել: Ամեն:

Աստված միշտ պատրաստ է ներելու և վերանորոգելու:

Դեմքեր

Երբ մեր թոռնուհին՝ Սառան, շատ փոքր էր, բացատրեց ինձ, թե ինչ է պատահում, երբ մեկը մահանում է: Եվ ասաց. «Միայն դեմքդ է երկինք գնում, ոչ թե մարմինդ: Այնտեղ նոր մարմին ես ստանում, սակայն պահում ես դեմքդ»: Անշուշտ, Սառայի ունեցած մտապատկերը մեր հավիտենականության մասին մանկական մտածողության արդյունք էր, սակայն նա լավ էր ըմբռնել հիմնական ճշմարտությունը: Ինչ-որ կերպ մեր դեմքերը տեսանելի ցոլացում են աներևույթ հոգու:

Մայրս հաճախ ինձ ասում էր, թե մի օր բարկացկոտ նայվածքս կարող է սառչել դեմքիս: Իմաստուն խոսք էր սա: Մտահոգված մի հոխորտանք, բերանից թռած բարկացած խոսքերի մի շարան, աչքերի խորամանկ մի նայվածք կարող է հայտնաբերել մեր մեջ եղած թշվառական ու ողորմելի հոգուն: Մյուս կողմից ազնիվ աչքերը, գողտրիկ նայվածքը, ջերմ ու հյուրընկալ ժպիտը, հակառակ մեր կնճիռներին, եղծված

վիճակներին և այլ այլանդակություններին, կարող են լինել ստույգ նշաններ մեր ներքին փոխակերպության: Շատ բան հնարավոր չէ անել մեր ի ծնե ունեցած դեմքերի հետ, սակայն կարող ենք մեր մեջ աճող անձի որակը բարելավել: Մենք կարող ենք խոնարհության, համբերության, հեզության, ազնվության, բարության, հանդուրժողության, երախտագիտության, ներողամտության, խաղաղության և սիրո համար աղոթել (Գաղ. 5:22-26):

Աստծո շնորհով և Նրա՝ Հարմար նկատած ժամանակի մեջ թող որ մենք ներքնապես աճենք Քրիստոսին արտացոլելու մեր դեմքերի վրա: **Աղոթք** - Տե՛ր, ուզում եմ օրեցօր ավելի Քեզ նմանվել: Օգնիր, որ կարողանամ իմ սրտի մեջ Քո կատարած գործի հետ ներդաշնակ լինել: Ամեն:

Չկա՛ սիրող սրտի գեղեցկության նման բան:

Կարդա՛
Գաղ. 5. 22-26

Սակայն մենք բուրբ, բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես որ Տիրոջ Յոգուց:
Բ Կորնթ. 3.18

Կատարյալ Հայրը

Խանութի խճողված միջանցքում կանգնած՝ տառապում էի՝ գտնելու Հայրերի Օրվան պատշաճ կատարյալ բացիկը, թեև երկար տարիների խզված հարաբերությունն ունենալուց հետո հաշտվել ենք ու երբեք այսքան մոտիկ կապ չեմ ունեցել հորս հետ: Կողքիս կանգնած կինը հառաչելով իր կարողացած բացիկը ետ իր տեղը դրեց ու ասաց. «Ինչո՞ւ չեն պատրաստում բացիկներ նրանց համար, որոնք լավ հարաբերություն չունեն իրենց հայրերի հետ, սակայն փորձում են ու ամեն ջանք թափում շիտակ բաներ անելու»: Նա աճապարանքով թողեց ու գնաց, մինչ կկարողանայի մի բան ասել, ուստի աղոթեցի նրա համար: Ծնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ հաստատում է, թե միայն Ինքը կարող է կատարյալ Հայր լինել: Խնդրեցի, որ հորս հետ իմ ունեցած հարաբերությունը զորացնի: Ուզում եմ Դավթի պես Աստծո մնայուն ներկայություն, զորություն ու պաշտպանություն վստահությունը ունենալ (Սաղմ. 26.1-6):

Երբ Դավիթը աղաղակեց օգնություն խնդրելով, ակնկալեց Աստծո պատասխանները ունենալ (Հմ. 7-9): Թեև երկրային ծնողները կարող են մերժել, լքել ու անտեսել իրենց զավակներին, Դավիթը հայտարարեց Աստծուն առանց պայմանի ընդունելը (Հմ. 10): Նա ապրեց Աստծո հանդեպ իր ունեցած վստահությունով (Հմ. 11-13): Մեզնից շատերի նման Դավիթը երբեմն պայքարեց, սակայն Սուրբ Հոգին իրեն օգնեց, որ կարողանա վստահությունով ու Տիրոջը ապավինելով հարատևել (Հմ. 14):

Միջանցքում կանգնած կնոջ նման պիտի դիմազրավենք դժվար հարաբերություններ: Սակայն նույնիսկ երբ մարդիկ մեզ հուսախաբ անեն, ցավեցնեն կամ լքեն, մենք շարունակում ենք ամբողջովին սիրված ու պաշտպանված լինել միակ Կատարյալ Հոր կողմից:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու այն Հայրն ես, որին կարելի է ամեն ժամանակ ապավինել: Ամեն:

Աստված՝ Կատարյալ Հայրը, մեզ բնավ հուսախաբ չպիտի անի, չպիտի լքի կամ դադարի սիրելուց:

Կարդա՛
Սաղմոս 26

Իմ հայրն ու մայրը
լքեցին ինձ, բայց
Տե՛րն ինձ ընդունեց:
Սաղմ. 26.10

Ջերմ ընդունելություն

«Ո՞վ պիտի ողջագուրի բոլորին»: Սա հարցերից մեկն էր, որ մեր բարեկամը՝ Սթիվը տվեց իր քաղցկեղի մասին լուրը լսելուց հետո ու հասկանալով, որ հեռու պիտի մնար մեր եկեղեցուց երկար ժամանակ: Սթիվը այն անձերից է, որ բարեկամական ողջունով, ջերմ ձեռքսեղմումով և նույնիսկ «սուրբ ողջագուրում»-ով է ամենքին բարի գալուստ մաղթում՝ պատշաճ ձևով կիրառելու Հռոմ. 16.16-ը, որ ասում է. «Սուրբ համբույրով իրար բարեկեցե՛ք»: Ու հիմա, երբ աղոթում ենք Սթիվի համար՝ խնդրելով, որ Աստված նրան բուժի, նա մտահոգ է, թե մինչ վիրահատության ու բուժումի ենթարկվելով մեր եկեղեցուց հեռու պիտի մնա, մենք չպիտի ունենանք այդ բարի գալուստի ջերմ ողջունները:

Հավանաբար մենք բոլորս Սթիվի նման չենք կարող բացահայտ կերպով իրար ողջագուրել, սակայն ուրիշներին հոգատարություն ցույց տալու իր օրինակը լավ հիշեցում է մեզ համար: Նկատի առնենք Պետրոսի ասածը. «Իրար նկատմամբ հյուրասեր եղեք, առանց տրտունջի», կամ մի ձևով, որ խոսքը սիրով և կենտրոնանա (Ա Պետ. 4.9, տե՛ս Փիլ. 2.14): Առաջին դարի հյուրընկալությունը իր մեջ ուներ ճամփորդներին կեցություն առաջարկելը, որ սկսվում էր բարի գալուստի ողջունով:

Մինչ ուրիշների հետ սիրով հարաբերվում ենք, լինի դա ողջագուրումով կամ էլ պարզապես բարեկամական ժպիտով, այդպես ենք անում, «որպեսզի ամեն բանում Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի մեջոցով» (Ա Պետ. 4.11):

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ, որ կարողանանք Քե՛զ ուրիշներին ներկայացնել: Առաջնորդիր մեզ, որ մեր հյուրասիրությունը ցուցաբերենք այնպես, որ ուրիշները տեսնեն Քո սերը: Ամեն:

Երբ հյուրասիրության ետևից գնանք, Աստծո բարությունը կրթաժանեք:

Կարդա՛ր
Ա Պետրոս 4. 7-11

Իրար նկատմամբ
հյուրասեր եղեք,
առանց տրտունջի:
Ա Պետ. 4. 9

Յորս խրատը

Խմբագրական պաշտոնը թողնելուց հետո աղոթեցի՝ խնդրե-
լուով, որ Աստված օգնի ինձ նոր աշխատանք գտնել: Երբ շա-
բաթներ անցան, ու փնտրտուքի ու դիմումներ լրացնելու բոլոր
ջանքերս ապարդյուն եղան, սկսեցի նեղանալ ու չպատասխան-
ված աղոթքներին համար բողոքի բազուկներս բարձրացրի Աստ-
ծուն և ասացի. «Չգիտես, թե որքա՛ն
կարևոր է ինձ համար աշխատանք ունե-
նալը»: Երբ հորս հետ խոսեցի իմ գործի
հանգամանքների մասին, որ հաճախ ինձ
հիշեցրել է Աստծո արած խոստումներին
հավատալու մասին, ասաց. «Ուզում եմ,
որ հասնես այն կետին, ուր դու կարող
ես վստահել Աստծո ասածներին»:

Կարդա՛ Առակներ 3.1-7

Ամբողջ սրտով
հույսդ դի՛ր Աստծու
վրա և մի՛ հպար-
տացիր քո իմաս-
տությամբ: Առ. 3. 5

Հորս տված խրատը ինձ հիշեցնում է
Առակներ գրքի 3-րդ գլուխը, որ ծնողներից զավակին տրված իմաս-
տուն խրատ է պարունակում: Այս ծանոթ հատվածը հատկապես
կիրառելի էր իմ պարագային. «Ամբողջ սրտով հույսդ դի՛ր Աստծո
վրա և մի՛ հպարտացիր քո իմաստությունդ: Քո բոլոր ճանապարհ-
ներին ճանաչի՛ր նրան, որպեսզի նա ուղղի քո ճանապարհները»
(Առ. 3.5-6): «Ճանապարհները ուղղել» նշանակում է, թե Աստված
պիտի ուղղի մեզ դեպի Իր նպատակները մեր անման համար: Նրա
գերազույն նպատակը այն է, որ ես ավելի նմանվեմ Իրեն:

Սա չի նշանակում, թե Իր ընտրած ուղիները հեշտ պիտի
լինեն: Սակայն ես կարող եմ վստահ լինել, որ Իր տված ուղ-
ղությունն ու ժամանակը իմ բարիքի համար են:

Աստծուց աղոթքի պատասխան սպասո՞ւմ ես: Ընտրիր
Իրեն մոտենալն ու վստահելը, որ պիտի առաջնորդի քեզ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ առաջնորդում ես
ու հոգում մեզ յուրաքանչյուր քայլափոխին: Օգնիր, որ Քեզ
վստահենք ամեն օր:

**Երկնքում եղող Աստված գիտի, թե ինչն է լավագույնը քեզ
համար:**

Անունով կանչված

Տանուցողներն այն եզրակացություն են հանգել, թե ամենից շատ ուշադրություն գրավող բառը, որին լսողները արձագանքում են, իրենց անունն է: Հետևաբար Անգլիայում մի հեռուստաընկերություն ներկայացրել է անձնավորված ծանուցումներ, որոնք կարելի է ունենալ համացանցից:

Մենք կարող ենք հաճույք ստանալ մեր անունը լսելիս հեռուստացույցի պաստառից, սակայն դա ոչինչ է առանց այն ջերմության, որ մեզ է տալիս, երբ մեզ սիրող մեկն է տալիս մեր անունը:

Մարիամ Մագդաղենացու ուշադրությունը գրավվեց, երբ գերեզմանի մոտ, ուր Հիսուսն էր թաղված խաչելությունից հետո, Նա իր անունը տվեց (Հովհ. 20.16): Այդ մի բառով հավատում էր, թե անհավատության և ուրախության ապշանքով նա ճանաչեց Ուսուցչին, որին սիրել ու հետևել էր: Այն մտերմությամբ, որ Նա խոսեց իր անունը տալով, հաստատվեց, թե Նա, ում ծանոթ էր, կատարելապես ողջ էր ու կենդանի: Թեև Մարիամը հատուկ մի պահ ունեցավ Հիսուսի հետ, մենք էլ անձնապես սիրված ենք Աստծո կողմից: Հիսուսը Մարիամին ասաց, թե Ինքը Հոր մոտ պիտի գնա (Հմ. 17), սակայն Նա նաև ասել էր Իր աշակերտներին, թե նրանց մենակ չպիտի թողնեն (Հովհ. 14.15-18): Աստված Սուրբ Հոգուն պիտի ուղարկի Իր զավակների մեջ հաստատվելու և բնակվելու (Գործք Առ. 2.1-13):

Աստծո պատմությունը չի փոխվում: Անցյալում ու ներկայում Նա գիտի ու ճանաչում է Իր սիրելիներին (Հովհ. 10.14-15): Նա մեզ մեր անունով է կանչում:

Աղոթք - Սիրո՞ղ Յայր, ապրո՞ղ Հիսուս, մխիթարո՞ղ Սուրբ Գոգի, շնորհակալ եմ, որ Դու ինձ լավ գիտես ու սիրում ես անվերջ: Ամեն:

Այն Աստվածը, որ ստեղծեց տիեզերքը, նաև քեզ ստեղծեց ու քեզ քո անունով է կանչում:

Կարդա՛ր Յովհաննես 20.11-18

Հիսուսը ասաց նրան. «Մարիամ», և նա դարձավ ու նրան ասաց. «Ռաբբունի», որ «Կարդապետ» է թարգմանվում: Յովհ. 20.16

Խոնարհ սեր

Երբ Բենջամին Ֆրանկլինը երիտասարդ էր, 12 առաքինությունների ցուցակ պատրաստեց, որոնց մեջ ուզում էր աճել իր կյանքի ընթացքում: Նա ցույց տվեց պատրաստած ցուցակը իր բարեկամին, ու նա առաջարկեց ավելացնել «հեզությունը»: Ֆրանկլինը հավանեց գաղափարը: Հետո ավելացրեց մի շարք օգտակար ուղեցույցներ յուրաքանչյուր կետի համար: Ֆրանկլինը խոնարհություն մասին իր ունեցած խորհուրդների շարքում բարձր պահեց Հիսուսին որպես օրինակ ունենալու միտքը: Հիսուսը մեզ ցույց է տալիս խոնարհության գերագույն օրինակը: Աստծո խոսքը մեզ ասում է. «Ձեզանից յուրաքանչյուրը թող այն մտածմունքն ունենա, որ Քրիստոս Հիսուսի մեջ էր, որ Աստծո բնությունն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց: Այլ իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով ու կերպարանքով մարդու պես գտնվելով՝ իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան» (Փիլ. 2.5-8):

Հիսուսը մարմնացրեց գերագույն խոնարհության պատկերը: Թեև նա հավիտյան Աստծո հետ էր, սակայն ընտրեց խաչի վրա սիրով խոնարհվելը, որպեսզի իր մահով կարողանա բարձրացնել իրեն ընդունողներին իր ներկայության ուրախությանը: Մենք Հիսուսի խոնարհությունն ենք ընդօրինակում, երբ ցանկանում ենք մեր Երկնավոր Հորը ծառայել՝ ուրիշներին ծառայելով: Հիսուսի հեզությունը օգնում է մեզ, որ կարողանանք հպանցիկ ակնարկ ունենալ՝ մեր անձերը մի կողմ դնելու և ուրիշների կարիքներին հասնելու: Հեզ լինելու նպատակ ունենալը դյուրին բան չէ այն աշխարհի մեջ, որ միշտ ասում է. «Նախ՝ ես»: Սակայն մինչ փարվում ենք մեր Փրկչի սիրուն, նա մեզ հարկ եղած բոլոր բաներն է տալիս՝ իրեն հետևելու համար:

Աղոթք - Հիանալի՜ Փրկիչ, Քո ծառան եմ: Խնդրում եմ օգնիր ինձ Քո սիրո մեջ բնակվելու և մեկ ուրիշի համար օրհնություն լինելու այսօր: Ամեն:

Կարող ենք ծառայել, որովհետև սիրված ենք:

Կարդա՛ Փիլիպ. 2.1-11

Եվ ձեզանից մեծը
թող ձեր ծառան լի-
նի: Մատթ. 23.11

ՔՆՆԱՊԱՏՈՂԻՆ ԼՈՒԵԳՆԵԼ

Աշխատում եմ մի խմբի հետ, որ տարեկան միջոցառում է ծրագրում: Տասնմեկ ամիս շարունակ ծրագրում ենք բոլոր մանրամասները՝ վստահ լինելու ձեռնարկի հաջողությանը: Տոմսերի գինն ենք ճշտում: Ընտրում ենք ամեն բան՝ սկսած կերակուրից մինչև ձայնային պատասխանատուն: Միջոցառումից հետո քննում ենք՝ ի՞նչը լավ ընթացավ, ինչը՝ ոչ: Մեր խումբը ներկաների խանդավառությունն է ունկնդրում, ինչպես նաև մի շարք քննադատություններ: Ժխտական կարծիքը կարող է քաջալերական չլինել ու երբեմն էլ փորձում է մեզ, որ տեղի տանք:

Նեեմիան էլ քննադատներ ուներ, մինչ առաջնորդում էր Երուսաղեմի պատերը վերաշինող խմբին: Նրանք իրականում ծաղրեցին Նեեմիային, և նրանց, ովքեր նրա կողքին էին գործում՝ ասելով. «Միթե այժմ աղվեսները չե՞ն երևի ու քանդի նրանց պարսպի քարերը» (Նեեմ. 4.3): Նրա տված պատասխանը իրեն քննադատողներին օգնում է, որ ես էլ կարողանամ իմ դեմ եղած քննադատությունները իմաստուն կերպով նկատի ունենալ՝ փոխանակ ճկվելու կամ փորձելու դրանք հերքել: Նեեմիան, փոխանակ ուղղակի նրանց պատասխան տալու, Աստծուն է դիմում օգնության համար ու աղաղակում Նրան, որ լսում է, թե ինչպե՞ս են իր ժողովրդի հետ վարվում (Հմ. 4): Այդ մտահոգությունները Աստծուն հանձնելուց հետո ինքն ու իր գործընկերները շարունակում են աշխատանքը ու շինում պարիսպները «ամբողջ սրտով» (Հմ. 6): Երբ քննադատվում կամ ծաղրի ենք ենթարկվում, փոխանակ վիրավորական պատասխան տալու, աղոթքով խնդրենք Աստծուց, որ պաշտպանի մեզ հուսահատությունից:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ տեսնում ես իմ հուսալքումը և իմ պաշտպանն ես: Օգնիր, որ կարողանամ արժևորել բարին ու չարը քննադատության ժամանակ և Քեզ վստահել ու շարունակել քո գործը: Ամեն:

Աստված մեր լավագույն պաշտպանն է քննադատության ժամանակ:

Կարդա՛ Նեեմիա 4.1-6

Լսի՛ր մեզ, Տե՛ր Աստված մեր, քանգի մենք արժանացանք արհամարհանքի ու թշնամանքի. նրանց նախատինքները շուռ տուր իրենց գլխին: Նեեմ. 4.4

«Սիրելի»

Մի առավոտ, երբ աղջիկս պատրաստվում էր՝ բացականչելով՝ «Սիրելի», չգիտեմ, թե ինչ էր ուզում ասել: Ապա իր շապիկի վրա եղած գրուկները ցույց տալով՝ ասաց. «Սիրելիս»: Մի մեծ փաթեթ տվեցի նրան. նա ուրախ ժպտաց, երբ «Դու սիրելի ես» արձագանքեցի: Նրա ժպտը ավելացավ, ու սկսեց կրկնել ու կրկնել «Սիրելի» բառը: Ես կատարյալ հայր չեմ, սակայն այդ պահը կատարյալ ու սքանչելի էր ինձ համար: Այս ինքնաբերական հիանալի հաղորդակցություն մեջ ես աղջկաս փայլող երեսին տեսա պարզված այն խորհուրդը, թե ինչ է նշանակում անսակարկ սեր վայելել: Հաճույքի պատկեր էր: Նա հասկացավ, որ իր շապիկին գրված բառը ամբողջապես համապատասխանում էր իր հանդեպ հոր ունեցած զգացումին:

Մեզնից քանի՞ հոգի գիտի, թե մենք սիրելի ենք Հորով, որի զգացումները մեր հանդեպ անսահման են: Երբեմն պայքարում ենք այս ճշմարտության հետ, ինչպես Իսրայելի ժողովուրդը պայքարեց: Նրանք կասկած ունեցան՝ խորհելով, թե իրենց ունեցած փորձությունները նշանակում են, թե այլևս Աստված իրենց էջր սիրում: Սակայն Երեմիա 31.3-ի մեջ մարգարեն հիշեցնում է նրանց, թե Աստված ինչ է ասել անցյալում. «Հավիտենական սիրով սիրեցի քեզ»: Մենք էլ նման անսակարկ սեր ենք ցանկանում: Սակայն մեր ունեցած վերքերը, հուսախաբությունները և սխալները մեզ չսիրված լինելու զգացումն են տալիս: Բայց Աստված Իր կատարյալ Հոր բազուկները բացում է և հրավիրում մեզ Իր սիրո մեջ բնակվելու և կատարյալ սիրո փորձառությունը ունենալու:

Աղոթք - Տե՛ր, մեր կյանքի մեջ պատահած դժվար բաները փորձում են մեզ, որ մտածենք, թե ատելի ենք: Սակայն Դու ասում ես՝ ո՛չ: Խնդրում ենք օգնի՛ր մեզ՝ ստանալու Քո հավիտենական սիրո՝ կյանք փոխող պարգևը: Ամեն:

Ո՛չ ոք մեզ չի սիրում Հոր նման:

Կարդա՛ր Երեմիա 31. 1-6

Հավիտենական սիրով սիրեցի քեզ, դրա համար էլ քեզ գթության արժանացրի: Եր. 31.3

ԻՆչպես ծանուցված է

Մեր արձակուրդին ամուսինս և ես արձանագրվեցինք լաստով պտուկյտի համար Զորջիայի Չաթահուչի գետի վրա: Տրեխնե-րով և ամառանոցային հագուստով և մի մեծ գլխարկ մեր գլխին՝ բարձրացանք լաստի վրա: Հազիվ լաստը սկսել էր շարժվել, հառա-չեցի, երբ իմացա, թե հակառակ ծանուցվածին, այս ճամփորդու-թյան մի մասը ուներ նաև սրընթաց ալիքներ: Բարեբախտաբար մեր լաստի վրա մեզ հետ մի փորձառու գուլյգ կար, որ շուտ սովորեցրեց պաշտպա-նության հիմնական ձևերը և խոստացավ մեզ ապահով հասցնել մինչև ճամփորդու-թյան ավարտը: Երախտապարտ լինելով իմ հագած փրկարար բաճկոնին՝ ամուր կառ-չեցի լաստի վրայի բռնակին, մինչև հա-սանք ցամաք: Խնդուքով հրճվեցինք, հակա-ռակ նրան, որ ճամփորդութունը ծանուցվածի պես չէր:

Կարդա՛
Յովհ. 16. 25-33

Աշխարհում ցե-ղություն կունենաք, բայց քաջացե՛ք. ես հաղթել եմ աշխար-հին: Յովհ. 16.33

Ոչ այս պտուկյտի ծանուցումի թղթի նման, որ դուրս էր թողել մի հիմնական ասելիք, Հիսուսը հստակորեն ազդարարեց իր աշա-կերտներին՝ ասելով, թե ալեկոծ ջրեր պիտի լինեն եկող օրերին: Նա ասաց, թե հալածանքներ պիտի կրեն ու նահատակվեն, Ինքը պի-տի մեռնի ու հարություն առնի: Նա նաև հավաստիացրեց իր վս-տահելի լինելը՝ հաստատելով, որ պիտի առաջնորդի իրենց դեպի հաղթանակ և հավիտենական հույս (Հովհ. 16.16-33):

Թեև շատ ավելի լավ պիտի լինի, եթե կյանքը հեշտ լինի, երբ Հիսուսին հետևենք: Նա պարզեց, որ իր աշակերտները նե-ղություններ ու հարցեր պիտի ունենան: Սակայն միաժամանակ խոստացավ մեզ հետ լինել: Փորձությունները չպիտի սահմա-նեն կամ քանդեն Աստծո ծրագիրը, որովհետև Տեր Հիսուսի հա-րությունը արդեն մղել է մեզ հավիտենական հաղթանակի:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ Քո Խոսքի մեջ արձանգրված խոստումների համար, որ վստահեցնում եմ մեզ, որ Դու մեր կյանքի ընթացքը ծրագրել ես, հոգ չէ թե ինչ է պատահում: Ամեն:

Յիսուսը խոստանում է մեզ հետ լինել հորձանուտ ջրերի մեջ:

Մեր ապահով տեղը

Իմ առաջին աշխատանքը եղավ *fast-food*-ի սպասարկման վայրում: Մի շաբաթ օր երեկոյան մի երիտասարդ մի քիչ երկար մնաց ու մոտենալով ինձ՝ հարցրեց, թե ե՞րբ գործից պիտի արձակվեմ այդ երեկո: Նրա հարցը ինձ անհանգստացրեց: Մի ժամ հետո տապակված կարտոֆիլի և հետո զովացուցիչ ըմպելիքի պատվեր տվեց, որպեսզի ճաշարանի պատասխանատուն իրեն դուրս չհանի: Թեև շատ հեռու չէի բնակվում, սակայն վախեցա քայլելով տուն վերադառնալ մութ ճանապարհներով ու ավազոտ դաշտով: Վերջապես կեսգիշերին գրասենյակ մտա և հեռախոսով զանգեցի:

Հեռախոսին պատասխանողը՝ հայրս, առանց մի րոպե կորցնելու ելավ իր տաքուկ անկողնուց և հինգ րոպե անց հասավ ինձ տուն տանելու:

Վստահությունը, թե հայրս շուտով պիտի գար ինձ տուն տանելու այդ երեկո, ինձ հիշեցնում է 91-րդ Սաղմոսի մեջ մեր կարգացած վստահությունը: Երկնքում եղող մեր Հայրը միշտ մեզ հետ է՝ մեզ հոգալու և պաշտպանելու համար, երբ մենք չփոթված ենք ու վախենում ենք: Նա հայտարարում է. «Ինձ ձայն կտա՝ ու կլսեմ նրան» (Սաղմ. 90.15): Նա պարզապես տեղ է, ուր կարող ենք վազել: Նա մեր ապաստարանն է (Հմ. 1): Նա մեր ոտքն է, որին կարող ենք հենվել որպես մեր ապավեն (Հմ. 2)

Վախի, վտանգի ու անորոշության ժամանակ մենք կարող ենք Աստծո խոստումին վստահել: Երբ Իրեն կանչենք, պիտի լսի ու մեզ հետ պիտի լինի մեր նեղությունների մեջ (Հմ. 14-15): Աստված մեր ապահով տեղն է:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ իմ վեճն ու ապահով տեղն ես:

Ապրող Աստված միշտ մեր ապաստարանը պիտի լինի:

Կարդա՛
Ծննդոց 90

Տիրոջը կասի. «Դու ես ինձ ընդունողը, ապավեն իմ Աստված, որի վրայ եմ դրել իմ հույսը: ԾՆՆԳ. 90.2

Օրհնութիւն՝ թնջուկների մեջ

Շատ եմ մտածում ու ասում, թե «Ես ինքս ինձ այս դժվար կացութեան մեջ դրի, հետևաբար լավ պիտի լինի, որ սրանից դուրս գամ»: Թեև Աստծո շնորհին հավատում եմ, սակայն դեռ երբեմն վարվում եմ այնպես, կարծես թե Իր օգնությունը միայն տրամադրելի է, եթե արժանի եմ:

Աստծո առաջին հանդիպումը Հակոբի հետ գեղեցիկ օրինակ է՝ ցույց տալու, թե ճիշտ չէ այս միտքը: Հակոբը իր ամբողջ կյանքի ընթացքում փորձեց փոխել իր ճակատագիրը: Իր ընտանիքի երկրորդ արու զավակը լինելով՝ զրկված էր անդրանիկություն հայրական օրհնությունից, որը հաջողություն ու բարգավաճում ունենալու հավաստումն էր: Ուստի Հակոբը որոշեց ամեն բան փորձել՝ հոր օրհնությունը ստանալու: Վերջապես հաջողեց հոր օրհնությունը

Կարդա՛
Ծննդոց 28. 10-22

...Ու, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը: Փիլիպ. 1. 6

ստանալ խաբեութեամբ, որը պահված էր իր եղբոր՝ Եսավի համար (Ծն. 27.19-29): Սակայն Հակոբի այս արարքի համար տրված մեծ գինը խզված ընտանիքը եղավ, ինչին որպես հետևանք՝ նա հարկադրվեց փախչել իր ամենհի եղբորից (Հմ. 41-43): Սակայն ճիշտ այդտեղ էր, որ Հակոբը հանդիպեց Աստծուն՝ իր ետևում թողնելով խաբեությունները: Աստված ցույց տվեց նրան, թե օրհնություն ստանալու համար կարիք չունենի դիմելու մոլեգին ծրագրերի, որովհետև նա արդեն օրհնված էր: Իր համար եղած նպատակը շատ ավելի մեծ էր, քան բոլոր նյութական բարգավաճումները (Հմ. 14), որոնք Աստծո ապահով սուրբ ձեռքերի մեջ են, այն Աստծու, որ բնավ իրեն չպիտի թողնի (Հմ. 15): Հոգ չէ թե քանի՜ ափսոսանք ենք մեզ հետ կրում, կամ թե ինչքան էլ Աստված մեզնից հեռու թվա, նա դեռ այնտեղ է. քնքշություն մեզ առաջնորդում է դեպի Իր օրհնությունները: **Աղոթք** - Տե՛ր, հաճախ մենք մեզ թակարդված ենք գտնում մեր գործած հանցանքներով՝ խորհելով, որ մեզ համար հույս չկա: Հիշեցրու մեզ, թե Դու երբեք չես մոռանում մեզ համար նախատեսած Քո ծրագրերը: Ամեն:

Աստված բնավ չի մոռանում մեզ համար Իր սերն ու նպատակը:

Ապականված դատողություն

Շուտ եմ դատում նրանց, որոնք քայլելու ժամանակ իրենց բըջջային հեռախոսներից են օգտվում, ասելով. «Ինչպե՞ս են նրանք այդքան անփուլթ մեքենաների նկատմամբ, որոնք կարող են խփել: Չե՞ն մտածում իրենց ապահովության մասին»: Սակայն մի օր, երբ անցնում էի նրբանցքի մուտքի առջևով, այնքան խորասուզված էի հեռախոսային նամակի մեջ, որ չնկատեցի ձախ կողմից եկող մեքենան: Սակայն բարեբախտաբար վարորդը տեսնելով ինձ հանկարծակի կանգ առավ: Ես ամոթով մնացի: Այդ պահին ինքնարդարացնող իմ բոլոր մատնանշումները ետ եկան ինձ: Ես ուրիշներին դատել էի ու հիմա նույն բանն էի անում:

Իմ կեղծավորությունը ճիշտ այն է, ինչին ակնարկեց Հիսուսը Լեռան Քարոզի մեջ, երբ ասաց. «Կեղծավոր, նախ քո աչքից գերանը հանի՛ր, հետո կտեսնես, թե ինչպես եղբորդ աչքից շյուղը հանես» (Մատթ. 7.5): Ես մեծ «գերան» ունեի՝ մի ծանրություն, որով ուրիշներին դատեցի իմ ապականյալ դատողությունով: Հիսուսը նաև ասաց. «Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք» (7.2): Վերհիշելով այդ օրը հանկարծ կանգ առնելուց հետո վարորդի անախորժ նայվածքը, երբ ես նրա մեքենայի առջևով քայլեցի, հիշում եմ իմ անախորժ նայվածքները նրանց, որոնք իրենց բըջջային հեռախոսների մեջ են քայլելու ժամանակ:

Մեզնից ոչ մեկը կատարյալ չէ: Սակայն երբեմն մոռանում ենք դա ուրիշներին դատելու մեր փութաջանություն մեջ: Բոլորս էլ Աստծո շնորհին ենք կարոտ:

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմ օգնիր ինձ, որ շտապեմ սփոփել ու քաջալերել և դանդաղեմ ուրիշներին դատելիս: Ամեն:

Դանդաղիր ուրիշներին դատելիս:

Կարդա՛
Մատթեոս 7. 1-6

Մի՛ դատեք, որ
չդատվեք:
Մատթ. 7.1

Յուրաքանչյուր պահ կարևոր է

Երբ Ադային հանդիպեցի, արդեն նրա բոլոր բարեկամներն էլ ու ընտանիքի անդամները մահացել էին, ու ինքն ապրում էր մի ծերանոցում: Ադան ինձ ասաց. «Տեսնե՛լ բարեկամների անցնել գնալը ու քեզ մենակ թողնելը ծերության ամենից դժվար մասն է»: Մի օր հարցրեցի նրան, թե ի՛նչն է իրեն հետաքրքրում, և թե ինչպե՛ս է իր ժամանակն անցկացնում: Նա պատասխանեց Պողոս առաքյալից մի համար բերելով. «Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլ. 1.21): Ապա ասաց. «Քանի դեռ ապրում եմ, գործ ունեմ կատարելիք: Լավ զգացած օրերիս այստեղի տարեցյակների հետ եմ խոսում Հիսուսի մասին: Իսկ դժվար օրերին աղոթում եմ»:

**Կարդա՛ր
Փիլիպ. 1.12-24**

Որովհետև ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ:
Փիլիպ. 1.21

Իմաստալից կերպով Պողոսը բանտից գրեց Փիլիպպեցիներին ու հայտնեց մի ճշմարտություն, որ Քրիստոնյաները հասկանում են, երբ ընդունում են իրենց մահացու լինելը: Թեև երկինքը կարող է շատ հրապուրիչ ու հրավիրող լինել, երկրի վրա մեր ունեցած ժամանակը կարևոր է Աստծո համար:

Պողոսի նման Ադան անդրադարձավ, թե իր յուրաքանչյուր շնչի հետ առիթ կա ծառայելու ու Աստծուն փառավորելու: Ուստի իր օրերն անցկացրեց ուրիշներին սիրելով ու Փրկչին ներկայացնելով նրանց: Խավարագույն ժամերին իսկ Քրիստոնյաները կարող են Աստծո ընկերակցության մնայուն ուրախության խոստումին կառչել: Ու մինչ շարունակում ենք մեր կյանքը, իր հետ մեր ունեցած հարաբերության հաճույքն ենք ունենում: Նա մեր բոլոր պահերը լցնում է իմաստալից կերպով:

Աղոթք - Տե՛ր, տո՛ւր ինձ ուժ Քեզ ծառայելու իմ յուրաքանչյուր շնչի հետ, որպեսզի կյանքիս մնացյալ պահերը Քո Թագավորության համար կարևոր լինեն: Ամեն:

**Երբ Տերը գա մեզ տուն կանչելու, թող մեզ
ծառայության մեջ գտնի:**

Պատմելու ժամանակ

Օ Գինեսը մեջբերում է «Արևմուտքի ժողովուրդները ժամացույցներ ունեն, աֆրիկացիները՝ ժամանակ» աֆրիկյան առակը իր «Անկարելի ժողովուրդ» խորագրով գրքում: Այս խոսքերը կարդալուց հետո սկսեցի մտածել այն ժամանակների մասին, երբ ինձ տրված խնդրանքներին պատասխանում էի՝ ասելով. «Ժամանակ չունեմ»: Մտածեցի շուտով պատահելիք բռնի բաների մասին, և թե ինչպես են ժամկետներն ու ժամանակացույցներն իշխում կյանքիս վրա:

89-րդ Սաղմոսի մեջ Մովսեսը աղոթեց. «Այսպես, ինձ ցո՛ւյց տուր քո աջը, և սրտով խոնարհներին՝ քո իմաստությունը» (Հմ. 12): Եվ Պողոսը գրեց. «Արդ նայեցե՛ք, թե ինչպե՛ս զգուշու՞թյամբ վարվեք, ոչ

թե անխելքների պես, այլ իմաստունների պես: Ժամանակը գնահատեցե՛ք, որովհետև օրերը չար են» (Եփ. 5.15-16): Ես հավատում եմ, որ Պողոսը և Մովսեսը պիտի համաձայնեն, թե մեր ժամանակը իմաստուն կերպով գործածելը պարզապես ժամացույցին նայելը չէ: Կարող է այնպես պատահել, որ հանգամանքները մեզ ստիպեն, որ խիտ ժամանակացույց ունենանք կամ թույլ չտանք, որ մեր ունեցած ժամանակից շատ մաս տրամադրենք որևէ մեկին:

Մենք ունենք համառոտ մի պահ Քրիստոսի համար՝ տարբերություն արձանագրելու մեր աշխարհի մեջ, ու կարիք ունենք այդ առիթը իր առավելագույնին հասցնելու: Դա կարող է նշանակել անտեսել մեր ժամացույցները ու մեր օրատետրերը որոշ ժամանակ, մինչ ցույց ենք տալիս Քրիստոսի համբերատար սերը նրանց, որոնց դնում է մեր կյանքերի մեջ: Մինչ ապրում ենք հավիտենական Քրիստոսի ուժի ու շնորհի մեջ, մեր ժամանակը ընդհատենք հավիտենականության համար:

Աղոթք - Հայր, մեզ ժամանակ ես տվել՝ կատարելու այն, ինչ որ մեզ ես հանձնել անելու: Թող մեր ժամանակը այնպես գործածենք, որ Քեզ պատիվ բերի: Ամեն:

Ժամանակի տնօրինումը ժամացույցին նայելը չէ՛, այլ մեր ունեցածը լավագույն կերպով գործածելը:

Կարդա՛
Սաղմոս 89.9-17

Ժամանակը գնահատեցե՛ք, որովհետև օրերը չար են:
Եփես. 5.16

Հիսուսի հետ հաղորդակցություն

Բնավ չպիտի մոռանամ Բիլի Գրեհեմի կողքին մի ընթրիքի ժամանակ նստելու առիթն ու առանձնաշնորհումը: Հակառակ այդ պատիվն ունենալուս՝ միաժամանակ ջղազրգիռ էի, թե ինչի մասին պիտի պատշաճ լիներ խոսելը: Մտածեցի, թե հետաքրքիր պիտի լիներ սկսել մեր խոսակցությունը՝ հարցնելով, թե ինչն է ամենից սիրելի ու հատկանշական եղել իր համար իր երկար տարիների ծառայության ընթացքում: Ու ապա սկսեցի առաջարկել իմ կարելի նկատած անպատշաճ պատասխանները: Նախագահներ, թագավորներ և թագուհիներ ճանաչե՞լն էր, թե՞ Ավետարանը քարոզել միլիոնավոր մարդկանց աշխարհի վրա: Մինչև կավարտեի իմ առաջարկների շարքը, Վեր. Գրեհեմը կանգնեցրեց ինձ ու առանց վարանումի ասաց. «Հիսուսի հետ իմ ունեցած հարաբերությունը հատկանշական է եղել: Իր ներկայությունը զգալ, իր իմաստությունը քաղել ու իր առաջնորդությունը վայելել: Սրանք են եղել իմ մեծագույն ուրախությունները»: Ես տեղում հասկացա, որ իմ առջև նոր մարտահրավերի դատապարտվածությունն էր: Դատապարտված էի, որովհետև վստահ չէի, թե իր պատասխանը իմ պատասխանը պիտի լիներ, և մարտահրավեր էի ստացել, որովհետև այդպես էի ակնկալել:

Պողոսի մտքում եղածն էլ այս էր, երբ նա հաշվի առավ, թե իր արձանագրած մեծագույն հաջողությունները ոչինչ էին բաղդատած «Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտություն» հետ (Փիլ. 3:8): Հիշիր, թե կյանքը ինչքա՞ն հարուստ պիտի լինի, եթե Հիսուսի ու մեր հաղորդակցությունը մեր գերագույն փափագը լինի:

Աղոթք - Տե՛ր, ներիր, որ հետապնդում եմ այնպիսի բաներ, որոնք ոչինչ են՝ բաղդատած Հիսուսի հետ իմ ունեցած հաղորդակցության հետ: Շնորհակալ եմ, որ Դու պատրաստ ես իմ կյանքը Քո ներկայությամբ ու զորությամբ հարստացնել: Ամեն: **Հավատարիմ մնալու համար ուր Աստված քեզ դրել է, առաջին տեղը Քրիստոսին տուր քո սրտի մեջ:**

Կարդա՛ր Փիլիպ. 3.7-14

Եվ հենց ամեն ինչ էլ վճաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար: Փիլիպ. 3.8

Պատկանելություն

Շաբաթ երեկոների իմ սովորությունն համաձայն՝ մինչև ուշ դրսում էի լինում: Հազիվ քսան տարեկան՝ Աստծուց հեռու կյանքով էի ապրում: Հաջորդ օրը հանկարծ մղում ունեցա հորս հովված եկեղեցին գնալու: Հնացած, մաշած և գույնը դեղին ջինսից տաբատս ու կարճ թևերով շապիկ հագա ու գնացի: Չեմ հիշում հորս տված խորհուրդը, սակայն չեմ կարող մոռանալ, թե որքա՞ն մեծ հրճվանք ապրեց ինձ այնտեղ տեսնելով: Բազուկները դնելով ուսերիս՝ ինձ ներկայացրեց և հալարտորեն ասաց. «Սա իմ որդին է»: Նրա հրճվանքն ու ուրախությունը Աստծո սիրո ցուցումը եղան ինձ համար, որ մինչև օրս ինձ մեծապես տալավորել է: Աստծո պատկերը, որպես սիրող Հայր, երևում է ամբողջ Աստվածաշնչի մեջ: Եսայի 44-ի մեջ մարգարեն ազդարարությունների շարքը ընդհատում է՝ հայտարարելու Աստծո ընտանեկան սերը: Նա ասում է. «Իսրայել, ում ընտրել եմ: ...Իմ հոգին պիտի դնեմ քո զավակի վրա և իմ օրհնանքները՝ քո որդիների վրա» (Հմ. 2-3): Եսային նշեց, թե այդ ժառանգորդներին տված պատասխանը ինչպես պիտի ցույց տա ընտանեկան պարծանքը: «Մեկը պիտի ասի՝ Աստծուն եմ ես, իսկ մյուսը գիր պիտի գրի իր ձեռքով, թե՛ ես Աստծուն եմ պատկանում» (Հմ. 5): Կամակոր Իսրայելը Աստծո սեփականությունը եղող ժողովուրդն էր, ճիշտ այնպես, ինչպես ես եմ պատկանում ինձ որդեգրող հորս: Չկա մի բան, որ ես կարողանամ անել, որ կորցնեմ իմ հանդեպ իր ունեցած սերը: Նա հպանցիկ մի օրինակ ցույց տվեց մեր Երկնավոր Հոր սիրուց:

Աղոթք - Երկնավոր Հայր, մենք բոլորս գալիս ենք ընտանիքներից, որոնք մի ձևով խզված հարաբերություններ ունեն: Շնորհակալ ենք, որ մեզ սիրում ես՝ հակառակ մեր խզված հարաբերություններին, և ցույց ես տալիս, թե ինչպիսին է ճշմարիտ սերը: Ամեն:

Աստծո սերը մեր հանդեպ առաջարկում է մեզ պատկանելության և ինքնության մեր ցանկացած զգացումը:

Կարդա՛ Եսայի 44. 1-5

Այսպես է ասում Տեր Աստված, որ արարեց քեզ, ստեղծեց քեզ որովայնից, և տակավին օգնություն պիտի գտնես. Մի՛ վախեցիր, ժառանգ իմ...: Ես. 44.2

Բարեկամի մխիթարությունը

Կարդացի մի մոր մասին, որ զարմացած էր՝ տեսնելով իր աղջկան դպրոցից վերադարձին՝ մեջքից ցած ցեխաթաթախ: Աղջիկը բացատրեց, թե իր ընկերուհիներից մեկը սահել ընկել էր տիղմի մեջ: Մինչ մի դասընկերուհի վազեց օգնելու, փոքր աղջիկը ցավ զգաց իր ընկերուհու մենակ տիղմի մեջ նստած լինելու ու իր ցավեցրած ոտքը բռնելու համար: Ուստի ինքն էլ գնաց ու տիղմի մեջ նստեց իր ընկերուհու հետ, մինչև որ մի ուսուցչուհի եկավ օգնութեամբ: Երբ Հոբը իր գավակներին կորցնելու դառն փորձառությունը ունեցավ, ու չարչարալից պալարներ ելան նրա մարմնի վրա, նրա ցավերը սաստկացան: Աստվածաշունչը մեզ ասում է, թե նրա երեք բարեկամները ուզեցին նրան մխիթարել: Երբ տեսան Հոբին, «բարձրադաղակ լաց եղան. յուրաքանչյուրն իր պատմուճանը պատառոտեց. երկինք նայելով՝ հող ցանեցին գլխներին: Յոթն օր ու յոթը գիշեր նստեցին նրա շուրջը. նրանցից ոչ ոք մի բան չխոսեց հետը, որովհետև տեսնում էին նրան հասած սաստիկ մեծ հարվածները» (Հոբ 2.12-13):

Կարդա՛ր Յոբ 2. 7-13

Նրանցից ոչ ոք մի բան չխոսեց հետը, որովհետև տեսնում էին նրան հասած սաստիկ մեծ հարվածները: Յոբ. 2.13

Հոբի ընկերները սկզբում զարմանալի հասկացողություն ու կարեկցություն ցույց տվեցին: Նրանք զգացին, թե Հոբը պարզապես մեկի կարիքն ուներ՝ նստելու ու ողբալու իր հետ: Երեք բարեկամները պիտի սկսեն խոսել գրքի հաջորդ գլուխների մեջ: Հեգնանքն այն է, թե երբ բարեկամները սկսեցին խոսել, սկսեցին տկար ու խղճալի խրատներ տալ նրան (16.1-4):

Հաճախ լավագույն բանը, որ կարող ենք անել, երբ մխիթարում ենք ցավի մեջ եղող բարեկամին, նստելն ու ցավակցելն է:

Աղոթք - Երկնավոր Հայր, օգնիր, որ լավ բարեկամ լինեմ նրանց, որոնք ցավի մեջ են: Շնորհակալ եմ, որ խոստանում ես մոտ լինել ցավի մեջ եղողներին ու Քո Սուրբ Հոգով նրանց մխիթարել: Ամեն:

Բարեկամի ներկայությունը տառապանքի ու ցավի մեջ լավ մխիթարություն է:

ճաշի աղոթք արտասանել

Տարիներ շարունակ հաճույքով կարդացի հռչակավոր անգլիկացի գրող Գ. Չեսթերթլենի գրությունները: Նրա զվարթամտությունը և հմտությունը հաճախ պատճառ են դարձել, որ մի քիչ ծիծաղեմ ու ապա մի պահ լուրջ մտածեմ: Օրինակ՝ նա գրում է. «Ճաշից առաջ աղոթում ես: Շատ լավ ես անում: Սակայն ես աղոթում եմ թատերախաղից, օպերայից, համերգից առաջ: Աղոթում եմ գիրք բանալուց առաջ: Աղոթում եմ նկարելուց, ներկելուց, լողալուց, քայլելուց և խաղալուց առաջ: Եվ աղոթում եմ գրիչս մեկանի մեջ թաթախելուց առաջ»: Լավ բան է աղոթելը մեզ համար ամեն ճաշից առաջ: Սակայն այնտեղ չպիտի մնանք: Պողոս առաքյալը տեսավ ամեն գործունեություն, ամեն ջանք, առիթներ, որոնց համար շնորհակալություն պիտի հայտնենք Աստծուն, և դա պիտի անենք իր փառքի համար: «Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք՝ նրա միջոցով գոհություն տալով Աստծուն և Հորը» (Կող. 3.17): Զվարճանքը, զբոսանքը, զբաղմունքը, արհեստը և կրթությունը միջոցներ են, որոնց միջոցով մենք կարող ենք Տիրուջը պատվել ու մեր երախտագիտությունը հայտնել:

Պողոսը նաև քաջալերում է Կողոսսայի հավատացյալներին՝ ասելով. «Եվ Աստծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և կանչվեցիք մեկ մարմնով, ու գոհացո՞ղ եղեք» (Հմ. 15):

Լավագույն տեղը «աղոթք արտասանելու»՝ ցանկացած տեղ և ցանկացած ժամանակ է, երբ մենք ուզում ենք շնորհակալություն հայտնել Տիրուջը ու պատվել Նրան:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմ հավիտենական կյանքի պարգևի համար: Թող որ մենք ընդունենք և պատվենք Քեզ այս օրվա ամբողջ տևողությամբ: Ամեն:

Մեր բոլոր արածներով եկեք շնորհակալություն հայտնենք ու պատվենք Աստծուն:

**Կարդա՛ր
Կող. 3.12-17**

Եվ ամենը, ինչ էլ որ անեք, խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունով արեք՝ նրա միջոցով գոհություն տալով Աստծուն և Հորը:
Կող. 3.17

Ազատ արձակված

Երբ պատանի էի, գյուղում հավերի մասին մի բան ինձ հմայում էր: Երբ մի հավ բռնելով մի պահ ցած էի դնում ու հետո կամաց ձեռքերս հանում էի վրայից՝ մտածելով, թե դեռ նրան բռնած եմ, անշարժ էր մնում՝ կարծելով, թե թակարդված էր, թեև կարող էր ելնել ու գնալ:

Երբ հավատանք Տեր Հիսուսին, Նա Իր շնորհով մեզ Սատանայի ճիրաններից ու մեր մեղքերից կազատի: Այսուամենայնիվ, որովհետև ժամանակ է պահանջվում՝ բարեփոխելու մեր մեղավոր սովորություններն ու վարվելակերպը, Սատանան կարող է մեզ թակարդված լինելու զգացումը տալ: Սակայն Աստծո Սուրբ Հոգին մեզ ազատ է արձակում: Պողոսը հռոմեացիներին ասաց. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար, որոնք մարմնավոր կերպով չեն վարվում, այլ հոգևոր: Որովհետև Հիսուս Քրիստոսի մեջ կյանքի հոգու օրենքն ինձ ազատեց մեղքի ու մահվան օրենքից» (Հռոմ. 8.1-2):

Աստվածաշնչի մեր ընթերցումի, աղոթքի և Սուրբ Հոգու գործընթացի միջոցով Աստված գործում է մեր մեջ՝ մեզ մաքրելու և օգնելու, որ Իր համար ապրենք: Աստվածաշունչը մեզ քաջալերում է՝ վստահ լինելու Հիսուսի հետ մեր քայլվածքում, առանց զգալու, թե մենք ազատ չենք:

Տեր Հիսուսը ասաց. «Ուրեմն եթե Որդին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8.36):

Աղոթք - Տեր, ներիր, որ երբեմն իմ անցյալի պահվածքն եմ ունենում՝ մոռանալով, որ Դու մեղքերս լվացիր: Ծնորհակալ եմ, որ բեռս վերցնում ես ու ինձ ազատ արձակում: Ամեն:

Շղթաներս ընկան, սիրտս ազատ եղավ, ոտքի ելա, առաջ գնացի ու Քեզ հետևեցի: Չարիզ Ուեսլի

Կարդա՛
Յոռմ. 8. 1-2, 15-17

Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար: Յոռմ. 8.1

Փակ չէ՛

Ուղեղային անդամալուծությամբ ծնված մի երեխա անկարող էր խոսել կամ հաղորդակցվել: Սակայն նրա մայրը՝ Շանթալ Բայրոնը, երբեք տեղի չտվեց, ու երբ մանչուկը տասը տարեկան էր, մայրը կարողացավ մի ձև գտնել նրա հետ աչքերի միջոցով ու գրերի ցուցատախտակով հաղորդակցվելու: Այս գյուտից հետո նա ասաց. «Նրա փականքը բացվեց, ու մենք կարողացանք իրեն հարցնել ցանկացած բան»: Ներկայումս Ջոնաթանը կարդում է ու նույնիսկ բանաստեղծություն գրում իր աչքերի միջոցով: Երբ հարցրին, թե ինչպես է «խոսելը» իր ընտանիքի ու բարեկամների հետ, նա ասաց. «Աքանջելի է նրանց ասել՝ ձեզ սիրում եմ»:

Ջոնաթանի պատմությունը իրապես հուզիչ է ու ինձ ուղղում է մտածելու, թե ինչպես է Աստված մեր կապերը քանդելով մեզ մեղքերի բանտից ազատում: Ինչպես Պողոս առաքյալը գրեց Կողոսայի մեջ եղող Քրիստոնյաներին՝ ասելով, թե մի ժամանակ մենք «թշնամի էինք մտքով չար գործերում» (Կող. 1.21), մեր չար վարմունքը մեզ իր թշնամիներն էր դարձնում, սակայն Քրիստոսի մահով մենք ներկայացված ենք Աստծուն որպես «սուրբ իր առաջ» (Հմ. 22): Հիմա մենք կարող ենք «ամեն բանում Նրան հաճելի լինել» և պտուղ տալով անել Աստծո գիտություն մեջ ու իր ուժով զորանալ (Հմ. 10-11):

Մենք կարող ենք մեր ազատ արձակած ձայներով Աստծուն փառավորել ու բաժանել իր բարի լուրը, թե մենք այլևս կապված չենք մեղավոր կյանքի: Մինչ շարունակում ենք անել հավատքի մեջ, մենք կարող ենք ամուր բռնել մեր հույսը Քրիստոսի վրա:

Աղոթք - Տե՛ր, մեզ ազատ ես արձակել մեր անհավատության շղթաներից ու տվել ես մեզ բառեր՝ Քեզ փառավորելու համար: Թող որ այս ազատությունը ուրիշների հետ բաժանենք Քո փառքի համար: Ամեն:

Տերը մեզ ազատ է արձակում մեր մեղքի բանտից:

Կարդա՛ր Կող. 1. 1-23

Մի ժամանակ օտարացած ու թշնամի էիք մտքով...
 Հիմա իր մտեղեն մարմնի մեջ իր մահվամբ հաշտեցրեց: Կող. 1.21-22

Մատանին աղբանոցում

Քոլեջում ուսանելու օրերին մի առավոտ արթնանալով տեսա, թե սենեկակիցս՝ Քարոյը, խուճապի մեջ է: Հատուկ կնիք ունեցող նրա մատանին կորել էր: Ամեն տեղ փնտրեցինք: Հաջորդ առավոտ աղբանոցի մեջ սկսեցինք փնտրել, ու աղբի մի պարկ բանալով՝ ասացի. «Դու ամեն գնով ջանում ես մատանին գտնել»: «Ձեմ ուզում երկու հարյուր դոլարանոց մատանին կորցնել», - ասաց նա:

Քարոյի վճռականությունը ինձ հիշեցնում է երկնքի թագավորության մասին Հիսուսի պատմած առակը, որ «նման է արտի մեջ թաքցված գանձի, որ մի մարդ գտնելով թաքցրեց: Ուրախությունից գնում, իր ամբողջ ունեցած ծախում է և արտն առնում» (Մատթ. 13.44):

Որոշ բաներ գտնելու համար արժե ամեն ջանք թափել:

Աստվածաշնչի բոլոր մասերում Աստված խոստում է տալիս նրանց, որոնք Իրեն են փնտրում, ու պիտի գտնեն: Երկրորդ Օրինաց գրքում Նա բացատրում է Իսրայելի ժողովրդին, թե Իրեն պիտի գտնեն, երբ իրենց մեղքերից հրաժարվելով՝ ամբողջ սրտով Իրեն փնտրեն (4.28-29): Երկրորդ Մնացորդաց գրքում Ասա թագավորը քաջալերվեց նման խոստում լսելով (15.2): Ու Երեմիայի մարգարեությունն մեջ Աստված նույն խոստումն է տալիս աքսորվածներին սասելով, թե նրանց գերությունից ետ պիտի բերի (29.13-14):

Եթե Աստծուն փնտրենք, Իր Խոսքի, պաշտամունքի ու մեր ամենօրյա կյանքի մեջ Իրեն պիտի գտնենք: Ժամանակի ընթացքում շատ ավելի լավ պիտի ճանաչենք Իրեն: Դա ավելի լավ պիտի լինի, քան այն անուշ պահը, երբ Քարոյը դուրս հանեց իր մատանին աղբի պարկից:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ ամբողջ սրտով Քեզ փնտրեմ: Ամեն:

Աստծուն գտնելու համար անհրաժեշտ է նրան փնտրել:

Կարդա՛ր
Մատթեոս 13. 44-46

Խնդրեցե՛ք, և կտրվի ձեզ, փնտրեցե՛ք ու կգտնեք, դուռը բախեցե՛ք, ու ձեզ համար կբացվի:
Մատթ. 7.7

Սիրո պատկերներ

Զավակներիս հետ ամենօրյա նոր սովորություն ենք սկսել: Ամեն գիշեր անկողին մտնելիս գունավոր մատիտներ ենք հավաքում ու մոմ վառում: Խնդրում ենք Աստծուց, որ մեր ճամփան լուսավորի, մեր օրատետրերը հանելով՝ նկարում ենք կամ գրում երկու հարցի պատասխաններ. «Շ՞րբ ինչ-որ մեկին սեր ցույց տվեցի այսօր, ե՞րբ սիրելուց հրաժարվեցի»:

Մեր դրացիներին սիրելը կարևոր մասն է Քրիստոնեական կյանքի՝ «սկզբից» ի վեր (Բ Հովհ. 1.5): Հովհաննեսը դրա մասին գրում է իր երկրորդ նամակի մեջ՝ խնդրելով, որ իրար սիրեն՝ Աստծուն հնազանդվելով (Բ Հովհ. 1.5-6): Մերը Հովհաննեսի նախասիրած նյութերից մեկն է: Նա ասում է, թե իսկական սեր ցույց տալը լավ ձև է՝ իմանալու, թե մենք իրեն «ենք պատկանում», և ընդունելու, թե մենք Աստծո ներկայություն մեջ ենք ապրում (Ա Հովհ. 3.18-19): Երբ զավակներս ու ես մտածում ենք, տեսնում ենք, որ մեր կյանքերի մեջ սերը ձև է ստանում պարզ, սովորական գործերով. անձրևանոցը կիսելով, քաջալերելով մեկին, որ տխուր է, կամ էլ նախասիրած կերակուրը պատրաստելով: Այն պահերին, երբ մեր սերը ետ ենք վերցնում, գործնականապես նույնն է, երբ բամբասում ենք, մերժում բաժանել, և կամ միայն գոհացնում ենք մեր փափազը՝ առանց ուրիշների կարիքների մասին մտածելու:

Ամեն գիշեր ուշադրություն դարձնելն օգնում է, որ մենք ավելի զգաստ լինենք, ավելի ներդաշնակ այն բանի հետ, որ Հոգին է ցույց տալիս, մինչ մենք քայլում ենք մեր կյանքի մեջ: Հոգու օգնությամբ մենք սովորում ենք սիրով քայլել (Բ Հովհ. 1.6):

Աղոթք - Տե՛ր, թող միայն խոսքով չսիրենք, այլ գործերով ու ճշմարտությունով: Սովորեցրու մեզ հնազանդվել Քո սիրո կոչին: Ամեն

Ինչպե՞ս կարող եմ այսօր սեր ցույց տալ:

Կարդա՛
Բ Հովհ. 1. 1-6

...ոչ թե մի նոր պատվիրան եմ քեզ գրում, այլ այն, որ սկզբից ունեիմք...:
Բ Հովհ. 1.5

Աշխարհի լույսը

Արվեստի իմ նախասիրած գործերից մեկը կախված է Անգլիայի Օքսֆորդ քաղաքի Քեբլ Քոլեջի մատուռում: Անգլիացի նկարիչ Ուիլյամ Հոլման Հանթի նկարը՝ «Աշխարհի լույսը» խորագրով, պատկերում է Հիսուսին՝ ձեռքին մի լուսամփոփ բռնած ու դուռը բախելիս: Նկարի հետաքրքիր կողմերից մեկն այն է, որ դուռը բռնակ չունի: Երբ հարց է տրվում դուռը բանալու ձև չգտնելու մասին, Հանթը բացատրում է, թե ինքը ուզում էր ներկայացնել Հայտնություն գրքի պատկերը (Հայտ. 3.20):

«Ահա ես դուան առաջ կանգնած եմ ու բախում եմ. եթե մեկն իմ ձայնը լսի և դուռը բացի, նրա մոտ կմտնեմ...» (Հայտ. 3.20): Հովհաննես առաքյալի խոսքերն ու այս նկարը ներկայացնում են Հիսուսի հեղուկությունն ու ազնվությունը: Նա մեղմ կերպով մեր հոգիների դուռն է բախում Իր խաղաղության առաջարկով: Հիսուսը կանգնում է ու համբերությամբ սպասում, որ մենք պատասխան տանք: Նա դուռը չի բացում ու մեր կյանքերից ներս խուժում: Նա չի պարտադրում Իր կամքը մեզ: Ընդհակառակը՝ նա ամբողջ ժողովրդին առաջարկում է փրկության պարզեւր և մեզ առաջնորդելու համար՝ փրկության պարզեւր: Յուրաքանչյուրին, ով դուռ է բացում, Նա խոստանում է ներս մտնել: Չկան այլ պահանջներ կամ նախապայմաններ: Եթե լսես Հիսուսի ձայնը ու Նրա մեղմ բախելը քու հոգու դուռնը, քաջալերվիր, որ Նա համբերությամբ քեզ է սպասում և ներս պիտի մտնի, եթե Իրեն ընդունես:

Աղոթք - Տե՛ր շնորհակալ եմ փրկության պարզեւր և ներս մտնելու Քո խոստումի համար, երբ մենք դուռը բացենք: Խնդրում եմ օգնիր, որ կարողանամ պատասխան տալ այս պարզեւրն և դուռը բանալ Քեզ համար այսօր: Ամեն:

Հիսուսի համար դուռը բաց. Նա համբերությամբ քեզ է սպասում:

Կարդա՛ր Հայտն. 3. 14-22

Ահա ես դուան առաջ կանգնած եմ ու բախում եմ. եթե մեկն իմ ձայնը լսի և դուռը բացի, նրա մոտ կմտնեմ...

Հայտն. 3.20

Նյութերի ցանկ

Աղոթք	Ապր. 10, մայ. 3, 5, 30
Անարդարություն.....	Մայ. 3
Անձնական վարքագիծ.....	Մայ. 9, 25
Ապաշխարություն.....	Ապր. 20
Առանձնություն.....	Մայ. 26
Առատաձեռնություն.....	Ապր. 2
Աստվածաշունչը սովորել.....	Մայ. 5
Աստվածաշնչի հեղինակությունը.....	Ապր. 5
Աստվածաշնչի սերտողություն.....	Մայ. 25, հուն. 14
Աստծու հետ հաղորդակցվել	Հուն. 22, 28
Աստծու հոգածությունը...Ապր. 4,25,26, մայ.26, հուն. 3,16	
Աստծու սերը..Ապր. 6,18,22, մայ. 2,4,6,22, հուն. 9,12,15, 17,18,23	
Աստծուն սպասել.....	Ապր. 17, մայ. 1
Աստծուն վստահել.....	Ապր. 3,11,14,19,26, մայ. 10,11,19,24, հուն. 1, 11,14
Ավետարանչություն.....	Մայ. 23, հուն. 6
Բարեկամություն.....	Հուն. 24
Բավարարություն.....	Ապր. 23
Դրախտ.....	Մայ. 29
Եկեղեցու միություն.....	Մայ. 20
Ծառայել.....	Ապր. 12,28, մայ. 7, 27, 28, հուն. 6, 20
Ծերանալ.....	Հուն. 8
Կարեկցություն.....	Ապր. 6
Կյանքի պաշարներ.....	Ապր. 3, հուն, 3,16,17
Հալածանք.....	Ապր. 8, մայ. 19
Հարաբերություններ.....	Մայ. 9, հուն. 9
Հանգիստ.....	Հուն. 1
Հավատացյալների միություն.....	Ապր. 13
Հավիտենական կյանք.....	Մայ. 13
Հեղություն.....	Ապր. 2, 25, հուն. 13

Հիվանդութիւն դիմադրել.....	Ապր. 10
Հյուրասիրութիւն.....	Հուն. 10
Հնազանդութիւն.....	Ապր. 5, մայ. 8, 22
Հոգեկան այլափոխութիւն.....	Ապր. 28, մայ. 15
Հոգեւոր աճում.....	Հուն. 2, 26
Հոգեւոր նվերներ.....	Մայ. 7
Հոգու պտուղները.....	Հուն. 8
Հույս.....	Մայ. 29
Մահ.....	Մայ. 28
Մեղք.....	Ապր. 1, 20, 30, Հուն. 27
Մեղքերի թողութիւն.....	Ապր. 1, 20, 30
Մտահոգութիւն.....	Մայ. 24
Ներել ուրիշներին.....	Մայ. 9, 21
Շնորհակալութիւն.....	Մայ. 17, Հուն. 28
Ուրիշներին դատել.....	Հուն. 19
Պաշտամունք.....	Ապր. 7, մայ. 17, Հուն. 7
Սեր ուրիշների հանդեպ.....	Ապր. 9, մայ. 27, Հուն. 10, 29
Սխալ ուսուցմունք.....	Մայ. 14
Սուրբ Հոգի.....	Ապր. 7, մայ. 18, 26, 30, Հուն. 4
Ստեղծագործութիւն.....	Ապր. 22
Սրբագործութիւն.....	Հուն. 18
Վախ.....	Ապր. 17, մայ. 29
Տանջանք.....	Ապր. 11, 14, մայ. 10, 11, Հուն. 24
Ցեղապաշտութիւն.....	Մայ. 21
Փորձութիւն.....	Ապր. 29
Փրկութիւն.....	Ապր. 18, մայ. 31, Հուն. 5, 26, 27, 30
Քննադատութիւն.....	Հուն. 14
Քրիստոս՝ Մեսիա և Փրկիչ.....	Ապր. 1, 23, 30, Հուն. 5
Քրիստոսի Աստվածութիւն.....	Մայ. 4
Քրիստոնեական կյանքը և ուսուցումները.....	Ապր. 29
Քրիստոսի համար ապրել.....	Ապր. 7, 16, 21, մայ. 13, 16
Քրիստոսի մահը.....	Մայ. 31
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 21

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ
Ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am